

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԻԲ.00.01 – «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝
փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Լ. Հ. Հարությունյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը. տեսամեթոդաբանական վերլուծություն.....	12
1.1. «Բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթը. տեսական ակնարկ.....	12
1.2. Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ուսումնասիրման սոցիոլոգիական մոտեցումները.....	39
ԳԼՈՒԽ 2. Բնակչության սոցիալական պաշտպանության տիպանմուշների ձևավորումը և կերպափոխումները հետխորհրդային Հայաստանում.....	61
2.1 Բնակչության սոցիալական պաշտպանության խորհրդային համակարգի ժառանգությունը.....	61
2.2 Սոցիալական պաշտպանության «անցումային տիպանմուշի» կերպափոխումները Եվրոպական վերանայված սոցիալական խարտիային միանալուց հետո.....	72
2.3 Սոցիալական պաշտպանության տիպանմուշի կերպափոխումը՝ որպես սոցիալական ոլորտում իրականացվող արդի բարեփոխումների հետևանք.....	79
ԳԼՈՒԽ 3. ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորումը ավարտին հասցնելու ուղիները.....	87
3.1. ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանվածությունը. օբյեկտիվ ցուցանիշների և սուբյեկտիվ ընկալումների համադրում.....	87
3.2 ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգը. կառուցվածքագործառույթային վերլուծություն.....	96
3.3. ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման հնարավորություններն ու ուղիները.....	111
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	119
Օգտագործված գրականության ցանկ.....	129
Հավելված 1.....	148
Հավելված 2.....	150

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունն ու հրատապությունը: Սոցիալական պաշտպանության պարզագույն ձևերը գոյություն են ունեցել հասարակությունների զարգացման ամենավաղ փուլերում: Սակայն հասարակությունների զարգացման հետ մեկտեղ՝ սոցիալական պաշտպանության ապահովման գործում առավելապես կարևորվել է պետության դերը: Այսօր յուրաքանչյուր պետության բնակչության սոցիալական պաշտպանվածությունը անհնար է պատկերացնել առանց արդյունավետ գործառույթ սոցիալական պաշտպանության համակարգի, ինչը թույլ է տալիս կանխարգելել սոցիալական ռիսկերը, մեղմել կամ վերացնել դրանց հետևանքները:

Ատենախոսությունը նվիրված է հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացի սոցիոլոգիական վերլուծությանը՝ լրացնելու համար այդ ոլորտում տեսամեթոդաբանական և գործնական ասպեկտների ամբողջական սոցիոլոգիական պատկերի առկա բացը:

Հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորումը սկզբնական շրջանում տեղի է ունեցել տարերայնորեն, մեծ մասամբ հատվածային: Հայտի գրեթե բոլոր գաղափարախոսությունների՝ ազատական, երբեմն անգամ համընդանուր բարեկեցության, մասամբ նաև՝ նեոազատական և խորհրդային շրջանից ժառանգություն ստացած ու դեռևս կենսունակությունը պահպանող պատեռնալիստական բնույթի մոտեցումների նորովի՝ ազատականացման համատեքստում «փաթեթավորած» առանձին «պատառիկների» համաժամանակյա գոյության պայմաններում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը, ըստ էության, դեռևս չի ավարտվել: Այդ իսկ պատճառով հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրությունը, ինչպես նաև ներկա համակարգի ամբողջական ձևավորման և կայացման հնարավորությունների բացահայտումը սոցիոլոգիական ուսումնասիրության տեսակետից **արդիական** խնդիր է:

Հիմնահարցի գիտական մշակվածության աստիճանը: Բնակչության սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների ուսումնասիրությանը առաջինը անդրա-

դարձել են տնտեսագիտական տեսության՝ քաղաքատնտեսության դասական դպրոցի ներկայացուցիչները՝ Ա. Սմիթը, Դ. Ռիկարդոն, Թ. Մալթուսը և այլք¹: Այս մոտեցման շրջանակում սոցիալական պաշտպանությունը դիտվում էր որպես աջակցության տրամադրում աղքատներին, և բնակչության սոցիալական պաշտպանության հիմնախնդրի լուծումը չէր համարվում պետության իրավասությունը, պատասխանատվությունը դրվում էր կամ բնակչության, կամ էլ բարեգործների և նվիրատուների վրա:

Բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում պետության դերն ու մասնակցությունը սկսեց կարևորվել տնտեսագիտական տեսության նորդասական դպրոցի ներկայացուցիչների՝ Ա. Մարշալի, Ա. Պիգուի, Վ. Պարետոյի և այլոց աշխատություններում²: Վերջիններիս կարծիքով բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման տեսանկյունից կարևորվում էր հարուստների և աղքատների միջև հակասությունների հաղթահարումը:

Բնակչության սոցիալական պաշտպանության հիմնախնդիրը քննարկվում է նաև Զ. Քեյնսի³ և քեյնսյան դպրոցի ներկայացուցիչների կողմից, ովքեր գտնում էին, որ պետության կողմից իրականացվող քաղաքականությունը պետք է ուղղված լինի արտադրության, զբաղվածության, ինչպես նաև եկամուտների վերաբաշխման խնդիրների լուծմանը:

Ինստիտուցիոնալ ուղղվածության տնտեսագետների աշխատություններում (Թ. Վերլեն, Ու. Միտչել, Յ. Թիմբերգեն, Զ. Գելբրեյթ և այլք) պետության դերը բնակչության սոցիալական պաշտպանության գործում համարվում է շուկայի հնարավորությունների և բնակչության պահանջումների միջև առկա հակասությունների

¹ Տե՛ս *Смит А.* Исследование о природе и причинах богатства народов.– М.: Соцэкгиз, 1962; *Рикардо Д.* Начало политической экономии и налогового обложения/пер. с англ.; предисл. П. Ключкина/. М.: Эксмо, 2016; *Мальтус, Т. Р.* Опыт о законе народонаселения. – Петрозаводск: Петроком, 1993:

² Տե՛ս *Маршал А.* Принципы экономической науки / А. Маршал. – в 3-х т., т.3– М.: Прогресс, 1993; *Пигу А.* Экономическая теория благосостояния. В 2-х т., т. 1 /Пер. с англ.–М.: Прогресс, 1985; *Блауг М.* Экономическая теория благосостояния Парето // Экономическая мысль в ретроспективе = Economic Theory in Retrospect.–М.: Дело, 1994.

³ Տե՛ս *Кейнс Дж. М.* Общая теория занятости, процента и денег. Избранное/вступ. Статья Н.А. Макашевой/.–М.: Эксмо, 2008:

հաղթահարումը⁴:

Սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների գիտական մշակման գործում մեծ է արևմտյան հասարակական գիտության այնպիսի տեսաբանների ավանդը, ինչպիսիք են Ու. Բևերիջը, Ռ. Թիթմուսը, Թ. Մարշալը⁵: Վերջիններիս աշխատություններում ներկայացված են պետության սոցիալական քաղաքականության ժամանակակից ըմբռնումը, սոցիալական պաշտպանության ձևերը, սկզբունքները:

Խորհրդային սոցիալական գիտությունը խուսափում էր «սոցիալական պաշտպանություն» եզրույթի կիրարկումից: Խորհրդային Հայաստանում ընդհանուր սոցիալական ապահովության գաղափարն ավելի առաջանահերթ էր համարվում, քան սոցիալական պաշտպանության գաղափարը: Հատկանշական է, որ երկրում սոցիալական պաշտպանության հիմնախնդրի նկատմամբ գիտական հետաքրքրությունը գրեթե բացակայում էր: Բայց մշակվել էր սոցիալական պաշտպանության համակարգի առանձին տարրերի մասին տեսություն: Ընդհանուր առմամբ խորհրդային ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության տեսությունը ձևավորված չէր:

Հետխորհրդային շրջանի ռուսաստանյան գիտական գրականության մեջ այս տեսությունը սկսեց զարգացվել ռուս գիտնականներ Վ. Յուդինի, Տ. Վիկուլինայի, Ա. Պաշկովի, Մ. Լեպիխովի, Վ. Անտրոպովի և այլոց կողմից⁶:

⁴ St' u *Веблен Т.* Теория праздного класса /Пер. с англ., вступит., статья С. Т. Сорокиной. Общая ред. В. В. Мотылева. М.: Прогресс, 1984; *Митчелл У.* Экономические циклы: Проблема и ее постановка. – М. – Л.: Госиздат, 1930; *Tinbergen, J.* Economic Policy: Principle and Design. Amsterdam: North Holland Publishing Company, 1967; *Гэлбрейт Дж. К.* Новое индустриальное общество. Избранное. М.: Эксмо, 2008:

⁵ St' u *Social Insurance and allied services. Report by Sir William Beveridge.* London, 1942, Bulletin of the World Health Organization, 2000, 78 (6); *Titmuss, R.M.* Welfare State and Welfare Society, the Philosophy of Welfare, L. Alien and Unwin, 1987; *Marshall T.H.* Citizenship and social class, University Press, 1950; *Marshall T.H., Rees A. M., T.H. Marshall's social policy in the twentieth century,* Hutchinson, Political Science, 1985:

⁶ St' u *Юдин В.П.* Социальная защита: понятие, сущность, границы. – Казань: Казан. гос. технол. ун-т, 1995; *Викулина Т.Д.* Денежные доходы населения: особенности формирования в переходной экономике. СПб.:Изд-во С.-Петербур. гос. ун-та экономики и финансов, 1998; *Пашков А.В.* Европейская социальная политика : Монография / Пашков А. В. – Киев: Глобус, 1999; *Ленихов М. И.* Право и социальная защита населения (социальное право). Нормативные правовые акты приведены по состоянию на 15 апреля 2000г.– М. : Былина, 2000; *Антропов В.В.* Социальная защита в странах Европейского союза. История, организация, финансирование, проблемы.– М.: ЗАО «Издательство «Экономика», 2006:

Հետխորհրդային շրջանի ռուսական գիտական գրականության մեջ հանդիպող «բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթի սահմանումները կարելի է պայմանականորեն խմբավորել երեք խմբում: Առաջին խմբում ներառված սահմանումներում սոցիալական պաշտպանությունը դիտվում է որպես գիտական եզրույթ: Երկրորդ խմբում ներառված սահմանումներում շեշտադրվում է սոցիալական պաշտպանության կիրառական կողմը: Իսկ երրորդ խմբում ներառված սահմանումները ներառում են նախորդ երկու խմբերում ընդգրկված սահմանումները միաժամանակ:

Այսպիսով, «սոցիալական պաշտպանություն» եզրույթը առ այսօր չունի սպառիչ և հստակ մեկնաբանություն: Ավելին, մինչ օրս հստակեցված չէ «սոցիալական պաշտպանություն» եզրույթի, ինչպես նաև դրա հասկացությանին ապարատում ներառված հիմնական հասկացությունների բովանդակությունը՝ սոցիալական պաշտպանության համակարգի կառուցվածքային հիմնական տարրերի և դրանց գործառույթների համատեքստում:

Հատկանշական է, որ հետխորհրդային Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգի առանձին ենթաոլորտներն են դարձել սոցիոլոգիական վերլուծության առարկա: Մասնավորապես, Հայաստանում երեխաների սոցիալական պաշտպանության համակարգի զարգացման գործընթացի ուսումնասիրմանն է նվիրված Մ. Անտոնյանի աշխատությունը⁷, իսկ Ա. Բաբայանի աշխատությունում ներկայացված են Հայաստանի սոցիալական ապահովության ռազմավարության սոցիոլոգիական վերլուծության արդյունքները⁸: Ս. Աստվածատուրովը անդրադարձել է անցումային շրջանի Հայաստանի սոցիալական քաղաքականության համակարգի սոցիոլոգիական վերլուծությանը⁹:

⁷Տե՛ս Անտոնյան Մ., Երեխաների սոցիալական պաշտպանության համակարգի զարգացումը Հայաստանում. պատմասոցիոլոգիական տեսանկյուն, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2004թ.:

⁸Տե՛ս Բաբայան Ա., Հայաստանի սոցիալական ապահովության ռազմավարության սոցիոլոգիական վերլուծություն, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2001թ.:

⁹Տե՛ս *Аствацатуров С. В.* О специфике социологического познания социальной политики. Научные работы. Общественные науки. - Прак 1-Лингва, 2002, ст. 41-56; *Аствацатуров С. В.* Реальность социального риска или риск социальной реальности // «Изменяющееся общество», N 1, 2, Ереван, 1998, ст. 2-8; *Аствацатуров С. В.* Социальная защита в системе экономических и социальных координат, «Изменяющееся общество», N 1, 2, Ереван, 1997, ст. 41-45:

Հարկ է նկատել, որ հետխորհրդային Հայաստանում առ այսօր իրականացված չէ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման, հետագա զարգացումների հետ կապված գործընթացների սոցիոլոգիական ուսումնասիրություն: Ըստ այդմ, ուսումնասիրված չեն սոցիալական պաշտպանության գործող մեխանիզմների առանձնահատկություններն ու դրանք գործարկող սուբյեկտների գործառույթները, ինչպես նաև ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորմանը խոչընդոտող հիմնախնդիրները: Նման ուսումնասիրությունը հնարավորություն կտա ուրվագծելու ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման և կայացման հնարավորությունները:

Ատենախոսության նպատակն է վերլուծել հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը, վերջինիս կառուցվածքային հիմնական տարրերի գործառույթները, սոցիալական պաշտպանության իրականացման հիմնական մեխանիզմները, ուրվագծել ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի կայացման ու հետագա զարգացման ուղիները:

Ատենախոսության նպատակը ենթադրում է հետևյալ տեսական և հետազոտական խնդիրների առաջադրումն ու լուծումը.

1. Հստակեցնել «բնակչության սոցիալական պաշտպանություն» և «սոցիալական պաշտպանության համակարգ» եզրույթների բնորոշումները, ինչպես նաև դրանց հասկացության յնքնաբերական ներառված հիմնական հասկացությունների բովանդակությունը:
2. Հետազոտել բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը՝ կիրառելով սոցիոլոգիական հետևյալ մոտեցումները՝ համակարգային և կառուցվածքագործառութային:
3. Վերլուծել հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը:

4. Վերհանել բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող հիմնական ցուցանիշները:
5. Վերլուծել բնակչության սոցիալական պաշտպանվածության օբյեկտիվ պատկերն ու սուբյեկտիվ ընկալումները հետխորհրդային Հայաստանում:
6. Բացահայտել հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության տիպանմուշի (սոցիալական պաշտպանության մոդելի) առանձնահատկություններն ու կերպափոխումները:
7. Քննարկել ՀՀ սոցիալական պաշտպանության գործող տիպանմուշի (մոդելի) հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղիները:
8. Հետազոտել ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության առկա համակարգը՝ սոցիոլոգիական հետևյալ մոտեցումների՝ համակարգային և կառուցվածքագործառույթային, կիրառմամբ:
9. Վերլուծել ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորմանը խոչընդոտող հիմնախնդիրները և ներկայացնել դրանց լուծման հնարավոր ուղիները:

Ատենախոսության տեսա-մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության **տեսական հիմքը** սոցիոլոգիական հետևյալ մոտեցումների՝ համակարգային, կառուցվածքագործառույթային, հիմնարար դրույթներն են:

Համակարգային մոտեցման շրջանակում սոցիալական պաշտպանության համակարգի վերլուծության հիմքում ընկած է ուսումնասիրվող օբյեկտի՝ որպես համակարգի, ընկալման գաղափարը: Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի վերլուծությունը կառուցվածքագործառույթային մոտեցման, մասնավորապես՝ Թ. Պարսոնսի կողմից մշակված AGIL սխեմայի շրջանակում հնարավորություն է տալիս դիտելու սոցիալական պաշտպանությունը որպես գործառույթ համակարգ, որը միավորում է իր կառուցվածքային տարրերը ոչ միայն անմիջականորեն փոխազդելով դրանց հետ, այլ նաև դրանց ֆունկցիոնալ կախվածության հիման վրա¹⁰:

Ատենախոսական հետազոտության **էմպիրիկ հիմքերն են՝**

¹⁰ Ст'у Аствацатуров С. В. О специфике социологического познания социальной политики. Научные работы. Общественные науки. - Прак 1-Лингва, 2002, էջ 46:

1. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության 2001-2016թթ. տարեգրքերում և 2011, 2012, 2013, 2012, 2015 թթ. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցներում բերված վիճակագրական տվյալները:
2. 1995-2016 թթ. ՄԱԿ-ի Մարդկային զարգացման զեկույցներում Հայաստանի մասով ներկայացված վիճակագրական տվյալները:
3. ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանությանը առնչվող մի շարք նորմատիվ-իրավական ակտերը և անցկացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները (հեղինակի կողմից իրականացվել է փաստաթղթերի երկրորդային վերլուծություն):
4. ՀՀ-ում 2015 թվականին հեղինակի կողմից իրականացված որակական սոցիոլոգիական հետազոտության արդյունքները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում առկա են նորույթ հանդիսացող գաղափարներ, մոտեցումներ, տեսական ընդհանրացումներ և առաջարկություններ, որոնցից առավել կարևոր են հետևյալները.

1. Հստակեցված է «բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթի հասկացության համարատում ներառված հիմնական հասկացությունների բովանդակությունը՝ սոցիալական պաշտպանության համակարգի կառուցվածքային հիմնական տարրերի ու դրանց գործառույթների համատեքստում:

2. Վերլուծված է հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը:

3. Բացահայտված են հետխորհրդային Հայաստանում սոցիալական պաշտպանության տիպանմուշի (մոդելի) առանձնահատկություններն ու հակասությունները:

4. Փաստարկված են սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների համատեղ կիրառման առավելությունները բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը գնահատելիս:

5. Բացահայտված է հետխորհրդային Հայաստանում սոցիալական պաշտպանվածության պատկերը՝ բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների համատեղ կիրառմամբ:

6. Մանրամասն վերլուծված է ՀՀ սոցիալական պաշտպանության առկա համակարգի ֆունկցիոնալ վիճակն ու հիմնախնդիրները:

7. Առաջարկված են ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը տրամաբանական ավարտի հասցնելու քայլերը:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Տեսական արժեք է ներկայացնում «բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթի հստակեցումն ու սոցիալական պաշտպանության համակարգի սոցիոլոգիական վերլուծությունը: Առաջին անգամ փորձ է արված սոցիալական պաշտպանության առկա տիպանմուշի հանգամանալից վերլուծության միջոցով բնութագրել ՀՀ-ում գործող սոցիալական պաշտպանության «թվացյալ» (պսևդո) համակարգը: Արժեքավոր է նաև իրականացված բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող տարաբնույթ օբյեկտիվ ու սուբյեկտիվ ցուցանիշների համադրումը, որը թույլ է տվել մեկնաբանել սոցիալական պաշտպանվածության վերաբերյալ «օբյեկտիվ պատկեր-սուբյեկտիվ ընկալում» հարաբերակցությունը:

Կիրառական արժեք են ներկայացնում կատարված սոցիոլոգիական հետազոտություններն ու վերլուծությունները, որոնք հնարավորություն են ընձեռել օբյեկտիվ ցուցանիշների համադրման միջոցով գնահատել բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը հետխորհրդային Հայաստանում:

Կիրառական արժեք է ներկայացնում ՀՀ սոցիալական պաշտպանության ներկա տիպանմուշի վերլուծությունը, որը ուղի է հարթում գործող տիպանմուշը հստակեցնելու համար: Կիրառական արժեք է պարունակում սոցիալական պաշտպանության մեխանիզմների համակողմանի վերլուծությունը, որը պարունակում է կոնկրետ հանձնարականներ ու քայլեր՝ ուղղված մեզանում սոցիալական պաշտպանության արդյունավետ համակարգ ձևավորելու գործընթացն ավարտին հասցնելուն:

Ատենախոսության փորձաքննությունը: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի 2016թ. դեկտեմբերի 21-ի նիստում: Ատենախոսության հիմնական գաղափարները ներկայացված են գիտական հանդեսներում հրատարակված 6 հոդվածներում, ինչպես նաև՝ 2015 թվականին ԵՊՀ-ում կայացած «Սոցիալական պաշտպանության պետական համակարգը անկախության պայմաններում» խորագրով

հանրապետական գիտաժողովում: Ատենախոսության հիմնական դրույթները հեղինակը փորձարկել է ԵՊՀ սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն մագիստրոսական ծրագրով 2011 թվականից դասավանդվող «Հայաստանի արդի սոցիալական քաղաքակա-նությունը» դասընթացի շրջանակում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (8 ենթագլուխ), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և 2 հավելվածից: Աշխատության ծավալը 150 էջ է:

ԳԼՈՒԽ 1. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1 «Բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթը. տեսական ակնարկ

Հասարակությունների զարգացման մինչարդյունաբերական փուլում գերակշռում էր *սոցիալական պաշտպանության ընտանեկան ձևը*. ընդարձակ ընտանիքներում մշակվել և գործում էին ինքնապաշտպանության որոշակի մեխանիզմներ՝ հիմնված ընտանեկան ներուժի վրա: Արդյունաբերականացման գործընթացը արմատական փոփոխություններ առաջացրեց հասարակության սոցիալական կառուցվածքում, աշխատանքային հարաբերությունների ոլորտում, ընտանիքում: Մինչ այդ գործող ընտանեկան պաշտպանության մեխանիզմը, ըստ էության, քայքայվեց ընտանեկան փոխհարաբերությունների թուլացման և ընտանիքի անդամների թվի նվազման պատճառով: Քաղաքային կենսապայմանները, աշխատանքային նոր հարաբերություններն ու պայմանները ենթադրում էին սոցիալական պաշտպանության որոշակի մեխանիզմների ստեղծում նախ և առաջ աշխատողների համար: Հենց այդ ժամանակ էլ սկսեց կարևորվել *սոցիալական ապահովագրության գաղափարը*¹¹:

Սոցիալական ապահովագրությունը ենթադրում է *աշխատանքային եկամտի կորստի փոխհատուցումը*: Վերջինիս հիմքում ընկած է սոցիալական ռիսկերի պարտադիր և կամավոր ապահովագրության պահանջը¹²: Այն լայնորեն կիրառվում է շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Սոցիալական ապահովագրության պատմական ամենավաղ ձևը կոլեկտիվ ապահովագրությունն էր, որը արհմիությունների հետ միասին ի հայտ եկավ 19-րդ դարի երկրորդ կեսին: Արհմիությունները պաշտպանում էին վարձու աշխատողների շահերը գործատուների և պետության առջև: Կոլեկտիվ ապահովագրության վաղ

¹¹Տե՛ս Քոլկ В. Экономика, финансы и право социального страхования: Институты и страховые механизмы. - М.: Альпина Паблишер, 2013, էջ 13:

¹²Տե՛ս Шарифьянова З.Ф., Скрыбина М.Г., Лутфиева Г.М., Социальное страхование в России: проблемы и перспективы развития, Международнй научнй журнал «Инновационная наука», № 2, 2015, էջ 350:

օրինակ են Անգլիայում ստեղծված այսպես կոչված «փոխօգնության, հիվանդանոցային, գործազրկության դրամարկղերը»¹³:

Պատմականորեն պետական պարտադիր ապահովագրության մասին առաջին օրենքները ընդունվել են Գերմանիայում կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկի օրոք, մասնավորապես՝ 1883թ. ընդունվել է «Հիվանդությունների դեպքում պետական պարտադիր ապահովագրության մասին» օրենքը, 1884թ.-ին՝ «Դժբախտ պատահարներից ապահովագրության մասին» օրենքը, 1889թ.-ին՝ «Հաշմանդամության և ծերության դեպքում պարտադիր ապահովագրության մասին» օրենքը: Պարտադիր սոցիալական ապահովագրության մասին օրենքներ գործել են Եվրոպական և մի շարք այլ երկրներում ևս: Այսպես, օրինակ, Ռուսաստանում աշխատողների՝ հիվանդություններից և դժբախտ դեպքերից ապահովագրության մասին առաջին օրենքը ընդունվել է 1912թ.-ին¹⁴:

Որպես կանոն՝ հիվանդություններից, հաշմանդամությունից, ծերությունից, աշխատանքային խեղումներից պետական սոցիալական ապահովագրության մասին օրենքների ընդունումից հետո Գերմանիայում և Եվրոպական մի շարք երկրներում ընդունվում են օրենքներ, որոնք նախատեսում էին ապահովագրություն գործազրկության դեպքում: Գործազրկությունից ապահովագրության մասին օրենքը առաջին անգամ ընդունվել է Անգլիայում 1911թ.-ին¹⁵:

Ազգային, պետական ապահովագրական համակարգերի զարգացման հետ մեկտեղ մասնավոր ապահովագրությունը չվերացավ, այլ վերածվեց սոցիալական ապահովագրության լրացուցիչ համակարգի: Ընդ որում ակնհայտորեն նկատվում էր պետության դերի փոփոխման միտումը սոցիալական ապահովագրության կազմակերպման գործում: Այսպես, եթե մինչև 19-րդ դարի վերջը տարեցներին, անաշխատունակներին ուղղված սոցիալական քաղաքականության ոլորտում գերակշռում էր պետության չմիջամտելու հայեցակարգը, ապա աշխատողների պարտադիր սոցիալական ապահովագրության մասին օրենքների ընդունումից հետո ձևավորվում են *պետական սոցիալական ապահովության* համակարգերը: 20-րդ դարի սկզբին սոցիալական

¹³Տե՛ս Քոլկ В. Экономика, финансы и право социального страхования: Институты и страховые механизмы. — М.: Альпина Паблишер, 2013:

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

ապահովության համակարգերի հասցեատերերը միայն աշխատողներն էին և նրանց ընտանիքի անդամները, իսկ 20-րդ դարի վերջին զարգացած երկրներում այդ համակարգերը ընդգրկում էին գրեթե ողջ բնակչությանը:

Պատմականորեն *սոցիալական ապահովության* պահանջը ձևավորվել է հասարակությունների առաջացման հետ մեկտեղ: Այսպես, ցանկացած հասարակությունում՝ անկախ տնտեսական և սոցիալական կառուցվածքից, միշտ էլ գտնվել են մարդիկ, ովքեր իրենցից անկախ պատճառներով չեն կարողացել ձեռքբերել գոյատևման համար անհրաժեշտ միջոցներ: Այդ մարդկանց թվին են պատկանել նախ և առաջ երեխաները և տարեցները: Բացի այդ, անաշխատունակների շարքը կարող են համալրել առողջական խնդիրների պատճառով աշխատունակությունը ժամանակավոր կամ մշտապես կորցրած անձիք: Հասարակությունների զարգացմանը զուգահեռ սոցիալական ապահովության պատճառների շարքում ավելացան նաև այնպիսիք, որոնք պայմանավորված են հասարակությունում գերիշխող տնտեսական հարաբերությունների բնույթով:

Գիտական գրականության մեջ «սոցիալական ապահովություն» եզրույթի բովանդակությունը տարբեր կերպ է մեկնաբանվում: Որոշ հեղինակերի կարծիքով «սոցիալական ապահովություն» եզրույթը այլևս նպատակահարմար չէ կիրառել, քանի որ վերջինիս փոխարինել է «սոցիալական պաշտպանություն» եզրույթը, որը սկսեց մեծ տարածում գտավ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում 20-րդ դարի 30-40-ական թվականներին¹⁶: Որոշ հեղինակներ էլ գտնում են, որ «սոցիալական ապահովություն» և «սոցիալական պաշտպանություն» եզրույթները ունեն տարբեր բովանդակություն, մասնավորապես՝ սոցիալական ապահովության ներքո նկատի ունեն պետական գործունեության այն ուղղությունը, որը առնչվում է այն քաղաքացիների սոցիալական պաշտպանությանը, ովքեր որոշակի ներդրումներ են կատարել հասարակության համար, սակայն ընդգրկված չեն սոցիալական ապահովագրության

¹⁶ St' u Шарин В. «Социальное обеспечение» – понятие, требующее уточнения // Социальное обеспечение. – 2005. – № 6, էջ 36-39:

համակարգում¹⁷: Եվ վերջապես, որոշ հեղինակների կարծիքով էլ այս երկու եզրույթները ունեն միանգամայն նույն բովանդակությունը¹⁸:

«Սոցիալական ապահովություն» եզրույթի տարբեր սահմանումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կարելի է մեկնաբանել ինչպես լայն, այնպես էլ նեղ իմաստով: *Լայն իմաստով սոցիալական ապահովությունը սոցիալական պաշտպանության մեխանիզմ է, որի հիմքում ընկած է սոցիալական արդարության սկզբունքը: Նեղ իմաստով սոցիալական ապահովությունը սոցիալական տարբեր ռիսկերից բնակչությանը և նրա եկամուտների պաշտպանությանը ուղղված միջոցառումների ամբողջություն է:*

Նախքան «բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրի բովանդակությանը անդրադառնալը, հարկ է նշել, որ բնակչության սոցիալական պաշտպանության ուսումնասիրման հիմնական հայեցակարգային մոտեցումները ձևավորվել են *տնտեսագիտական տեսության* շրջանակներում, որոնք հիմնվում են *տնտեսագիտական տեսության դասական և նորդասական դպրոցների, քեյնսյան դպրոցի, ինստիտուցիոնալիզմի տեսության* վրա:

Ելնելով այն հանգամանքից, որ շուկան համարվում է ինքնակարգավորվող մեխանիզմ, քաղաքատնտեսության դասական դպրոցի ներկայացուցիչները սոցիալական պաշտպանությունը նույնացնում էին բարեգործության հետ, որով հիմնականում զբաղվում են բարեպաշտ մարդիկ՝ առաջնորդվելով ալտրուիզմի և մարդասիրության գաղափարներով:

Այս դպրոցի ներկայացուցիչ *Ա. Սմիթը (1723-1790 թթ.)* կարևորում էր հասարակական կարգի գաղափարը, որը ենթադրում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների տարերային կարգավորում՝ ազատ շուկայի անդեմ մեխանիզմի միջոցով¹⁹:

Սոցիալական պաշտպանության վերաբերյալ մոտեցումների փոփոխությունը տնտեսագիտական տեսության նորդասական դպրոցի ներկայացուցիչների

¹⁷Տե՛ս Зима, В.В. Социальное обеспечение как структурный элемент системы социальной защиты населения, Среднерусский вестник общественных наук, № 1 / 2010, էջ 37:

¹⁸ Миронова Т. К. К вопросу об определении понятия «социальная защита» // «Трудовое право», N3, 2008, <http://www.top-personal.ru/lawissue.html?1548>, 23.03.2016թ., ժամը՝ 12:56:

¹⁹ Տե՛ս Смит А. Исследование о природе и причинах богатства народов. – М.: Соцэкгиз, 1962, էջ 227:

հայացքներում արտացոլում է *մարժինալիստական հայեցակարգը*, որի շրջանակներում սոցիալական պաշտպանությունը հիմնվում է քաղաքացիների կենսամակարդակի նկատմամբ պետական վերահսկողության անհրաժեշտության գաղափարի վրա: Մարժինալիզմի ներկայացուցիչների կարծիքով մարդիկ հստակ գիտեն իրենց պահանջմունքների բավարարման հերթականությունը՝ ելնելով սեփական եկամուտներից: Այս կամ այն ապրանքը գնելիս կամ ծառայությունը ստանալիս՝ մարդիկ գործում են ռացիոնալ. իրենց եկամուտը փորձում են այնպես վերաբաշխել, որպեսզի կարողանան առավելագույնի հասցնել ընդհանուր բավարարվածությունը²⁰:

Բնական իրավունքների ուսմունքի համաձայն՝ հասարակության յուրաքանչյուր անդամ պետության կողմից սահմանված նվազագույն կենսամակարդակից ներքև չգտնվելու իրավունք ունի: Կիսելով պետական աջակցության մասին այս գաղափարները, որոնք ենթադրում են ազգային եկամուտների վերաբաշխում բնակչության հարուստ շերտերից դեպի աղքատները, մարժինալիզմի ներկայացուցիչ *Ա. Մարշալը (1842-1924թթ.)* առաջարկում է պետական աջակցություն տրամադրել կրթության, երիտասարդների դաստիարակության, հանգստի և կենսապայմանների բարելավման միջոցով²¹:

Տնտեսագիտական տեսության նորդասական դպրոցի մեկ այլ ներկայացուցիչ՝ *Ա. Պիգուի (1877-1959թթ.)* կարծիքով ազգային եկամտի վերաբաշխումը հիմնականում տեղի է ունենում աղքատների հաշվին: Ստանալով պետությունից աջակցություն՝ աղքատները, օրինակ, համաձայն են ստանալ առավել ցածր աշխատավարձ²²:

Վերոհիշյալ դպրոցի մեկ այլ ներկայացուցիչ՝ *Վ. Պարետյոյի (1848-1923թթ.) կարծիքով* որևէ երկրի տնտեսական վիճակի, բնակչության սոցիալական վիճակի բարելավումը ենթադրում է բարելավել հասարակության գոնե մեկ անդամի բարեկեցությունը այնպես, որ հասարակության մնացած անդամների բարեկեցությունը

²⁰Տե՛ս Блауг М. Маржиналистская революция // Экономическая мысль в ретроспективе = Economic Theory in Retrospect.-М.:Дело, 1994:

²¹Տե՛ս Маршал А. Принципы экономической науки / А. Маршал. – в 3-х т. – М., 1993, т.3., էջ 132-142:

²²Տե՛ս Пигу А. Экономическая теория благосостояния / А. Пигу. – в 2-х Т.-М.: Прогресс, 1985 Т.1., էջ 138:

չնվազի²³: Այլ կերպ ասած, եթե որևէ իրադարձության արդյունքում բարելավվում է որևէ անհատի բարեկեցությունը, իսկ մյուս բոլոր անհատների վիճակը չի վատթարանում, ապա այդպիսի իրադարձությունը կարող է ապահովել բնակչության բարեկեցությունը:

Բնակչության սոցիալական պաշտպանության հիմնախնդրին անդրադարձել են նաև տնտեսագիտական տեսության *քեյնսյան դպրոցի* ներկայացուցիչները, որոնք գտնում էին, որ պետությունը պետք է ակտիվորեն միջամտի հասարակության տնտեսական կյանքին: Ջ. Քեյնսի կարծիքով շուկան ընդունակ չէ ինքնակարգավորման, մասնավորապես՝ շուկայական տնտեսությունը ի վիճակի չէ ինքնուրույն «բուժելու» իրեն այնպիսի ախտերից, ինչպիսիք են՝ գործազրկությունը, ինֆլյացիան, տնտեսական աճի ցածր տեմպերը: Ուստի շուկայական մեխանիզմը անպայմանորեն պետք է զսպվի և համալրվի պետական կարգավորումներով²⁴:

Բնակչության սոցիալական պաշտպանության հիմնախնդիրը քննարկվել է նաև *ինստիտուցիոնալիզմի տեսության* շրջանակներում, որի հիմնադիրն է համարվում ամերիկացի գիտնական Թ. Վերլենը (1857-1929թթ.): Հետագայում նրա գաղափարները տարբեր ոլորտներում զարգացրին Ու. Միլզեյը (1874-1948թթ.), Յ. Թիմբերգենը (1903-1994թթ.), Ջ. Գելբրեյթը (1908-2006թթ.) և այլոք:

Ինստիտուցիոնալ մոտեցման կողմնակիցները չեն սահմանափակվում զուտ տնտեսական հարաբերությունների վերլուծությամբ: Վերջիններիս կարծիքով պետք է հաշվի առնել այն պայմանների և գործոնների ամբողջությունը, որոնք ազդում են տնտեսական կյանքի վրա: Խոսքը գնում է այնպիսի հասարակական «ինստիտուտների»²⁵ մասին, ինչպիսիք են տնտեսական կազմակերպությունները, սոցիալական խմբերի վարքի նորմերը, օրենքները, կարծրատիպերը, սովորույթները, ավանդույթները և այլն: Այս մոտեցման կողմնակիցներին բնորոշ է քննադատական վերաբերմունքը կապիտալիզմի նկատմամբ²⁶:

²³Տե՛ս Բլաուգ Մ., *Экономическая теория благосостояния Парето* // *Экономическая мысль в ретроспективе* = *Economic Theory in Retrospect*. — М.: Дело, 1994:

²⁴Տե՛ս Կեյնս Ջ. Մ. *Общая теория занятости, процента и денег*. Избранное/вступ. Статья Н.А. Макашевой/.-М.: Эксмо, 2008:

²⁵ Հենց այս բառից էլ առաջացել է տվյալ ուղղության անվանումը:

²⁶Տե՛ս Կեյնս Ջ. Մ. նշվ. աշխ.; *Веблен Т.* Теория праздного класса /Пер. с англ., вступит., статья С. Т. Сорокиной. Общая ред. В. В. Мотылева. М.: Прогресс, 1984; *Митчелл У.* Экономические циклы: Проблема и ее постановка. – М. – Л.: Госиздат, 1930:

Ինստիտուցիոնալ ուղղվածության տնտեսագետների աշխատություններում սոցիալական պաշտպանությունը դիտվում է որպես շուկայի հնարավորությունների և բնակչության պահանջմունքների միջև առկա հակասությունները հաղթահարելու փորձ: Այս մոտեցման ներկայացուցիչների կարծիքով պետական աջակցությունը պետք է տրամադրվի միայն բնակչության խիստ կարիքավոր շերտերին, իսկ մյուսները ինքնուրույն պետք է ապահովեն իրենց: Այս մոտեցման ներկայացուցիչները արդարացիորեն համարում էին, որ եթե մինչ այժմ աղքատությունը պայմանավորված էր ցածր եկամուտներով, ապա ներկայումս աղքատությունը չաշխատողների հիմնախնդիրն է: Վերջիններիս կարծիքով սոցիալական պաշտպանության հիմնական նպատակը պետք է լինի բոլոր աշխատունակ քաղաքացիներին աշխատանքով ապահովելը: Այդ նպատակի իրականացմանը պետք է ուղղված լինեն մասնագիտական պատրաստության ոլորտում համապատասխան ծրագրերը, զբաղվածության կարգավորմանը ուղղված մի շարք այլ միջոցառումներ: Սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդիկ կամ անաշխատունակ բնակչությունը պետք է պաշտպանված լինեն սոցիալական ապահովագրության, սոցիալական օգնության, սոցիալական ապահովման տրանսֆերտային ծրագրերի միջոցով: Այս ամենի արդյունքում շատ երկրներում ձևավորվել է բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտին պետական միջամտության ուրույն համակարգ, որը ենթադրում է հետևյալը՝ սոցիալական քաղաքականության նպատակը տնտեսական ոլորտում հասարակության յուրաքանչյուր անդամի համար ինքնադրսևորման պայմանների ստեղծումն է: Դրա համար պահանջվում են ընդհանուր ինստիտուցիոնալ պայմաններ, որոնք կարգավորում են անհատների տնտեսական գործունեությունը: Առաջին պլան է մղվում ոչ թե եկամտի վերաբաշխումը բյուջեի և անվճար սոցիալական ծառայությունների միջոցով, այլ աշխատունակ բնակչության համար բարենպաստ տնտեսական պայմանների ստեղծումը, որին էլ ուղղված են սոցիալական

պաշտպանության հիմնական միջոցները²⁷: Այս հայեցակարգը մշակվել է *Ա. Մյուլլեր-Արմակի* կողմից:

Վերոհիշյալ հայեցակարգի կողմնակիցներ՝ գերմանացի տնտեսագետներ *Վ. Օյկենին* (1891-1950թթ.) և *Լ. Էրհարդին*, (1897-1977թթ.) է պատկանում «շուկայական ազատության» և «սոցիալական համահարթեցման» սկզբունքների համադրման գաղափարը²⁸: Այս դեպքում կարևորվում է ակտիվ սոցիալական քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը, որի նպատակն է շտկել (կորեկցիայի ենթարկել) տնտեսական մրցակցության արդյունքները սուբսիդավորման միջոցով: Ըստ էության, այս դեպքում խոսքը գնում է խիստ հասցեական օգնության մասին, որը պետք է տրամադրվի կարիքավորներին: Վերոհիշյալ հեղինակների կարծիքով սոցիալական պաշտպանության հիմնական նպատակն է աշխատաշուկայում աշխատունակ քաղաքացիների համար բարենպաստ պայմանների ստեղծումը:

Վերոնշյալ հայեցակարգի մեկ այլ կողմնակից՝ *Լամպերտը*, սոցիալական պաշտպանության ձևերին է դասում սոցիալական ապահովագրության տարբեր տեսակները՝ կենսաթոշակային, բժշկական, արտադրությունում դժբախտ դեպքերից, գործազրկության դեպքում ապահովագրությունը, ինչպես նաև սոցիալական օգնությունը, պետական աջակցությունը կրթություն ստանալու նպատակով, ձեռնարկությունների մակարդակում սոցիալական պաշտպանության համակարգերի ստեղծումը²⁹:

Այսպիսով, բնակչության սոցիալական պաշտպանության հիմնախնդիրը ուսումնասիրող տնտեսագիտական դպրոցների տեսական-մեթոդաբանական մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական պաշտպանությունը տարբեր կերպ է հասկացվում տարբեր մոտեցումների շրջանակներում: Դասական տնտեսագիտության շրջանակներում սոցիալական պաշտպանությունը դիտվում է որպես աղքատության մեջ գտնվող անհատներին աջակցության տրամադրում: Ըստ էության,

²⁷ Տե՛ս Мюллер-Армак А. Принципы социального рыночного хозяйства / Социальное рыночное хозяйство. Теория и этика экономического порядка в России и Германии.– СПб., 1999, էջ 264:

²⁸ Տե՛ս Эрхард Л. Благосостояние для всех. – М.: Начала-Пресс, 1991; Ойкен В. Основные принципы экономической политики. — М.: Прогресс, 1995:

²⁹ Տե՛ս Ламперт Х. Социальная рыночная экономика. Германский путь. М., 1994, էջ 150 - 152, 182 – 200:

քաղաքատնտեսության դասական դպրոցը բնակչության սոցիալական պաշտպանության հիմնախնդրի լուծումը չէր համարում պետության իրավասությունը, և բնակչության բարեկեցության պատասխանատվությունը դնում էր կամ բնակչության, կամ էլ մասնավոր բարեգործների և նվիրատուների վրա: Սրա հետ մեկտեղ սոցիալական ապահովագրության գաղափարի հայտնվելը վկայում է քաղաքատնտեսության դասական դպրոցի ներկայացուցիչների հայացքների փոփոխման մասին:

Նորդասական մոտեցման համաձայն, որպեսզի իրացվի հասարակության յուրաքանչյուր անդամի՝ պետության կողմից սահմանված նվազագույն կենսամակարդակից ներքև չգտնվելու իրավունքը, անհրաժեշտ է վերաբաշխել ազգային եկամուտը: Ըստ էության, այս մոտեցման շրջանակներում սոցիալական պաշտպանությունը դիտվում է որպես հարուստների և աղքատների միջև առկա հակասությունների հաղթահարման միջոց:

Քեյնսյան մոտեցման համաձայն՝ պետությունը պետք է ակտիվորեն միջամտի սոցիալական ոլորտին և հանդիսանում է նպաստների, կենսաթոշակների երաշխավորը: Պետական կարգավորումը ենթադրում է բյուջետային մեծ ծախսեր, ներառյալ սոցիալական ապահովագրության վճարները, գործազրկության նպաստները և այլն:

Քեյնսյան դպրոցի ներկայացուցիչները գտնում էին, որ պետության կողմից իրականացվող քաղաքականությունը պետք է ուղղված լինի արտադրության, զբաղվածության, ինչպես նաև եկամուտների վերաբաշխման կարգավորմանը:

Ինստիտուցիոնալ մոտեցման ներկայացուցիչների կարծիքով սոցիալական պաշտպանության հիմնական նպատակը աշխատունակ քաղաքացիներին աշխատանքով ապահովելն է: Անաշխատունակ բնակչությունը պետք է պաշտպանված լինի սոցիալական ապահովագրության, սոցիալական օգնության, սոցիալական ապահովման տրանսֆերտային ծրագրերի միջոցով:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի անգլիացի հայտնի տնտեսագետ *Ու. Բևերիջի (1879-1963թթ.)* կողմից տրված սոցիալական պաշտպանության սահմանումը: Վերջինս, ըստ էության, սոցիալական պաշտպանությունը մեկնաբանում է՝ որպես պետության և անհատի միջև հարաբերություն՝ կարևորելով սոցիալական ռիսկերի

կառավարման գաղափարը: Բևերիջը առաջարկում է սահմանել սոցիալական պաշտպանությունը՝ ելնելով վերջինիս հիմնական գործառույթից. փոխհատուցել կորցրած վաստակը: Բևերիջի կարծիքով սոցիալական պաշտպանությունը ենթադրում է «...պաշտպանություն եկամտի տրամադրման միջոցով՝ կորցրած վաստակի փոխարեն, որը կարող է տեղի ունենալ գործազրկության, հիվանդության կամ դժբախտ պատահարների դեպքում, կենսաթոշակների տրամադրման միջոցով ծերության ժամանակ, ինչպես նաև աջակցության տրամադրման միջոցով ընտանիքի՝ կերակրողին կորցնելու և ծննդյան, մահվան ու ամուսնության հետ կապված չնախատեսված ծախսերը հոգալու համար»³⁰:

Բևերիջի կողմից մշակված սոցիալական պաշտպանության հայեցակարգը հիմնված է հետևյալ 3 սկզբունքների վրա՝

- սոցիալական պաշտպանությունը սոցիալական առաջընթացի ապահովմանը ուղղված ընդհանուր քաղաքականության բաղադրիչ է,
- սոցիալական պաշտպանությունը պետության և անհատի միջև համագործակցության արդյունք է, որին հասնելու համար պետությունը ապահովում է անհրաժեշտ նվազագույն երաշխիքներ, իսկ լրացուցիչ ապահովությունը ձեռք է բերվում հենց անհատների կամավոր գործողությունների շնորհիվ,
- սոցիալական պաշտպանությունը ենթադրում է պարտադիր սոցիալական ապահովագրության համակարգի ներդրում, որի գործառման համար անհրաժեշտ է, որպեսզի պետության կողմից ապահովվեն հետևյալ հիմնական պայմանները՝
 - երեխաների դաստիարակության համար հավասար պայմանների ապահովում մանկական նպաստների հաշվին,
 - համընդհանուր բժշկական և վերականգնողական ծառայությունների տրամադրում,
 - զանգվածային գործազրկության բացառում³¹:

³⁰Social Insurance and allied services. Report by Sir William Beveridge. London, 1942, Bulletin of the World Health Organization, 2000, 78 (6):

³¹Տե՛ս նույն տեղը:

Բևերիջը առաջարկում է բնակչության սոցիալական պաշտպանության այնպիսի համակարգի ստեղծում, որը ենթադրում է հետևյալ գործառույթները.

- պետությունը ապահովում է ողջ բնակչության սոցիալական պաշտպանության բազային երաշխիքները:
- Գործատուները պատասխանատու են և ապահովում են վարձու աշխատողների սոցիալական (մասնագիտական) ապահովագրությունը:
- Աշխատողները ապահովում են լրացուցիչ անձնական ապահովագրությունը³²:

Ըստ Բևերիջի՝ պետական սոցիալական երաշխիքները պետք է ուղղված լինեն կենսական նվազագույնի, լրացուցիչ սոցիալական ապահովագրության (վաստակածի փոխհատուցման), կամ լրացուցիչ կամավոր անձնական ապահովագրության ապահովմանը:

Բևերիջը առաջարկում է սոցիալական պաշտպանության ֆինանսավորման երկակի մեթոդ, մասնավորապես՝ մանկական նպաստները և ազգային առողջապահությունը ֆինանսավորել պետական բյուջեի միջոցներից, իսկ սոցիալական պաշտպանության այլ միջոցառումները ֆինանսավորել հենց աշխատողների, գործատուների հատկացումների և պետական սուբսիդիաների հաշվին:

Հարկ է նշել, որ Բևերիջի կողմից առաջարկված սոցիալական պաշտպանության մոդելը կիրառվել է Մեծ Բրիտանիայում³³, ԱՄՆ-ում, Նիդեռլանդներում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում:

Այսպիսով, Բևերիջը մշակել է սոցիալական պաշտպանության առավել համապարփակ հայեցակետ՝ կարևորելով սոցիալական ռիսկերի կառավարման գաղափարը:

Ամփոփելով «սոցիալական պաշտպանություն» եզրույթի ձևավորման պատմությունը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ հասարակությունների զարգացման մինչարդյունաբերական փուլում կարևորվել է սոցիալական պաշտպանության ընտանեկան ձևը, այնուհետ հասարակությունների զարգացման արդյունաբերական

³²Տե՛ս Social Insurance and allied services. Report by Sir William Beveridge. London, 1942, Bulletin of the World Health Organization, 2000, 78 (6):

³³1944թ. Մեծ Բրիտանիայի կառավարությունը ձեռնամուխ եղավ սոցիալական ապահովագրության համակարգի բարեփոխմանը՝ Բևերիջի կողմից ներկայացված զեկույցի հիման վրա:

փուլում ի հայտ է եկել սոցիալական ապահովագրության գաղափարը: Իսկ արդեն 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին սկսեց կարևորվել սոցիալական ապահովության գաղափարը՝ չնայած այն հանգամանքին, որ պատմականորեն սոցիալական ապահովության պահանջը ձևավորվել է հասարակությունների առաջացման հետ մեկտեղ:

20-րդ դարի 30-40-ական թվականներին շուկայական տնտեսություն ունեցող երկրներում լայն տարածում գտավ «սոցիալական պաշտպանություն» եզրույթը, որը առաջին անգամ կիրառվել է Աբրահամ Էպստեյնի³⁴ (Abraham Epstein) կողմից: Նա տնտեսագետ էր, ով զբաղվել է սոցիալական արդարության և սոցիալական ապահովագրության հիմնախնդիրների ուսումնասիրմամբ: Էպստեյնը ղեկավարել է սոցիալական բարեկեցության ապահովմանն ուղղված շարժումը ԱՄՆ-ում 20-րդ դարի կեսերին: 1927թ.-ին Աբրահամ Էպստեյնը ստեղծում է Տարեց հասակի պաշտպանության ամերիկյան ասոցիացիան, որի անվանումը 1933թ.-ին Էպստեյնի նախաձեռնությամբ փոխվում է Սոցիալական պաշտպանության ամերիկյան ասոցիացիայի: Էպստեյնի կարծիքով «սոցիալական պաշտպանություն» հասկացությունը առավել նպատակահարմար է օգտագործել քան «տնտեսական պաշտպանություն»³⁵ կամ «սոցիալական ապահովագրություն» հասկացությունները՝ ելնելով տարբեր պատճառներից: «...Ես պնդում եմ կիրառել «սոցիալական պաշտպանություն» հասկացությունը», - գրում է նա, «այլ ոչ թե «սոցիալական ապահովագրությունը», քանի որ ապահովագրությունը շեշտադրում է գերմանական ապահովագրության հայեցակարգը: Ես նպատակահարմար չեմ գտնում կիրառել նաև «տնտեսական պաշտպանություն» հասկացությունը, քանի որ այս դեպքում խոսքը վերաբերում է միայն աշխատողների պաշտպանությանը, այնինչ սոցիալական

³⁴Չնայած վերջինս սոցիալական բարեկեցության և սոցիալական պաշտպանության հարցերի փորձագետ էր, այնուամենայնիվ, նրա կարծիքը հաշվի չի առնվել ԱՄՆ-ի 1935 թվականի «Սոցիալական պաշտպանության մասին» օրենքի մշակման ժամանակ: Սակայն Էպստեյնը բազմիցս քննադատել է այդ օրենքի մի շարք դրույթներ:

³⁵Այս հասկացությունը օգտագործվել է ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտի կողմից 1934թ.-ին, որի շրջանակներում ըստ էության կարևորվում էր աշխատող քաղաքացիների պաշտպանությունը:

պաշտպանությունը ենթադրում է երկրի ողջ բնակչության բարեկեցության ապահովում»³⁶:

Այսպիսով, «բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթը առաջին անգամ կիրառվել է ԱՄՆ-ում «Սոցիալական պաշտպանության մասին» օրենքում, որն էլ իր հերթին խթանեց տարեցներին, անգործունակներին և գործազուրկներին ուղղված աջակցության ծրագրերի մշակումը:

Հարկ է նշել, որ միջազգային մի շարք փաստաթղթերում տեղ են գտել «սոցիալական պաշտպանություն» եզրույթի սահմանումները:

Այսպես, **սոցիալական պաշտպանության** ժամանակակից օպերացիոնալ սահմանումը հիմնված է 1952թ. Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունված *Սոցիալական պաշտպանության կոնվենցիայի (նվազագույն չափորոշիչներ)* վրա, որի շրջանակներում առանձնացվում են պաշտպանության 3 հիմնական ձևեր, որոնք պետությունը պետք է ապահովի իր քաղաքացիների համար: Դրանք են՝

- փոխհատուցել չնախատեսված ծախսերը, որոնք կատարվում են եկամուտների բացակայության պայմաններում: Առաջին կատեգորիան ներառում է ծախսերի փոխհատուցում այնպիսի դեպքերում, ինչպիսիք են գործազրկությունը, հաշմանդամությունը, ծերությունը, կերակրողին կորցնելը, ինչպես նաև հիվանդությունը, մայրությունը և այլն,
- առողջապահական խնամքի ապահովում (բժշկական ծառայությունների տրամադրում),
- երեխաներ ունեցող ընտանիքներին նպաստների տրամադրում³⁷:

Այսպիսով, սոցիալական պաշտպանության վերոնշյալ հայեցակարգին բնորոշ է եկամուտների պաշտպանությունը, առողջության ապահովումը, երեխաներին տրամադրվող նպաստները:

Սոցիալական պաշտպանությունը ունի հետևյալ ասպեկտները՝

- սոցիալական պաշտպանությունը փոխարինում է սոցիալական ապահովությանը,

³⁶ Origin of the term “Social security”, Social Security Bulletin/Vol. 55, No. 1/ Spring 1992, pp. 63-64:

³⁷ St'u C102 - Social Security (Minimum Standards) Convention, 1952 (No. 102):

- սոցիալական պաշտպանությունը որպես «պաշտպանություն» իրականացվում է սոցիալական ռիսկերի և կարիքների առկայության դեպքում³⁸:

Սոցիալական պաշտպանությունը ներառում է դրամական և ոչ դրամական օգնությունը, որը տրամադրվում է՝

- աշխատանքի հետ կապված ցածր եկամուտների առկայության դեպքում պայմանավորված հիվանդությամբ, հաշմանդամությամբ, մայրությամբ, աշխատանքային խեղումներով (վնասվածքներով), գործազրկությամբ, ծերությամբ, ընտանիքի անդամներից մեկի կամ մի քանիսի մահվամբ,
- բժշկական ծառայություններից օգտվելու մատչելիության սահմանափակման կամ բացակայության դեպքում,
- անբավարար ընտանեկան աջակցության դեպքում, մասնավորապես՝ երեխաներին և ընտանիքի չափահաս կախյալ անդամներին անհրաժեշտ անբավարար ընտանեկան աջակցության դեպքում,
- աղքատության և սոցիալական մեկուսացման դեպքերում³⁹:

Այսպիսով, Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից առաջարկված սոցիալական պաշտպանության սահմանումը շեշտադրում է ոչ միայն աշխատող քաղաքացիների սոցիալական պաշտպանության ապահովումը, հետևաբար նաև սոցիալական ապահովագրության գաղափարը, այլ նաև՝ աշխատուժի հաջորդ սերունդների սոցիալական պաշտպանության ապահովումը՝ կարևորելով առողջության ապահովումը և երեխաներին տրամադրվող նպաստները:

Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից առաջարկված սոցիալական պաշտպանության սահմանումը լրացնում է 1976 թվականին ուժի մեջ մտած ՄԱԿ-ի Գլխավոր Անսամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 Ա (XXI) բանաձևը⁴⁰:

Անդրադառնալով գիտական գրականության մեջ առկա «սոցիալական պաշտպանություն» եզրույթի սահմանումներին՝ հարկ է նշել, որ Խորհրդային Ռուսաստանում, ինչպես նաև Խորհրդային Հայաստանում սոցիալական պաշտպանության

³⁸ St'u World Social Security Report 2010/11: Providing coverage in times of crisis and beyond International Labour Office – Geneva: ILO, 2010 էջ 13:

³⁹ St'u C102 - Social Security (Minimum Standards) Convention, 1952 (No. 102):

⁴⁰ St'u Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, ՄԱԿ՝ ընդունված 16.12.1966թ.:

խնդրի նկատմամբ գիտական հետաքրքրությունը բավականին թույլ էր արտահայտված, կարելի է ասել՝ անգամ բացակայում էր: Հարկ է նշել, որ խորհրդային հասարակական գիտությունը ուսումնասիրել է *սոցիալական ապահովության*, այլ ոչ թե սոցիալական պաշտպանության հիմնախնդիրը գերազանցապես տնտեսական և իրավական տեսանկյունից: Իսկ արդեն հետխորհրդային շրջանի ռուս, ինչպես նաև հայ մի շարք գիտնականների աշխատություններում ներկայացված են «սոցիալական պաշտպանություն» եզրույթի սահմանումները:

Այսպես, Վ. Պ. Յուդինի կարծիքով «սոցիալական պաշտպանություն» հասկացությունը չունի հստակ առանձնացված սահմաններ և բովանդակություն⁴¹: Այս ամենի հետևանքով հետխորհրդային շրջանի ռուսական գիտական գրականության մեջ սոցիալական պաշտպանության ձևերի վերաբերյալ առկա են տարբեր տեսակետներ: Օրինակ՝ Տ. Դ. Վիկուլինայի կարծիքով, պետական սոցիալական պաշտպանությունը իրականացվում է սոցիալական օգնության և սոցիալական ապահովագրության ձևով⁴²: Ըստ Ա. Վ. Պաշկովի՝ սոցիալական պաշտպանությունը արտահայտվում է սոցիալական ապահովության, սոցիալական օգնության, լրացուցիչ սոցիալական պաշտպանության միջոցով⁴³: Մ. Ի. Լեպիխովը առանձնացնում է սոցիալական պաշտպանության հետևյալ ձևերը՝ պարտադիր սոցիալական ապահովագրություն, պարտադիր պետական ապահովագրություն, սոցիալական ապահովություն՝ պետական բյուջեի ուղղակի հատկացումների հաշվին, պետական սոցիալական օգնություն⁴⁴:

Վերջին տարիներին ռուս մի շարք գիտնականներ, կիսելով անգլիացի հայտնի տնտեսագետ Բևերիջի գաղափարները սոցիալական պաշտպանության վերաբերյալ, սոցիալական պաշտպանությունը առավել հաճախ մեկնաբանում են որպես պոստենցիալ սոցիալական ոփսկերից բնակչության տարբեր խմբերի պաշտպանություն՝

⁴¹ Տե՛ս Юдин В.П. Социальная защита: понятие, сущность, границы.– Казань: Казан.гос. технол. ун-т, 1995., էջ 4:

⁴² Տե՛ս Викулина Т.Д. Денежные доходы населения: особенности формирования в переходной экономике. СПб., 1998, էջ 64, 71:

⁴³ Տե՛ս Пашков А.В. Европейская социальная политика. Киев, 1999, էջ 55:

⁴⁴ Տե՛ս Лепихов М. И. Право и социальная защита населения (социальное право). Нормативные правовые акты приведены по состоянию на 15 апреля 2000г.– М.: Былина, 2000, էջ 11:

կարևորելով սոցիալական իրավունքների և սոցիալական երաշխիքների իրականացումը: Այսպես, օրինակ, Վ. Վ. Անտրոպովի կարծիքով «...սոցիալական պաշտպանությունը ենթադրում է ինստիտուտների և միջոցառումների ամբողջություն՝ ուղղված սոցիալական ռիսկերից անհատների և սոցիալական խմբերի պաշտպանությանը, որոնք կարող են հանգեցնել տնտեսական ինքնուրույնության և սոցիալական բարեկեցության լրիվ կամ մասնակի կորստին»⁴⁵: Մեկ այլ ռուս գիտնական՝ Ա. Ն. Ավերինը, գտնում է, որ սոցիալական պաշտպանությունը «...միջոցառումների համակարգ է՝ ուղղված սոցիալական իրավունքների և սոցիալական երաշխիքների իրականացմանը, մարդկանց նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, վերջիններիս կյանքի որակը իջեցնող գործոնների բացասական ազդեցության նվազեցմանը»⁴⁶: Տ. Կ. Միրոնովան առաջարկում է դիտել սոցիալական պաշտպանությունը որպես «...պետական և ոչ պետական մարմինների ու կազմակերպությունների գործունեություն, որը ենթադրում է տնտեսական, իրավական, կազմակերպական բնույթի միջոցառումների իրականացում, որոնք ուղղված են մարդու և նրա ընտանիքի համար որոշակի սոցիալական կարևոր հանգամանքներով (այդ թվում նաև սոցիալական ռիսկերով) պայմանավորված բացասական հետևանքների մեղմանը, ինչպես նաև վերջիններիս նյութական և սոցիալական բարեկեցության ընդունելի մակարդակի պահպանմանը»⁴⁷: Ն. Ա. Գորելովի կարծիքով սոցիալական պաշտպանությունը սոցիալական երաշխիքների իրականացմանը ուղղված գործողություններն են⁴⁸:

Նպատակ չհետապնդելով ներկայացնել հետխորհրդային շրջանի ռուսական գիտական գրականության մեջ առկա «բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթի բոլոր մեկնաբանությունները՝ սահմանափակվենք դրանց խմբավորմամբ:

⁴⁵Антропов В.В. Социальная защита в странах Европейского союза. История, организация, финансирование, проблемы. – М.: ЗАО «Издательство «Экономика», 2006, էջ 11:

⁴⁶Аверин А.Н. Государственная система социальной защиты населения: – М.: Изд-во РАГС, 2010, էջ 3:

⁴⁷Миронова Т.К. К вопросу об определении понятия «социальная защита» // Трудовое право. – 2008. – №3, <http://www.top-personal.ru/lawissue.html?1548>, 23. 03. 2016, ժ.՝ 12:56:

⁴⁸Տե՛ս Գорелов Н.А., Тучков А.И. Энциклопедия труда и занятости. СПб.: Изд-во С.-Петербур. гос. ун-та экономики и финансов, 1997, էջ 159:

Մեկնաբանությունների առաջին խումբը պայմանականորեն կանվանենք *կապեգորիալ մեկնաբանություններ*, քանի որ դրանցում սոցիալական պաշտպանությունը դիտվում է որպես սոսկ գիտական կատեգորիա: Այս դեպքում սոցիալական պաշտպանությունը մեկնաբանվում է որպես պետության և անձի միջև սոցիալ-տնտեսական հարաբերությունների ամբողջություն, որոնք ձևավորվում են հասարակական եկամտի բաշխման և վերաբաշխման արդյունքում:

Մեկնաբանությունների երկրորդ խումբը, որը պայմանականորեն կանվանենք *գործնական մեկնաբանությունների խումբ*, շեշտադրում է սոցիալական պաշտպանության գործնական ասպեկտը: Այս դեպքում սոցիալական պաշտպանությունը դիտվում է որպես պետական միջոցառումների համակարգ, որը մի դեպքում ուղղված է կենսագործունեության հիմնական ոլորտներում բոլոր քաղաքացիների սոցիալական անվտանգության ապահովմանը, իսկ երկրորդ դեպքում սոցիալական պաշտպանությունը մեկնաբանվում է որպես բնակչության սոցիալապես անապահով խմբերին տրամադրվող սոցիալական օգնություն:

Մեկնաբանությունների երրորդ խումբը շեշտադրում է վերոնշյալ երկու խմբերում ներառված մեկնաբանությունները՝ «սոցիալական պաշտպանություն» հասկացության բովանդակությունը սահմանելիս:

Հետխորհրդային Հայաստանի մի շարք գիտնականներ իրենց աշխատություններում ևս անդրադարձել են «սոցիալական պաշտպանություն» եզրույթին: Այսպես, Մ. Անտոնյանը սոցիալական պաշտպանությունը սահմանում է որպես «...ինստիտուտ, որը կոչված է բավարարելու երեխայի և հասարակության շահերը»⁴⁹:

Մեկ այլ հայ հեղինակ՝ Ա. Բաբայանը, սոցիալական պաշտպանությունը դիտում է՝ որպես անձի իրավունքների և ազատությունների պահպանմանն ուղղված ինքնուրույն գործունեության ձև⁵⁰: Հատկանշական է այն հանգամանքը, որ հեղինակը սոցիալական պաշտպանությունը դիտում է որպես սոցիալական քաղաքականության բաղադրիչ մաս: Իհարկե է, դժվար է չհամաձայնել հեղինակի հետ այն հարցի շուրջ, որ սոցիալական պաշտպանության և սոցիալական քաղաքականության միջև գոյություն

⁴⁹Անտոնյան Մ., Երեխաների սոցիալական պաշտպանության համակարգի զարգացումը Հայաստանում. պատմասոցիոլոգիական տեսանկյուն, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2004թ., էջ 8:

⁵⁰Տե՛ս Բաբայան Ա., Հայաստանի սոցիալական ապահովության ռազմավարության սոցիոլոգիական վերլուծություն, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2001թ., էջ 8:

ունի որոշակի փոխկապվածություն, սակայն տվյալ ատենախոսության շրջանակում սոցիալական պաշտպանությունը դիտվում է որպես նպատակ, որին հնարավոր է հասնել սոցիալական քաղաքականության միջոցով:

Այսպիսով, ընդհանրացնելով «բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթի տարրեր մեկնաբանությունները՝ դրանք կարելի է պայմանականորեն խմբավորել երկու խմբում: Առաջին խմբում ներառված մեկնաբանությունների համաձայն՝ որպես սոցիալական պաշտպանության օբյեկտ հանդես են գալիս միայն կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված մարդիկ: Սակայն սոցիալական պաշտպանության էությունը կայանում է նաև քաղաքացիների տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ իրավունքների պաշտպանության մեջ: Այդ իսկ պատճառով սոցիալական պաշտպանությունը, ըստ երկրորդ խմբում ընդգրկված մեկնաբանությունների, չպետք է դիտել որպես բնակչության միայն առավել անապահով կամ սոցիալապես անպաշտպան խմբերին վերաբերող երևույթ: Հասարակության և նրա ինստիտուտների կողմից փնտրվող ներուժի և միջոցների օգտագործման կարիքը ունեն նաև լիովին ապահովված քաղաքացիները, օրինակ, հիվանդության և բժշկական օգնության դիմելու անհրաժեշտության դեպքում:

«Բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթի բովանդակությունը սահմանելու համար անհրաժեշտ է սահմանել «սոցիալական պաշտպանություն» եզրույթի հասկացությանին ապարատում ներառված մի շարք հասկացություններ, որոնց բովանդակության սպառիչ բացահայտումն ու ճշգրիտ սահմանումը առանցքային նշանակություն ունեն այս եզրույթը սահմանելու համար:

Սոցիալական պաշտպանության վերաբերյալ թե՛ հայրենական, և թե՛ օտարերկրյա մասնագիտական գրականության մեջ բացակայում են անկյունաքարային նշանակություն ունեցող հետևյալ հասկացությունների՝ «սոցիալական ռիսկ», «սոցիալական քաղաքականություն», «սոցիալական խոցելիություն», «սոցիալական պաշտպանվածություն», «սոցիալական անվտանգություն», միասնական ընդունելի սահմանումներ, որի պատճառով դրանց կիրառման ժամանակ երբեմն շփոթ է առաջանում: Յուրաքանչյուր հեղինակ տալիս է այս կամ այն հասկացության իր մեկնաբանությունն ու սահմանումները, որոնք թեև, որպես կանոն, ունեն իմաստային

համանման ծանրաբեռնվածություն, սակայն հաճախ ամբողջովին նույնական չեն: Ուստի փորձենք ընդհանրացված ներկայացնել նշված խնդրի վերաբերյալ որոշ հետազոտողների բացատրությունները, գիտական գրականության մեջ տեղ գտած սահմանումները, բերված բացատրությունները և սոցիալական պաշտպանության մեր սահմանումը:

«Բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթի բովանդակությունը քննարկելիս՝ կարևոր է անդրադառնալ այնպիսի եզրույթի, ինչպիսին «*սոցիալական ռիսկն*» է:

Ս. Աստվածատուրովը սոցիալական ռիսկի բովանդակությունը սահմանում է սոցիալական ստատիկայի և սոցիալական դինամիկայի տեսանկյունից. մասնավորապես՝ առաջին դեպքում սոցիալական ռիսկը կարող է սահմանվել որպես սոցիալական վտանգի իրավիճակ, իսկ երկրորդ դեպքում՝ որոշակի գործողությունների ամբողջություն՝ ուղղված ինչպես սոցիալական համակարգի (հասարակության), այնպես էլ առանձին սոցիալական խմբերի նպատակների իրականացմանը⁵¹:

Ս. Աստվածատուրովը ռիսկերի սոցիալական իրականությունը դիտում է որպես սոցիալական հիմնախնդիրների իրականություն⁵², իսկ սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում կարևորվում է սոցիալական քաղաքականության դերը:

Ռիսկ» հասկացությունը լայն իմաստով իր մեջ ներառում է կառուցվածքային տարրեր, որոնք կրկնվում են «սոցիալական ռիսկ» կատեգորիայում, ուստի նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձը, սոցիալական խմբերը հանդիսանում են ռիսկի սուբյեկտ, կարող ենք *սոցիալական ռիսկը մեկնաբանել որպես անձի, սոցիալական խմբերի գործունեությունը կամ դրանից հրաժարվելը (անգործությունը) անորոշության պայմաններում, որը նրանցից պահանջում է սեփական գործողությունների գնահատում, անհրաժեշտ սոցիալական որակների մշակում, ինչպես նաև սոցիալական գործոնների ազդեցության հաշվարկում և կառավարում, որոնք կարող են բացասաբար ազդել անձանց, սոցիալական խմբերի կենսագործունեության վրա:*

⁵¹Տե՛ս Аствацатуров С. В. Реальность социального риска или риск социальной реальности // «Изменяющееся общество», N 1, 2, Ереван, 1998, էջ 2:

⁵² Տե՛ս նույն տեղը:

Ըստ էության «սոցիալական պաշտպանություն» հասկացության սահմանման ժամանակ կարևորվող հաջորդ հասկացությունը «սոցիալական քաղաքականությունն է»: Առավել ընդունված սահմանումներից մեկի համաձայն՝ «...սոցիալական քաղաքականությունը սոցիալական հիմնախնդիրների կոլեկտիվ լուծման ռազմավարություն է»⁵³: Սոցիալական քաղաքականության համակողմանի իրագործումը քաղաքացիների ցանկացած կատեգորիայի նկատմամբ նշանակում է վերջիններիս սոցիալական պաշտպանության իրականացում: Ըստ էության քաղաքացիների սոցիալական պաշտպանությունը նպատակ է, որին հասնելու համար սոցիալական քաղաքականությունը դիտվում է որպես միջոց, և հետևաբար, սոցիալական քաղաքականության միջոցառումների իրագործման միջոցով իրականանում է սոցիալական պաշտպանությունը:

«Բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթի բովանդակությունը քննարկելիս՝ կարևոր է նաև անդրադառնալ այնպիսի եզրույթի, ինչպիսին «սոցիալական խոցելիությունն» է: Խոցելիություն անվանում են այն վիճակը, երբ տարբեր կարողությունների սահմանափակության պատճառով կամ որոշակի սոցիալական պայմաններ առաջանալու հետևանքով մարդկանց և սոցիալական խմբերի պահանջմունքների բավարարումը վտանգվում է: Օրինակ՝ խոցելիությունը կարող է պայմանավորված լինել ֆիզիկական կարողությունների սահմանափակմամբ՝ բնածին և ձեռքբերովի ֆիզիկական արատներ կամ էլ սեռային, տարիքային, ազգային և այլ խտրականության հետևանքով և այլն: Սոցիալական խոցելիությունը կարող է առաջանալ ոչ ճիշտ քաղաքականության, հասարակության մեջ առկա կարծրատիպերի պատճառով և այլն:

Այսպիսով, *սոցիալապես խոցելի վիճակը* կարելի է սահմանել որպես օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով անհատների և խմբերի կյանքում առաջացող այնպիսի վիճակ, երբ նրանց կենսական պահանջմունքների բավարարումը վտանգվում է:

Բնակչության սոցիալական պաշտպանության եզրույթի կատեգորիալ շարքը քննարկելիս՝ կարևոր է անդրադառնալ այնպիսի եզրույթի, ինչպիսին «սոցիալական

⁵³Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում.-Եր., Տիգրան Մեծ, 2006թ., էջ 12:

անվտանգությունն» է: Վերջինս ուսումնասիրվում է սոցիալ-հումանիտար տարբեր գիտությունների կողմից, բայց առավելապես կարևորվում է փիլիսոփայության, հոգեբանության և սոցիոլոգիայի շրջանակներում:

Սոցիոլոգներն այս եզրույթը կիրառում են անվտանգության սոցիոլոգիայի շրջանակում, որի առարկան հասարակության կայուն զարգացումը խաթարող ռիսկի գործոնների, վտանգների, ինչպես նաև անվտանգության տարբեր տեսանկյունների ուսումնասիրումն է: Այսօր գիտական գրականության մեջ կարելի է հանդիպել սոցիալական անվտանգության տարբեր ձևերի, ինչպես օրինակ՝ ազգային, տնտեսական, քաղաքական, տեղեկատվական, միգրացիոն, ժողովրդագրական, տարածաշրջանային և այլն:

Փիլիսոփայական մոտեցման շրջանակում սոցիալական անվտանգությունը դիտվում է որպես սոցիալական երևույթ: Սակայն, ըստ Ն. Ն. Ռիբալկինի՝ այս երևույթի օբյեկտիվ էությունը, որի վրա հիմնվելով՝ կարելի էր հստակ սահմանել «անվտանգություն» հասկացությունը, առ այսօր փիլիսոփայության մեջ բացահայտված չէ՝ չնայած առկա բազմաթիվ սահմանումների⁵⁴:

Ռիբալկինի կարծիքով անվտանգությունը՝ որպես սոցիալ-փիլիսոփայական կատեգորիա, չի կարող ուսումնասիրվել միայն պաշտպանված լինելու վիճակի տեսանկյունից, քանի որ այն նաև որոշակի համակարգի հատկանիշ է, ինչպես նաև որոշակի համակարգերի գործառնման հանրագումարային արդյունք⁵⁵:

Մեկ այլ հետազոտողի՝ Ա. Ե. Շարիխինի կարծիքով, անվտանգությունը՝ որպես փիլիսոփայական կատեգորիա, ենթադրում է նաև մարդկության գոյության ապահովմանը ուղղված գործունեություն, և ոչ թե պարզապես այդ գործունեության արդյունքը⁵⁶: Սոցիալական անվտանգության և սոցիալական համակարգի միջև առկա է սերտ փոխկապվածություն, մասնավորապես՝ համակարգի ինքնապահպանման և ինքնավերարտադրման հատկանիշները հանդես են գալիս որպես հասարակության անվտանգության հիմք: Համապատասխանաբար, մարդկության գոյությունը վտանգող աղբյուր է սոցիալական համակարգի՝ ինքնապահպանման և ինքնավերարտադրման

⁵⁴ Ст'у Рыбалкин Н.Н. Философия безопасности. М.: Московский психолого-социальный институт, 2006, էջ 16-17:

⁵⁵ Ст'у նույն տեղը:

⁵⁶ Ст'у Шарихин А.Е. Безопасность как философская категория // Безопасность. 1994. № 6, էջ 114:

կարողությունների նվազումը: Այլ կերպ ասած, սոցիալական համակարգի վիճակի փոփոխությունը որոշակի վտանգի առկայության ազդանշան է, որը կարող է խարխուլել համակարգը: Դա կարող է տեղի ունենալ ինչպես մարդու միջամտության, այնպես էլ արտաքին ուժերի ազդեցության արդյունքում, որոնք կարող են խախտել համակարգի հավասարակշռությունը:

Փիլիսոփայության մեջ անվտանգության երևույթի էության բացահայտման գործում կարևորվում է նաև «վտանգ» և «անվտանգություն» կատեգորիաների միջև դիալեկտիկական կապը, քանի որ ենթադրվում է, որ բոլոր սոցիալական համակարգերը ենթարկվում են որոշակի վտանգների, վտանգը բացարձակ է, իսկ անվտանգությունը՝ հարաբերական, քանի որ դրսևորվում է այլ երևույթների հետ փոխհարաբերություններում և կախված է դրանցից: Փաստորեն, «սոցիալական անվտանգություն» հասկացությունը չի կարող գիտական վերլուծության առանձին միավոր հանդիսանալ՝ առանց հաշվի առնելու «վտանգ-անվտանգություն» դիալեկտիկական կարևոր կապը, ինչը պայմանավորված է այն բանի ըմբռնմամբ, որ իրենց միասնությամբ և հակադրությամբ վտանգն ու անվտանգությունը ապահովում են սոցիալական համակարգի ամբողջականությունն ու կայուն զարգացումը: Թերևս այս գաղափարն է կարևորվում սոցիալական անվտանգության ուսումնասիրման փիլիսոփայական մոտեցման շրջանակում:

Փիլիսոփայական մոտեցումից էականորեն տարբերվող սոցիալական անվտանգության ուսումնասիրման հոգեբանական մոտեցման շրջանակում կարևորվում է միջանձնային փոխհարաբերությունների և անձի հոգեկան կառուցվածքի ուսումնասիրումը: Անվտանգության երևույթի հոգեբանական վերլուծության հիմնական նպատակը հոգեբանական այնպիսի մեթոդների մշակումն է, որոնց կիրառման դեպքում հնարավոր է հասնել անձի պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը սոցիալական անկայունության պայմաններում⁵⁷:

Սոցիալական անվտանգությունը արտացոլում է հասարակության գործառման փոփոխականությունը և վերջինիս՝ բնական և տեխնածին միջավայրերի հետ փոխազդեցությունը: Սոցիալական անվտանգությունը ենթադրում է անձի, սոցիալա-

⁵⁷Ст'у Руськина Е.Н. Психологическая безопасность личности: теория и технология формирования // Российский научный журнал. 2011, № 23, էջ 230–235:

կան խմբերի, հասարակության կենսական կարևոր շահերի պաշտպանվածությունը արտաքին և ներքին վտանգներից: Փաստորեն այն առաջին հերթին ենթադրում է մարդու իրավունքների իրականացում⁵⁸: Անձի սոցիալական անվտանգության ապահովման տեսանկյունից կարևորվում է սոցիալական ռիսկերի կանխարգելումը, որը հնարավոր է իրականացնել բնակչության սոցիալական պաշտպանության միջոցով:

«Բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթի կատեգորիալ շարքը քննարկելիս կարևոր է նաև անդրադառնալ այնպիսի եզրույթի, ինչպիսին *«սոցիալական պաշտպանվածությունն»* է: Վերջինս, ինչպես և սոցիալական պաշտպանությունը, այնպիսի կատեգորիա է, որը գիտական և մասնագիտական գրականության շրջանակներում միանշանակորեն չի մեկնաբանվում: Սոցիալական պաշտպանվածությունը մի կատեգորիա է, որը անմիջականորեն կապված է կենսագործունեության բոլոր ոլորտներում մարդկանց հիմնարար իրավունքների և շահերի պաշտպանվածության իրական երաշխիքների հետ: Սոցիալական պաշտպանվածությունը ոչ միայն անձի կենսական կարևոր պահանջմունքների բավարարման հնարավորությունների ցուցանիշ է, այլ, նախ և առաջ, պաշտպանվածության անհրաժեշտությունը բխում է պետությունում որոշակի օրենսդրական համակարգ ունենալու հասարակական պահանջմունքից, որը կփոխհատուցի նյութական բարիքներ արտադրող և բաշխող կազմակերպությունների գործունեության բացթողումները: Հետևաբար, սոցիալական պաշտպանվածության էությունը կայանում է նաև քաղաքացիների տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ իրավունքների ու շահերի օրենսդրական և իրական ապահովման մեջ: Վերոհիշյալ կատեգորիայի նման մեկնաբանումը նորմատիվ երանգ է պարունակում: Սակայն ինչպես վկայում է միջազգային փորձը, սահմանադրության մեջ քաղաքացիների իրավունքները միայն ձևակերպված են: Մինչդեռ այդ իրավունքների իրացումը հիմնախնդիր է, որը պետք է լուծել: Հետևաբար, *սոցիալական պաշտպանվածությունը մարդու իրավունքների և ազատությունների ողջ համախմբության սահմանադրական, օրենսդրական և իրական ապահովումն է*: Սոցիալական

⁵⁸St' u Rimashевская Н. М. Человеческий потенциал России и проблемы «сбережения населения» // Рос. Экон. Журн., 2004, N 9-10, էջ 22-40:

պաշտպանվածությունը անհատի և հասարակության փոխազդեցության հիմքն է, մարդկանց սոցիալական ինքնազգացողության կարևոր չափանիշներից մեկը:

Հարկ է նշել, որ սոցիալական պաշտպանության հիմնախնդրի ուսումնասիրմամբ զբաղվող որոշ հետազոտողներ չեն անդրադառնում սոցիալական պաշտպանվածությանը, իսկ նրանք, ովքեր կարևորում են դա, տարբեր կերպ են մեկնաբանում վերջինիս բովանդակությունը: Մի շարք դեպքերում «սոցիալական պաշտպանություն» և «սոցիալական պաշտպանվածություն» եզրույթները նույնանում են բովանդակային տեսանկյունից:

«Սոցիալական պաշտպանվածությունը» բազմակողմ եզրույթ է: Իրավագիտական գրականության մեջ անձի սոցիալական պաշտպանվածությունը մեկնաբանվում է որպես մարդու իրավունքների պաշտպանությանը ուղղված իրավական, քաղաքական, տնտեսական, կազմակերպական բնույթի միջոցառումների ամբողջություն: Սոցիոլոգիական հետազոտություններում բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը գնահատելու նպատակով կիրառվում են սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող կամ օբյեկտիվ ցուցանիշները, կամ սուբյեկտիվ գնահատականները⁵⁹: Եթե օբյեկտիվ ցուցանիշները ենթադրում են կենսական կարևոր պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ իրական պայմանների առկայությունը, ապա սուբյեկտիվ գնահատականների ներքո ի նկատի ունեն այն, թե ինչպես են ընկալվում և գնահատվում այդ իրական պայմանները անձի կողմից: Բնականաբար օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականները հաճախ չեն համընկնում, երբեմն կարող են համընկնել, իսկ երբեմն էլ՝ կարող են հակասական բովանդակություն ունենալ: Այդուհանդերձ սուբյեկտիվ գնահատականները ունեն որոշակի սոցիալ-հոգեբանական հիմնավորում:

Մարդը իր սոցիալական միջավայրի փորձագետն է, ըստ այդմ՝ նրա կարծիքը իր սոցիալ-տնտեսական վիճակի մասին որոշիչ է⁶⁰: Սուբյեկտիվ գնահատականը անձի ինքնազգիտակցության բաղադրիչն է, որը կապված է անձի ապրումների, վերջինիս

⁵⁹ Տե՛ս *Ласточкина М.А.* Социальная защищенность населения России: обзор исследований последних лет. // Экономические и социальные перемены: факты, тенденции, прогноз, № 2 (26) / 2013, էջ 171-179; *Морозова Е.А.* Социальная защищенность: сущность и методы изучения, Социальная политика и социология. – 2006. – № 1, էջ 143-156:

⁶⁰ Տե՛ս *Социальная работа: теория и практика.* Под ред. Л.А.Арутюнян. Ереван, 1995, էջ 67:

կողմից սեփական ֆիզիկական ուժի, մտավոր ունակությունների, վարքի դրդապատճառների ու նպատակների, շրջապատող մարդկանց նկատմամբ վերաբերմունքի գնահատականի հետ:

Սակայն որքան էլ սուբյեկտիվ գնահատականները կարևորվեն բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը որոշելիս, այնուամենայնիվ դրանց կիրառումը անխուսափելիորեն պայմանավորված է մի շարք դժվարություններով: Ի՞նչ նկատի ունեն հարցվողները իրենց սոցիալական պաշտպանվածությունը գնահատելիս, ի՞նչ գործոնների հիման վրա են նրանք իրենց նույնականացնում այս կամ այն սոցիալական խմբի հետ⁶¹:

Բնակչության սոցիալական պաշտպանվածության ուսումնասիրմանն են նվիրված հետխորհրդային շրջանի ռուս մի շարք գիտնականների աշխատանքները: Այսպես, անձի հոգեբանական պաշտպանվածության գործոնների, հոգեբանական անվտանգության հիմնահարցերը ներկայացված են Ա. Վ. Կոտենևայի, Գ. Վ. Գրաչևի աշխատանքներում⁶²: Անձի հոգեկան առողջությանը զգալիորեն վնասող հոգեբանական վտանգների աղբյուրները քննարկված են Ե. Ն. Ռուսկինայի աշխատանքում⁶³: Լ. Ս. Գուտկինը բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը գնահատելիս կարևորում է հետևյալ ցուցանիշները՝ ամսական միջին եկամուտները, կենսաթոշակների չափերին, գործազրկության մակարդակին վերաբերող վիճակագրական տվյալները⁶⁴: Օ. Ա. Պոլյուշկևիչը առանձնացնում է բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշներ: Ըստ այս հեղինակի՝ պաշտպանվածությունը հանցագործություններից, տնտեսական կայունությունը, կյանքի որակը, սոցիալական երաշխիքները բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող օբյեկտիվ ցուցանիշներ են: Թե որքանով է անձն իրեն անվտանգ զգում տանը, քաղաքում, երկրում, ինչպես նաև

⁶¹ St' u Градосельская Г. Субъективные и объективные оценки благосостояния // Социологический журнал, 2003, № 3:

⁶² St' u Котенева А.В. Духовные ценности как фактор психологической защищенности личности // Вестник КГУ им. Н.А. Некрасова. 2008, № 4, էջ 38–44; Грачев Г.В. Информационно-психологическая безопасность личности: состояние и возможности психологической защиты. М.: РАГС, 2008:

⁶³ St' u Руськина Е.Н. Психологическая безопасность личности: теория и технология формирования // Российский научный журнал. 2011, № 23, էջ 230–235.

⁶⁴ St' u Гуткин Л.С. Человечество на рубеже веков: показатели социально-экономического развития стран мира. М., 2003:

ընտանիքի անդամների, հարևանների, ղեկավարության, քաղաքական գործիչների նկատմամբ վստահության մակարդակը Օ. Ա. Պոլյուշկևիչի կարծիքով բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող սուբյեկտիվ ցուցանիշներ են⁶⁵: Ն. Ի. Լապինը և Լ. Ա. Բելյանան մշակել են բնակչության սոցիալական ինքնազգացողության գնահատման ինդեքս, որը սոցիալական պաշտպանվածություն, կյանքից բավարարվածություն, սոցիալական լավատեսություն ինդեքսների թվաբանական միջինն է⁶⁶:

1990-ական թթ.-ից սկսած տարբեր երկրներում բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը գնահատելիս կիրառվում է միջազգային հանրության կողմից ընդունված և ՄԱԿ-ի կողմից մշակված «Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսը (Human Development Index), որը չափում է երկրի մարդկային ներուժի զարգացման միջին առաջընթացը հետևյալ ցուցանիշների միջոցով՝ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԵ (Համախառն ազգային եկամուտ), մարդու առողջություն ու կյանքի սպասվող միջին տևողություն, ինչպես նաև բնակչության կրթական մակարդակ⁶⁷:

«Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսը հնարավորություն է տալիս չափելու սոցիալական պայմանները, սակայն վերջինիս վերլուծության արդյունքում հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի վերաբերյալ:

Այսպիսով, գիտական գրականության մեջ հանդիպում են «սոցիալական պաշտպանվածություն» եզրույթի տարբեր սահմանումներ, որոնք պայմանականորեն կարելի է խմբավորել երկու խմբում: Մի դեպքում սոցիալական պաշտպանվածությունը մեկնաբանվում է որպես օրենսդրորեն ամրագրված իրավունքների, ազատությունների, երաշխիքների ամբողջություն, որն ուղղված է հասարակության յուրաքանչյուր անդամի համար որոշակի կենսամակարդակի ապահովմանը: Երկրորդ դեպքում սոցիալական պաշտպանվածությունը մեկնաբանվում է որպես անձի որոշակի վիճակ, վերջինիս

⁶⁵St'u Полюшкевич О.А. Представление о социальной защищенности жителей России и Португалии // Социс, 2012, № 12, էջ 66–71:

⁶⁶St'u Лапин Н.И., Беляева Л.А. Программа и типовой инструментарий «Социокультурный портрет региона России» (Модификация – 2010), М., 2010, էջ 111:

⁶⁷ Human Development Index (HDI), <http://hdr.undp.org/en/statistics/hdi/>, 28.04.2016թ., ժամը՝ 16:18:

պահանջմունքների բավարարման, նորմալ գործառման համար անհրաժեշտ պայմանների առկայություն:

Սոցիալական պաշտպանվածությունը սոցիալական պաշտպանության համակարգի գործառման արդյունավետությունը բնորոշող կարևոր ցուցիչ է, քանի որ իրականում «...որքան բարձր է բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը, այնքան ավելի արդյունավետ է իրականացվող սոցիալական պաշտպանությունը»⁶⁸:

Սոցիալական պաշտպանվածությունը մեկնաբանող վերոհիշյալ մոտեցումները չեն հակասում միմյանց, այլ շեշտադրում են սոցիալական պաշտպանվածության այս կամ այն կողմը: Մեր կարծիքով, սոցիալական պաշտպանվածության բովանդակությունը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել վերջինիս տարբեր դրսևորումները: *Եթե սոցիալական պաշտպանվածության ներքո նկատի ունենք հասարակության բոլոր անդամների որոշակի անհրաժեշտ (պարտադիր) սոցիալական բարիքներով և ծառայություններով ապահովվածության աստիճանը, ապա այդ դեպքում կարևորվում է քաղաքացիների՝ օրենսդրորեն երաշխավորված սոցիալական որոշակի նվազագույն բարիքներից օգտվելու հավասար հասանելիության աստիճանը:*

Այսպիսով, «սոցիալական պաշտպանվածություն» և «սոցիալական պաշտպանություն» եզրույթները բովանդակային առումով սերտորեն փոխկապված են միմյանց հետ:

Ընդհանրացնելով՝ «սոցիալական պաշտպանությունը» կարող ենք սահմանել որպես պետական և ոչ պետական մարմինների կողմից իրականացվող գործողությունների ամբողջություն, որն ուղղված է սոցիալական ռիսկերի կանխարգելմանը, ինչպես նաև դրանց հետևանքների մեղմացման, վերացման միջոցով կենսագործունեության բոլոր ոլորտներում բնակչության սոցիալական անվտանգության ապահովմանը⁶⁹:

⁶⁸ Шеденков С.А. Социальная защита и условия местного самоуправления. – Белгород, 1995 ст. 28.

⁶⁹Տե՛ս Յարմալոյան Մ., «Սոցիալական պաշտպանություն» եզրույթի բովանդակությունը. կատեգորիալ վերլուծություն, // «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2016 № 2 (20), էջ 26:

1.2 Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ուսումնասիրման սոցիոլոգիական մոտեցումները

Սոցիալական պաշտպանության ուսումնասիրմանն ուղղված հետազոտությունները, որպես կանոն, միջառարկայական են: Յուրաքանչյուր գիտական ճյուղ, որը զբաղվում է սոցիալական պաշտպանության հիմնախնդրի ուսումնասիրմամբ, առանձնացնում է իր տիրույթը: Այս առումով բացառություն չէ նաև սոցիոլոգիան, որը իր հետազոտական մոտեցումն է ձևավորել սոցիալական պաշտպանության նկատմամբ:

Սոցիոլոգիան, առաջին հերթին, սոցիալական պաշտպանությունը դիտում է որպես սոցիալական համակարգ, օրգանական ամբողջություն, որը բնորոշվում է ձևավորման, կայացման, զարգացման, գործառնման սեփական օրինաչափություններով: Սոցիալական պաշտպանության համակարգի գործառնումն ու զարգացումը ընթանում է տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային, ժողովրդագրական և այլ գործընթացների համալիր ազդեցության ներքո:

Սոցիալական պաշտպանության համակարգը ձևավորող կարևոր բնութագրիչներ են՝ համակարգի ընդհանուր նպատակ(ներ)ը, համակարգի յուրաքանչյուր տարրի կողմից իր գործառույթների իրականացումը, որոնք իրենց հերթին պայմանավորված են ընդհանուր նպատակով և համապատասխան խնդիրներով, սոցիալական պաշտպանության համակարգի տարրերի միջև սուբորդինացիոն և կոորդինացիոն կապերը:

Մեր կարծիքով բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի սոցիոլոգիական վերլուծության տեսանկյունից, նախ և առաջ, նախընտրելի է կիրառել համակարգային մոտեցումը⁷⁰, քանի որ այն հնարավորություն է տալիս բացահայտել հետազոտման օբյեկտի ամբողջությունը, վերհանել դրանում առկա բազմազան կապերը և միավորել դրանք մեկ ընդհանուր տեսական մոդելում: Համակարգային մոտեցումը ենթադրում է ուսումնասիրել բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի տարրերը, վերջինիս արտաքին և ներքին կապերը, համակարգի կողմից

⁷⁰Համակարգային մոտեցման շրջանակներում սոցիալական պաշտպանության համակարգի առանձնահատկությունների վերլուծության հիմքում ընկած է ուսումնասիրվող օբյեկտի՝ որպես համակարգի, ընկալման գաղափարը:

իրականացվող հիմնական նպատակային գործառույթի որակն ու մակարդակը, բացահայտել արտաքին միջավայրից եկող «մարտահրավերները», «վտանգները», ինչպես համակարգի առանձին տարրերի (ենթահամակարգերի), այնպես էլ ամբողջ համակարգի թաքնված պահուստները (ռեզերվները) ու զարգացման հնարավորությունները: Բացի այդ, *կառուցվածքագործառույթային մոտեցման*, մասնավորապես՝ Թ. Պարսոնսի կողմից առաջարկված *AGIL սխեմայի* կիրառումը հնարավորություն է տալիս հարստացնելու և ամբողջացնելու բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի սոցիոլոգիական վերլուծությունը:

Սոցիալական պաշտպանությունը ***սոցիալական բարդ համակարգ*** է, քանի որ այն որոշակի ենթահամակարգերի կազմակերպված, ընդհանուր սկզբունքներով գործառույթ ամբողջություն է, որը գործառույթ է ոչ թե առանձին տարրերի տեսքով, այլ որպես դրանց միջև առկա փոխհարաբերությունների ամբողջական միավոր՝ համակարգ, որը մեծապես պայմանավորում է ենթահամակարգերի գործառույթների ուղղությունն ու նպատակները և փոխհարաբերությունների բնույթն ու առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ իր կառուցվածքագործառույթային առանձնահատկությունների և փոխհարաբերությունների առումով այն կրում է հիմնական ենթահամակարգերի ու դրանց միջև առկա հարաբերությունների ազդեցությունը:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի համալիր սոցիոլոգիական վերլուծության համար բավարար չէ այն դիտել միայն որպես սոցիալական համակարգ: Ավելի կոնկրետ նպատակի ձգտելով, այն է՝ համակարգի կառուցվածքային տարրերի գործառույթների, այդ տարրերի փոխհարաբերությունների, համակարգի զարգացման ներքին օրինաչափությունների ուսումնասիրությունը, անհրաժեշտ է նեղացնել հետազոտման դիտակետը և հանգել կոնկրետ մոտեցման: Այս դեպքում այդ մոտեցումը կառուցվածքագործառույթային վերլուծական մոտեցումն է, որի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն օբյեկտը, որի ուսումնասիրության նպատակով կիրառվում է այդ մոտեցումը, պետք է ունենա ստանդարտացված, ներքին հստակ կապերով կառուցվածք և լինի հասարակությունում կայուն կերպով

գործառող սոցիալական միավոր⁷¹: Հենց այդպիսի բնութագրիչներով է առանձնանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը: Կառուցվածքագործառուության մոտեցման համաձայն՝ համակարգը բաղկացած է կառուցվածքային տարրերից: Այդ տարրերը, ունենալով կարգավիճակադերային իրենց համակարգը, դառնում են *ակտորներ*, իսկ դրանց *դերակատարումը* փոխազդեցությունների և գործընթացների ամբողջությունում՝ համակարգի առանցքային բաղադրիչ⁷²: Ակտորի դերակատարման բնույթն իր հերթին կախված է համակարգում վերջինիս զբաղեցրած դիրքից, ունեցած հարաբերություններից և գործառույթներից⁷³:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ակտորների դերում հանդես են գալիս սոցիալական պաշտպանության սուբյեկտները: Որպես սոցիալական պաշտպանություն իրականացնողներ կամ ակտորներ՝ պետությունից զատ, հանդես են գալիս պետական գերատեսչությունները և հիմնարկները, ինքնակառավարման մամինները, արտաբյուջետային հիմնադրամները, հասարակական կազմակերպությունները, շահույթ հետապնդող կազմակերպությունները, քաղաքացիները և այլն:

Փաստորեն, բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում պետությունից զատ մասնակցում են նաև այլ սուբյեկտներ:

Ակտորի դերակատարումը կախված է համակարգի ֆունկցիոնալ տարբերակվածությունից, որն առաջացնում է համակարգի գործառման բաշխումը համապատասխան ենթահամակարգերի միջև: Դրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է *հստակ գործառույթների համար*:

«Գործառույթ» հասկացությունը կառուցվածքագործառության վերլուծության շրջանակներում կիրառվում է շրջակա միջավայրի հետ փոխհարաբերությունները բնորոշելու համար⁷⁴: Եթե համակարգի կառուցվածքը ներկայացնում է համակարգը ստատիկ, հարաբերականորեն կայուն վիճակում, ապա գործառույթները բնութագրում են վերջինիս դինամիկան, շարժն ու փոփոխությունները՝ արտաքին գործոնների ազդեցությունից և փոխհարաբերություններից ելնելով:

⁷¹Տե՛ս Кучеренко В. Функционалистская парадигма Роберта Мертона в современном социологическом дискурсе// Социология: теория, методы, маркетинг, 2000, N 4, էջ 81-87:

⁷² Տե՛ս Parsons T. The Social System. New York, The Free Press, 1964, էջ 25:

⁷³ Տե՛ս Parsons T. The Social System. New York, The Free Press, 1951, էջ 24:

⁷⁴ Տե՛ս Луман Н. Социальные системы. Очерк общей теории. Перевод с немецкого И. Д. Газиева. Под редакцией Н. А. Головина. СПб.: Наука, 2007, էջ 54:

Գործառույթները կարևոր դեր ունեն համակարգի ինքնապահպանման տեսանկյունից, քանի որ դրանց օգնությամբ բավարարվում են համակարգի կառուցվածքային տարրերի պահանջմունքները⁷⁵:

Ռ. Մերթոնը գործառույթը սահմանում է որպես համակարգի գործառման օբյեկտիվ հետևանքների ամբողջություն, որոնք կախված են համակարգի ինքնակառավարման ունակություններից և միջավայրի հետ ունեցած հարաբերությունների բնույթից⁷⁶: Հիմք ընդունելով բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի գործառման օբյեկտիվ հետևանքները և ազդեցությունը հարակից սոցիալական համակարգերի գործառման վրա, կարելի է առանձնացնել սոցիալական պաշտպանության համակարգի *այնպիսի գործառույթներ*, ինչպիսիք են.

- Կանխարգելիչ գործառույթը, որն ուղղված է սոցիալական ռիսկերի, ռիսկային իրավիճակների կանխարգելմանը:
- Ապահովող գործառույթը, որը ենթադրում է հետևյալը. եթե հնարավոր չէ կանխել ռիսկային իրավիճակների առաջացումը, ապա կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված մարդկանց մատուցվում են մի շարք դրամական (նպաստներ, կենսաթոշակներ) և ոչ դրամական ծառայություններ (սոցիալական ծառայություններ):
- Փոխհատուցող գործառույթը, որը ենթադրում է հետևյալը. այն դեպքերում, երբ քաղաքացուն պատճառվել է նյութական կամ բարոյական վնաս պետական և ոչ պետական մարմինների անօրինական գործողությունների կամ անգործության հետևանքով, ապա այն փոխհատուցելու անհրաժեշտություն է առաջանում⁷⁷:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը ուսումնասիրելիս՝ անհրաժեշտ է անդրադառնալ վերջինիս գործառման սկզբունքներին: Մասնագիտական գրականության շրջանակներում առանձնացվում են բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի գործառման հետևյալ սկզբունքները՝

⁷⁵ Տե՛ս Parsons T. The Social System. New York, The Free Press, 1951, էջ 27:

⁷⁶ Տե՛ս Мертон Р. Социальная теория и социальная структура (фрагменты) / Под общ. ред. В. В. Танчера.- К.: Ин-т социол., 1996., էջ 43:

⁷⁷ Տե՛ս Бодганова О. Ю. Функции социальной защиты населения в условиях рыночной экономики. Международный научный журнал «Символ науки», № 1, 2016, էջ 76:

- *սոցիալական գործընկերության սկզբունքը*, համաձայն որի, սոցիալական հիմնախնդիրների հաղթահարումը ենթադրում է պետությունից զատ այլ շահագրգիռ սուբյեկտների հետ համագործակցություն,
- *տնտեսական արդարության սկզբունքը*, որը ենթադրում է սոցիալ-տնտեսական աջակցության տրամադրում այն անձանց, ովքեր օբյեկտիվ պատճառներով չեն կարող ցուցաբերել տնտեսական ակտիվություն,
- *հարմարվելու կարողության սկզբունքը*, որի ներքո ի նկատի ունեն սոցիալական պաշտպանության համակարգի ինքնազարգացման և ինքնակատարելագործման կարողությունը⁷⁸:

Ի լրումն վերոնշյալ սկզբունքների՝ կարևոր է նշել, որ

- սոցիալական պաշտպանության համակարգը, որպես կանոն, երաշխիքներ է տրամադրում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում,
- այս կամ այն երկրի բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը, որպես կանոն, հիմնվում է տվյալ երկրի սոցիալ-մշակութային համատեքստի վրա:

Բնակչության սոցիալական պաշտպանության օրգանական համակարգում⁷⁹ յուրաքանչյուր տարր ենթադրում է մյուսի գոյությունը: Սոցիալական պաշտպանության՝ որպես օրգանական համակարգի, ճանաչողության գործընթացը չի կարող իրականացվել միայն ուսումնասիրելով սոցիալական պաշտպանության համակարգի առանձին տարրերը: Այն հարցին պատասխանելու համար, թե ինչու՞մն է կայանում այս կամ այն սոցիալական համակարգի՝ որպես օրգանական ամբողջության բովանդակությունը, անհրաժեշտ է բացահայտել համակարգը ձևավորող այն կապը, որի միջոցով ստեղծվում և զարգանում է այդ ամբողջությունը: Այլ կերպ ասած, բնակչության

⁷⁸ Տե՛ս Аверин А.Н. Государственная система социальной защиты населения: – М.: Изд-во РАГС, 2010:

⁷⁹ Իր տեսության շրջանակներում Բաքլին առանձնացնում է համակարգերի հետևյալ տեսակները՝ *սոցիոմշակութային, մեխանիկական և օրգանական*: Օրգանական համակարգերում տարրերի միջև փոխհարաբերությունները ավելի շատ հիմնվում են տեղեկատվության, քան թե էներգիայի փոխանցման վրա:

սոցիալական պաշտպանության համակարգի յուրահատուկ բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է սահմանել վերջինիս *նպատակը*⁸⁰:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի նպատակները տարբեր կերպ են սահմանվում տարբեր մոտեցումների շրջանակներում՝ սկսած մարդու իրավունքների իրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումից մինչև բնակչության կենսամակարդակի բարձրացում, սոցիալական պաշտպանվածության, բարեկեցության ապահովում⁸¹: Սոցիալական պաշտպանության համակարգի գործառման նպատակներին առնչվող տարբեր սահմանումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական, առաջնային նպատակը բնակչության պաշտպանությունն է տարբեր սոցիալական ռիսկերից:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգերը առկա են շուկայական տնտեսություն ունեցող բոլոր երկրներում: Դրանք ձևավորվել են «որոշակի փորձերի ու ձախողումների» արդյունքում տևական ժամանակահատվածի ընթացքում և ուղղված են եղել որոշակի սոցիալական հիմնախնդիրների լուծմանը: Այդ իսկ պատճառով տարբեր երկրների սոցիալական պաշտպանության համակարգերը տարբերվում են միմյանցից:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը բարդ կառուցվածք ունի. համակարգի յուրաքանչյուր տարր յուրահատուկ է և որոշակի դերակատարում ունի բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում: Տարբեր հեղինակներ առանձնացնում են սոցիալական պաշտպանության համակարգի տարբեր տարրեր⁸²:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի հետևյալ հիմնական տարրերը, որոնք

⁸⁰Տե՛ս Աստազատուրով Ս. Վ., О специфике социологического познания социальной политики. Научные работы. Общественные науки. - Праг 1-Лингва, 2002, էջ 49:

⁸¹Տե՛ս Нечуйкина Е. В. Социальная защита: понятие, категории, терминология // Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена, № 49 / 2008, էջ 148:

⁸²Տե՛ս Бабич А.М., Егоров Е.В., Жильцов Е.Н. Социальное страхование в России и за рубежом. М., 1998; Черноморченко Н.П. Право социального обеспечения. Саратов, 2000; Hiroi Y., Evaluations of health policy and social protection in Japan, 2005:

հանդիսանում են նաև սոցիալական պաշտպանության համակարգի առանձին ենթահամակարգեր՝

- սոցիալական ապահովագրությունը,
- սոցիալական օգնությունը,
- սոցիալական ծառայությունները,
- բնակչության առանձին խմբերի (երեխաներ, տարեցներ, հաշմանդամներ և այլն) սոցիալական պաշտպանության համակարգերը,
- զբաղվածությունը⁸³:

Սոցիալական ապահովագրությունը ենթադրում է աշխատանքային եկամտի կորստի փոխհատուցումը: Վերջինս, որի հիմքում ընկած է սոցիալական ռիսկերի պարտադիր և կամավոր ապահովագրության պահանջը, լայնորեն կիրառվում է շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Սոցիալական ապահովագրության վճարումների ֆինանսավորումը իրականացվում է աշխատող քաղաքացիների և նրանց գործատուների ապահովագրական վճարների հաշվին: Սոցիալական ապահովագրության համակարգի ֆինանսավորմանը երբեմն մասնակցում է նաև պետությունը:

Սոցիալական օգնությունը ենթադրում է անհրաժեշտ նվազագույն եկամուտ ունենալու երաշխիքների տրամադրում նրանց, ովքեր չունեն և չեն էլ ունենալու աշխատանքային եկամուտ: Ընդ որում սոցիալական օգնության ներքո նկատի ունեն կամ միայն ըստ կարիքավորության տրամադրվող դրամական օգնությունը, կամ էլ լայն իմաստով՝ և՛ դրամական ծառայությունները, և՛ անվճար բժշկական սպասարկումը, և՛ երեխաներին, տարեցներին, հաշմանդամներին մատուցվող մի շարք այլ ոչ դրամական ծառայությունները⁸⁴:

Սոցիալական ապահովագրությունն ու սոցիալական օգնությունը իրենց հերթին հանդես են գալիս՝ որպես *սոցիալական ապահովության համակարգի փարրեր*: Սոցիալական ապահովությունը ուղղված է անաշխատունակ անձանց: Դրա հիմնական հատկանիշներն են՝ ծախսերի ֆինանսավորումը պետական բյուջեի հաշվին և ապահովվող անձանց խմբերի ու նրանց ապահովության մակարդակի սահմանումը

⁸³ Տե՛ս Холостова Е. И. Социальная политика и социальная работа.–4-е изд., перераб. и доп. М.: Издательско-торговая корпорация «Дашков и К^о», 2011, էջ 170:
⁸⁴ Տե՛ս Грачева О. Место социальной поддержки населения в региональной социальной политике: методологический аспект // Человек и труд. – 2008. – № 1, էջ 9-12; Холостова Е. И., նշվ. աշխ., էջ 175:

իշխանության մարմինների կողմից սահմանված առաջնահերթություններին համապատասխան⁸⁵:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի մեկ այլ տարր են *սոցիալական ծառայությունները*: Ժամանակակից պետություններում բնակչության սոցիալական ծառայությունների ենթահամակարգը հիմնվում է մարդասիրության սկզբունքի առաջնայնության վրա՝ նկատի ունենալով այն, որ հասարակությունը միատարր չէ և առկա են իրենց պահանջմունքները բավարարելու խիստ տարբեր հնարավորություններ ունեցող խմբեր, իսկ պետական սոցիալական քաղաքականության նպատակը տարբեր սոցիալական խմբերի շահերի և հարաբերությունների համադրումն է, կայունացումը և համաձայնեցումը: Այս նույն տրամաբանությամբ, սոցիալական ծառայությունների ենթահամակարգը ներառում է սոցիալական ծառայություններ տրամադրող սուբյեկտների և նրանց կողմից հասարակության անդամներին տրամադրվող տարաբնույթ սոցիալական ծառայությունների ամբողջությունը:

Այսպիսով, սոցիալական ծառայությունը որևէ անձի կամ հաստատության (սոցիալական ծառայության սուբյեկտ) կողմից հասարակության անդամների (սոցիալական ծառայության օբյեկտ/սուբյեկտ) սոցիալական պաշտպանությունը ապահովող պահանջմունքների բավարարմանը կամ այդ բավարարմանը խանգարող գործոնների հաղթահարմանը ուղղված նպատակադիր գործունեությունն է⁸⁶:

Հարկ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ «սոցիալական ծառայություն» հասկացությունից զատ օգտագործվում է նաև «սոցիալական սպասարկում» հասկացությունը: Իրականում բավականին դժվար է տարբերակել «սոցիալական ծառայություն» և «սոցիալական սպասարկում» հասկացությունները ու դրանց ընդգրկման շրջանակները⁸⁷: Ուստի որոշակի վերապահումներով, այս երկու հասկացությունները կարող են օգտագործվել որպես հոմանիշներ:

⁸⁵St'u Шарин В. «Социальное обеспечение» – понятие, требующее уточнения // Социальное обеспечение. – 2005. – № 6, էջ 36-39:

⁸⁶St'u Kerlin A. Janelle, Social Service Reform in the Post-communist State: Decentralization in Poland, 2005:

⁸⁷St'u Кривко С.Р. Управление системой социального обслуживания на региональном уровне // Социальное обслуживание. – 2005. – № 4, էջ 26-29:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են սոցիալական ծառայությունների տարբեր տիպաբանումներ, սակայն ելնելով ատենախոսության խնդիրներից՝ կարևորում ենք սոցիալական ծառայությունների տիպաբանումը ըստ մասնագիտացման աստիճանի: Ըստ այդմ՝ առանձնացվում են սոցիալական ծառայությունների հետևյալ տեսակները՝

սոցիալ-վարչարարական ընդհանրական ծառայություններ, որոնք ուղղված են սոցիալական պաշտպանությանը, սակայն որոնց տրամադրումը կապված է անհատի օբյեկտիվ պահանջմունքների բավարարման անհրաժեշտության հետ և չի պահանջում վերջինիս հետ անհատական աշխատանք (օրինակ՝ տարիքային և հաշմանդամության թոշակների, գործազրկության նպաստի նշանակում և այլն),

մասնագիտական սոցիալական ծառայություններ, որոնք ենթադրում են շահառուների պահանջմունքների ավելի խորը մասնագիտական գնահատում, սակայն կարող են ուղղված լինել ինչպես սոցիալական խնդիրներ ունեցող, այնպես էլ խնդիրներ չունեցող մարդկանց (օրինակ՝ կրթական, առողջապահական ծառայություններ և այլն),

նեղ մասնագիտական սոցիալական ծառայություններ, որոնք ենթադրում են հատուկ կարիքներ ունեցող խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ ավելի խորը, երկարատև աշխատանք, շահառուի կարիքների ամբողջական և մանրամասն գնահատում, սոցիալական աշխատողի ծառայություններ (օրինակ՝ տարեցների և հաշմանդամների սպասարկման կենտրոնների, երեխաների պաշտպանությանն ուղղված կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունները և այլն)⁸⁸:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի տարրերի գործառման տեսանկյունից կարևորվում է *սոցիալական պաշտպանության իրավանորմատիվային ենթահամակարգը*, որն իրենից ներկայացնում է սոցիալական պաշտպանության համակարգի գործառումը կարգավորող իրավանորմատիվային ակտերի ամբողջությունը:

Սոցիալական պաշտպանության համակարգը պաշտպանում է մարդկանց և խմբերին ոչ միայն որոշակի դժվարին իրավիճակներում, այլև փորձում է կանխարգելել այդպիսի իրավիճակների առաջացումը: Այս առումով կարևորվում է այն հարցը, թե

⁸⁸Տե՛ս Kerlin A. Janelle, Social Service Reform in the Post-communist State: Decentralization in Poland, 2005:

ինչպես է կազմակերպվում ամբողջ բնակչության, այդ թվում նաև առանձին խմբերի սոցիալական պաշտպանությունը: Ըստ էության, յուրաքանչյուր հասարակություն կիրառում է սոցիալական պաշտպանության իր ձևերը կամ մեխանիզմները՝ ելնելով զարգացման իր մակարդակից: Սոցիալական պաշտպանությունը իրականացվում է տարբեր ձևերով, ներառյալ՝ գործատուների անհատական պատասխանատվությունը, սոցիալական ապահովագրությունը, հասցեական սոցիալական օգնությունը, պետական սոցիալական ապահովությունը և այլն: Սոցիալական պաշտպանության այս կամ այն ձևի կիրառումը կարող է առաջացնել տնտեսական և սոցիալական տարբեր հետևանքներ, որոնք անպայման պետք է հաշվի առնել:

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը առանձնացնում է սոցիալական պաշտպանության կազմակերպման հետևյալ ձևերը՝ սոցիալական ապահովագրություն, սոցիալական օգնություն, պետական ուղղակի ապահովություն պետական բյուջեի միջոցների հաշվին, ընտանեկան նպաստներ, լրացուցիչ ապահովագրություն գործատուների միջոցների հաշվին, ոչ պետական և լրացուցիչ ծրագրեր, բարեգործություն⁸⁹: Հարկ է նշել, որ ԱՄԿ-ը, առանձնացնելով բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպման վերոհիշյալ ձևերը, խիստ պրակտիկ մոտեցում է ցուցաբերում:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը գործառու է համապետական, տարածաշրջանային (մարզային), համայնքային մակարդակներում⁹⁰: Համապետական և տարածաշրջանային (մարզային) մակարդակներում սոցիալական պաշտպանության համակարգը գործառու է ինստիտուցիոնալ մի շարք ենթահամակարգերի միջոցով, որոնցից մասնագիտական գրականության մեջ առավելապես կարևորվում են սոցիալական պաշտպանության իրականացման պետական, հասարակական և մասնավոր սեկտորները՝ որպես բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի առանձին ենթահամակարգեր⁹¹:

Քննարկենք վերոնշյալ ենթահամակարգերից յուրաքանչյուրը առանձին:

⁸⁹Տե՛ս World Social Protection Report 2014/15: Building economic recovery, inclusive development and social justice International Labour Office – Geneva: ILO, 2014:

⁹⁰Տե՛ս Хамидуллин Н. К вопросу о понятиях «социальная политика» и «социальная защита населения» //Вестник ОГУ #7 (168), 2014, էջ 47:

⁹¹Տե՛ս Alcock, P., May, M. and Wright, S. (eds) (2012), The Student's Companion to Social Policy, 4th edn, Oxford: Blackwell:

Սոցիալական պաշտպանության իրականացման պետական սեկտորը՝ որպես սոցիալական պաշտպանության համակարգի ենթահամակարգ-Այս ենթահամակարգի կարևոր տարրերից են սոցիալական քաղաքականություն մշակող համապատասխան պետական մարմինները/գերատեսչությունները և սոցիալական ծառայություններ մատուցող պետական կազմակերպությունները: Ընդհանուր առմամբ այս ենթահամակարգը իր գործառնամբ կոչված է նաև ապահովելու սոցիալական ծառայությունների ավելի հավասարաչափ և արդար բաշխում, քան շուկան, քանի որ այն արձագանքում է մարդկանց պահանջմունքներին, այլ ոչ թե պահանջարկին, ինչը անպայմանորեն ենթադրում է քաղաքացիների վճարունակություն: Բացի այդ, այս ենթահամակարգի տարր հանդիսացող պետական սոցիալական գործակալությունների գործունեությունը ունի որոշակիության (ծառայությունների մատուցման առումով) և շարունակականության (գոյատևման ժամանակահատվածի առումով) ավելի մեծ աստիճան, քան շահույթ հետապնդող և հասարակական կազմակերպությունները, քանի որ պետությունը ունի հարկահավաքում իրականացնելու իրավունք, ինչը նշանակում է պետության ֆինանսական ռեսուրսների կայունություն: Իսկ վերոնշյալ կազմակերպությունները ֆինանսավորվում են հիմնականում պետական բյուջեի միջոցներից:

Սոցիալական պաշտպանության իրականացման մասնավոր սեկտորը՝ որպես սոցիալական պաշտպանության համակարգի ենթահամակարգ-Վերջին տասնամյակներում աշխարհի զարգացած երկրներում բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում պետությունից զատ կարևորվում է այլ սուբյեկտների մասնակցությունը: Այդ սուբյեկտներից է նաև սոցիալական պաշտպանության իրականացման մասնավոր սեկտորը: Այս ենթահամակարգի կարևոր տարրերից են սոցիալական ծառայություններ մատուցող շահույթ հետապնդող կազմակերպությունները, ինչպես նաև «գնորդները»՝ ներկա և ապագա շահառուները, ովքեր միմյանց հետ փոխազդեցության մեջ են մտնում սոցիալական բնույթի որոշակի ապրանքների և ծառայությունների շուրջ՝ նպաստ, կենսաթոշակ, ապահովագրություն և այլն⁹²:

⁹²Տե՛ս Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում.-Եր., Տիգրան Մեծ, 2006թ., էջ 321:

Ըստ էության, ոչ միայն սոցիալական ծառայություններ վաճառողները, այլ նաև գնորդներն են ցանկանում շահել գործարքից: Օրինակ, որպես սոցիալական ծառայությունների գնորդներ՝ հանդես են գալիս նաև գործատուները, ովքեր շահագրգռված են իրենց անձնակազմի համար ձեռքբերելու բժշկական և այլ սոցիալական ծառայություններ, որոնք նպաստում են աշխատողների աշխատունակության և արտադրողականության բարձրացմանը: Արդյունքում շահում են և՛ աշխատողները, և՛ գործատուները: Այսպես, աշխատողների տարբեր սոցիալական կարիքները բավարարվում են գործատուների աջակցությամբ տրամադրվող զանազան սոցիալական ծառայությունների շնորհիվ, իսկ գործատուները ստանում են ֆինանսական շահույթ՝ արտադրվող ապրանքների վաճառքից:

Սոցիալական պաշտպանության իրականացման հասարակական սեկտորը՝ որպես սոցիալական պաշտպանության համակարգի ենթահամակարգ-Միջազգային փորձը ցույց է տալիս, որ հասարակական սեկտորը մեծ դեր է խաղում բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում: Վերջինիս ուրվագծման համար օգտագործվում են տարբեր հասկացություններ, ինչպես օրինակ, «երրորդ սեկտոր», «կամավորական սեկտոր», «ոչ առևտրային սեկտոր» և այլն⁹³:

Վերոնշյալ ենթահամակարգի կարևոր *տարրերից են հասարակական կազմակերպությունները*, որոնք առանձնանում են մարդկանց փոփոխվող պահանջմունքներին արձագանքելու ճկունությամբ և որոշումների ընդունման գործընթացում իրենց աշխատակիցներին, ինչպես նաև շահառուներին ներգրավելու հակվածությամբ: Հասարակական սեկտորը իր մասնակցությամբ կոչված է լրացնելու սոցիալական պաշտպանության ոլորտում պետության գործունեությունը:

Համայնքային մակարդակում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը գործառում է ինստիտուցիոնալ և «ոչ ինստիտուցիոնալ» ենթահամակարգերի միջոցով: Համայնքային մակարդակում սոցիալական պաշտպանության «ոչ ինստիտուցիոնալ» ենթահամակարգը ներառում է բնակիչների փոխօգնության նպատակով ձևավորված մեխանիզմներն ու պրակտիկաները, մասնավորապես՝ պաշտպանության այն ձևերը, որոնք առանձնացվում են համայնքային հարա-

⁹³Տե՛ս Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում.-Եր., Տիգրան Մեծ, 2006թ., էջ 324-325:

բերությունների տարբեր շերտերում: Դրանք ընդգրկում են *ընտանեկան, բարեկամական, ընկերական, հարևանական հարաբերությունները*: Ըստ էության, այս ենթահամակարգի տարրերի փոխազդեցության հիմքում ընկած են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ սերը, պարտքը, փոխօգնությունը:

Սոցիալական աշխատանքի հայտնի տեսաբաններից Լ. Շուլմանը իր տեսություններից մեկում առանձնացնում է համայնքային մակարդակում սոցիալական պաշտպանության համակարգի «ոչ ինստիտուցիոնալ» ենթահամակարգի կողմից իրականացվող հետևյալ գործառույթները.

- ինստրումենտալ աջակցություն, ինչը նշանակում է, որ համայնքային կապերի ու հարաբերությունների միջոցով համայնքի անդամները կարողանում են ստանալ նյութական, հոգեբանական, խորհրդատվական աջակցություն,
- հուզական աջակցություն, որը ենթադրում է համայնքի անդամների մոտ պատկանելիության զգացման ձևավորում, համախմբվածության ապահովում, սոցիալական մեկուսացվածության կանխում,
- տեղեկատվական աջակցություն-համայնքային ոչ ձևական կապերը ծառայում են որպես բազմաթիվ հարցերի և խնդիրների վերաբերյալ համայնքի անդամներին տեղեկատվություն տրամադրող հիմնական աղբյուր,
- սոցիալական աջակցության ոչ ձևական ցանցերի ձևավորում, որոնք համայնքային մակարդակում դառնում են բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման տեսանկյունից իրական և կայուն ռեսուրս⁹⁴:

Համայնքային մակարդակում գործառող բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի առանձին ինստիտուցիոնալ ենթահամակարգ են տեղական ինքնակատավարման մարմինները: Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ՏԻՄ-երի դերակատարման նպատակը հանգեցվում է սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական նպատակի իրագործմանը:

Արդյունավետ գործառող սոցիալական պաշտպանության համակարգը ենթադրում է սոցիալական պաշտպանության համակարգի վերոնշյալ ենթահամակարգերի սերտ

⁹⁴ Տե՛ս Shulman L. The Skills of Helping Individuals, Families, Groups and Communities. USA, Peacock Publishers, 1999, էջ 764:

փոխազդեցություն, ասել է թե այս դեպքում կարևորվում է սոցիալական գործընկերության գաղափարը:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի գործառուժը ուղղված է որոշակի թիրախային խմբերի, որոնք մասնագիտական գրականության մեջ բնորոշվում են՝ *որպես սոցիալական պաշտպանության թիրախներ*: Այս տեսանկյունից կարևորվում է հետևյալ հարցադրումը. ու՞մ համար է նախատեսված սոցիալական պաշտպանությունը:

Որոշ դեպքերում *սոցիալական պաշտպանության թիրախ* կարող է հանդիսանալ *երկրի ողջ բնակչությունը*: Որոշակի սոցիալական ծրագրերի և միջոցառումների իրականացման օբյեկտ վերջին հաշվով դառնում են *որոշակի սոցիալական խմբեր*: Նրանք իրենցից ներկայացնում են սոցիալական պաշտպանության նպատակային խմբերը: Ավանդաբար առանձնացվում է երեք այդպիսի նպատակային խումբ՝

- ողջ բնակչությունը-այս տեսանկյունից սոցիալական պաշտպանությունը ենթադրում է սոցիալական անվտանգության ապահովում, սպառողների շահերի պաշտպանություն և այլն,
- բնակչության որոշակի խմբեր, ինչպես օրինակ, զինծառայողները, կրթության, առողջապահության, մշակույթի և այլ ոլորտների աշխատողները,
- բնակչության խոցելի խմբերը՝ բազմազավակ ընտանիքները, հաշմանդամություն ունեցող անձինք, գործազուրկները, երեխաները և այլն⁹⁵:

Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի վերլուծությունը *Թ. Պարսոնսի* կողմից մշակված AGIL սխեմայի⁹⁶ շրջանակներում հնարավորություն է տալիս պնդելու, որ սոցիալական պաշտպանությունը՝ որպես գործառուժ համակարգ, միավորում է իր կառուցվածքային տարրերը ոչ միայն անմիջականորեն փոխազդելով դրանց հետ, այլ նաև դրանց ֆունկցիոնալ կախվածության հիման վրա⁹⁷:

⁹⁵Տե՛ս Rodney A. Ellis. Impacting social policy: a practitioner's guide to analysis and action., Books/Cole, 2003, էջ 15:

⁹⁶Տե՛ս Парсонс Т. Понятие общества: компоненты и их взаимоотношения // THESIS (Теория и история экономических и социальных институтов и систем). Т.1. Вып. 2. Весна 1993. М.: НАЧАЛА-ПРЕСС, էջ 94-122:

⁹⁷Տե՛ս Аствацатуров С. В., О специфике социологического познания социальной политики. Научные работы. Общественные науки.-Прак 1-Лингва, 2002, էջ 46:

Հարկ ենք համարում նշել, որ անցումային շրջանի Հայաստանի սոցիալական քաղաքականության համակարգի վերլուծությունը ըստ այս սխեմայի *առաջին անգամ իրականացվել է Ս. Աստվածատուրովի կողմից: Վերջինիս կողմից մշակված մեթոդաբանության կիրառումը հնարավորություն է տալիս ամբողջացնելու բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի սոցիոլոգիական վերլուծությունը:* Այսպես, սոցիալական պաշտպանության համակարգի միջոցով լուծվում է նյութական, մարդկային, մշակութային ռեսուրսների ռացիոնալ բաշխման խնդիրը, որը նման է ներքին իրավիճակներին և արտաքին փոփոխություններին *հարմարվելու խնդրին*⁹⁸: Ըստ էության վերոնշյալ խնդրի լուծմանն են ծառայում սոցիալական պաշտպանության իրականացման մեխանիզմները:

Ինչ վերաբերում է *նպատակին հասնելու գործառույթին*, ապա սոցիալական պաշտպանության համակարգը մշակում է իր նպատակները և խթանում դրանց իրագործմանը: Նպատակների առաջադրումը և դրանց իրագործումը վկայում է բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի կենսունակության մասին, քանզի համակարգը կենսունակ է այնքան ժամանակ, քանի դեռ այն կարող է առաջադրել նպատակներ և հասնել դրանց իրականացմանը: Գոյություն ունեն չափանիշներ, որոնց օգնությամբ հնարավոր է որոշել, թե որքանով է ճիշտ ընտրված նպատակը, և ունակ է արդյոք համակարգը հասնելու առաջադրված նպատակի իրականացմանը: Այդպիսի չափանիշ է կոնկրետ արդյունքը, որի ձեռքբերմանն է ուղղված համակարգի գործառույթը: Սոցիալական պաշտպանության համակարգի հիմնական, առաջնային նպատակն է պաշտպանել *բնակչությանը տարբեր սոցիալական ռիսկերից:*

⁹⁸Ըստ Թ. Պարսոնսի՝ ցանկացած համակարգ, որպեսզի գոյատևի, պետք է իրականացնի հետևյալ գործառույթները՝ ա. *հարմարում (adaptation)*-Այս գործառույթի էությունը կայանում է հետևյալում. համակարգը պետք է կարողանա հաղթահարել կամ կատարել արտաքին միջավայրից եկող պատահական բնույթ կրող պահանջները: Այն պետք է հարմարվի արտաքին միջավայրին, ինչպես նաև հարմարեցնի միջավայրն իր պահանջմունքներին: Բ. *Նպատակին հասնելը (goal attainment)*-Համակարգը պետք է կարողանա սահմանել իր առաջնային նպատակները և հասնել դրանց: Գ. *Ինտեգրացիա (integration)*-Համակարգը պետք է կորդինացնի իր տարրերի միջև առկա փոխհարաբերությունները: Բացի այդ, համակարգը պետք է կառավարի մյուս 3 ֆունկցիոնալ իմպերատիվների (A, G, L) հարաբերությունները: Դ. *Լատենտ գործառույթ/արժեքային նմուշների պահպանումը*-Համակարգը պետք է սնի, պահպանի ինչպես անհատների մոտիվացիան, այնպես էլ այն մշակութային արժեքները, որոնք ձևավորում և պահպանում են այդ մոտիվացիան:

Բացի այդ, սոցիալական պաշտպանության համակարգը իրականացնում է նաև *ինտեգրացիայի գործառույթը*: Այս դեպքում կարևորվում է սոցիալական պաշտպանության համակարգի կայունության, ներքին միասնության պահպանումը: Այս գործառույթը իրականացվում է սոցիալական վերահսկողության ինստիտուտների միջոցով, մասնավորապես՝ մարդկանց վարքի վրա ազդեցությունը իրականացվում է պետության կողմից մշակված այնպիսի ինստիտուցիոնալ մեխանիզմի միջոցով, ինչպիսին սոցիալական օրենսդրությունն է: Այս տեսանկյունից կարևորվում է հատկապես *սոցիալական պաշտպանության համակարգի իրավանորմադրվային ենթահամակարգը*:

Եվ վերջապես, բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ինչպես կայունության, այնպես էլ վերջինիս փոփոխության համար կարևորվում է այսպես կոչված լատենտ գործառույթի իրականացումը: Բնակչության խոցելի խմբերի կողմից արժեքային կողմնորոշումների յուրացումը անհրաժեշտ է դիտել այդ խմբերի և սոցիալական պաշտպանության համակարգի միջև փոխհարաբերությունների շրջանակներում: Բնակչությունը ունի որոշակի պահանջմունքներ, որոնք բավարարվում են սոցիալական գործողությունների միջոցով, որոնք ենթարկվում են *սոցիալական կարգի կանոններին, արժեքներին, արտաքին և ներքին նորմերին*: Այլ կերպ ասած, տվյալ պահին առաջնային համարվող պահանջմունքների բավարարումը որոշակի արժեքային գործողություն է ձևավորում դրանց նկատմամբ: Նման կերպ, փաստորեն պահանջմունքների բավարարման գործընթացը, որոնք բնակչության գիտակցության մեջ աստիճանակարգված են, իրականացվում է արժեքային-ուսացիոնալ գործողությունների միջոցով⁹⁹:

Վերոնշյալ 4 գործառույթների իրականացման դեպքում կարող ենք փաստել, որ սոցիալական պաշտպանության համակարգը *ամբողջական է և հավասարակշռված*:

Ընդհանուր առմամբ, բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի գործառական հատվածները (ֆունկցիոնալ բլոկները) օժտված են միմյանց լրացնելու հատկությամբ: Դրանց փոխազդեցությունը կոչված է ապահովելու բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի *կայունությունը*: Վերջինս սոցիալական

⁹⁹Տե՛ս Дюркгейм Э. Ценностные и реальные суждения // Социология, ее предмет, метод, предназначение. М., 1995, էջ 301-302:

պաշտպանության համակարգի այնպիսի վիճակ է, երբ առկա է բնակչության բոլոր շերտերի սոցիալական պաշտպանվածություն, սոցիալական արդարության զգացում և դրա հիման վրա սոցիալական համաձայնության ձևավորում:

Սոցիալական պաշտպանության համակարգի ենթահամակարգերի, տարրերի միջև հավասարակշռության խախտումը կարող է նոր, անցանկալի փոփոխություններ առաջացնել սոցիալական պաշտպանության համակարգի ներսում: Հետևաբար այս տեսանկյունից կարևորվում են սոցիալական պաշտպանության համակարգի հավասարակշռության, կայունության պահպանմանն ուղղված միջոցառումները¹⁰⁰:

Բնակչության սոցիալական պաշտպանության օրգանական համակարգի կայացումն ու զարգացումը հարկ է դիտել որպես մի գործընթաց, որի ժամանակ հին համակարգի բոլոր տարրերը վերաձևավորվում են: Սոցիալական պաշտպանության հին համակարգի այն տարրերը, որոնք նոր համակարգի համար օրգանական չեն, ենթարկվում են նոր համակարգին: Իսկ այն տարրերը, որոնք բացակայում էին հին համակարգում, նոր համակարգը ինքն է ստեղծում: *Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի կայացումն ու զարգացումը տեղի է ունենում տարբեր փուլերով*, որոնցից յուրաքանչյուրը ունի իր ուրույն նպատակն ու կառուցվածքը¹⁰¹:

Սոցիալական պաշտպանության համակարգի՝ որպես օրգանական ամբողջության, արդյունավետ գործառույնը ենթադրում է նաև սոցիալական պաշտպանության որոշակի տիպանմուշի¹⁰² (մոդելի) ձևավորում: Այն կարելի է սահմանել որպես *սոցիալական պաշտպանության համակարգի հիմքում դրված սկզբունքների ամբողջություն*¹⁰³: Տարբեր չափանիշներից ելնելով՝ առանձնացվում են սոցիալական պաշտպանության տարբեր տիպանմուշներ: Սովորաբար, թե սոցիալական պաշտպանության ինչպիսի

¹⁰⁰ Տե՛ս Аствацатуров С. В., О специфике социологического познания социальной политики. Научные работы. Общественные науки.-Прак 1-Лингва, 2002, էջ 51:

¹⁰¹ Տե՛ս Аствацатуров С. В., նշվ. աշխ., էջ 49:

¹⁰² Այս աշխատանքում «տիպանմուշ» հասկացությունը կիրառված է որպես «մոդել» հասկացության հայերեն համարժեք:

¹⁰³ Տե՛ս Андрющенко О. Е., Формирование модели социальной защиты населения в условиях социальной модернизации России. Вестн. Волгогр. гос. ун-та. Сер. 7, Филос. 2012. № 3 (18), էջ 172-173:

տիպանմուշ է նախընտրում այս կամ այն երկիրը, նշվում է տվյալ երկրի սոցիալական պաշտպանության հայեցակարգում:

Ըստ բնակչության սոցիալական պաշտպանությանը ուղղված պետական ծախսերի մակարդակի՝ բրիտանացի հեղինակ *Ռ. Պինկերը* առանձնացնում է սոցիալական պաշտպանության երկու տիպանմուշ՝ մնացորդային և ինստիտուցիոնալ¹⁰⁴: *Մնացորդային տիպանմուշի* դեպքում որպես սոցիալական պաշտպանության օբյեկտ՝ հանդես է գալիս միայն կարիքավոր բնակչությունը, ընդ որում պետական բյուջեից միջոցները հատկացվում են պետության սոցիալական գործառույթների իրականացման համար մնացորդային սկզբունքի համաձայն: Այդ իսկ պատճառով սոցիալական պաշտպանության օբյեկտ հանդիսացող կարիքավոր բնակչությունը փոքրամասնություն է կազմում: *Ինստիտուցիոնալ տիպանմուշի* դեպքում պետությունը ձգտում է վերաբաշխել առկա ռեսուրսները՝ հասարակության բոլոր շերտերի պահանջմունքները բավարարելու համար: Այնուամենայնիվ, ռեսուրսների վերաբաշխման միջոցով բնակչության բոլոր շերտերի պահանջմունքների անհրաժեշտ չափով բավարարումը իրատեսական չէ, ըստ այդմ՝ կարիք է առաջանում լրացուցիչ սոցիալական ծառայություններ տրամադրել բնակչության որոշակի շերտերին¹⁰⁵:

Բավականին հետաքրքիր դասակարգում է առաջարկել բրիտանացի հետազոտող *Ռ. Թիթմուսը*: Վերջինիս կարծիքով սոցիալական պաշտպանությունը սերտորեն կապված է բնակչությանը տրվող երաշխիքների հետ: Դրանից ելնելով՝ վերջինս առանձնացնում է բնակչության սոցիալական պաշտպանության հետևյալ տիպանմուշները՝ մնացորդային, ինստիտուցիոնալ և արտադրական ձեռքբերումների¹⁰⁶:

Մնացորդային տիպանմուշը հիմնվում է *ինքնաապահովման սկզբունքի* վրա, որը ենթադրում է հետևյալը. նորմալ պայմաններում մարդիկ ապահովվում են իրենք իրենց՝ հիմնվելով սեփական հնարավորությունների վրա (ինքնաբավություն), ըստ այդմ, որպես սոցիալական պաշտպանության օբյեկտ՝ սույն հեղինակը դիտում է միայն բնակչության ամենակարիքավոր ճանաչված խմբերին: Ըստ Թիթմուսի՝ մնացորդային

¹⁰⁴ Տե՛ս Pinker R. The idea of welfare and the study of social policy: on unitarism and pluralism. Journal of Social Policy, 41, 3, 2012, էջ 615-634:

¹⁰⁵ Տե՛ս նույն տեղը:

¹⁰⁶ Տե՛ս Titmuss, R.M. Welfare State and Welfare Society. The Philosophy of Welfare L. Alien and Unwin, 1987, էջ 224:

տիպանմուշի դեպքում սոցիալական պաշտպանությունը ամբողջությամբ կախված է մարդու անհատական հնարավորություններից, մինչդեռ ինստիտուցիոնալ տիպանմուշի պարագայում ծագող սոցիալական հիմնախնդիրների համար կարևորվում է կոլեկտիվ պատասխանատվությունը: Հեղինակի ավելի ուշ շրջանի դատողությունների արդյունքը երրորդ՝ արտադրական ձեռքբերումների, տիպանմուշի ամրագրումն է, համաձայն որի՝ սոցիալական պաշտպանության օբյեկտ են հանդիսանում նաև բնակչության այն խմբերը, որոնք տնտեսական ակտիվություն չցուցաբերելու հետևանքով անհրաժեշտ չափի ապահովագրական ստաժ չունեն, ուստի ինքնաբավ չեն կարող լինել: Այս տիպանմուշը ենթադրում է կենսաթոշակների և պարտադիր կամ կամավոր վճարումների չափի ուղղակի կապ, ըստ այդմ՝ աշխատանքային ստաժը և իրականացված վճարումները դիտվում են որպես բարեկեցության որոշիչ գործոններ¹⁰⁷: Այլ խոսքով, այս տիպանմուշը հիմնվում է մարդու տնտեսական ակտիվության վրա: Այն որդեգրած երկրում սոցիալական պաշտպանությունը նախատեսվում է միայն սոցիալական այն խմբերի համար, որոնք տնտեսական ակտիվություն չցուցաբերելու և համապատասխան ապահովագրական ստաժ չունենալու հետևանքով զրկված են սոցիալական ապահովագրության տարբեր ծրագրերից օգտվելու հնարավորությունից:

Բնակչության սոցիալական պաշտպանության տիպանմուշների իր դասակարգումն է առաջարկել դանիացի գիտնական Գ. Էսպինգ Անդերսենը: Ելնելով նրանից, թե ինչ տեղ է զբաղեցնում սոցիալական պաշտպանությանը ուղղված քաղաքականությունը պետական քաղաքականության գերակայությունների շարքում, ինչ մասնակցություն ունի պետությունը վերաբաշխողական գործընթացներում, Անդերսենը առանձնացնում է սոցիալական պաշտպանության հետևյալ տիպանմուշները կամ մոդելները՝ ազատական կամ լիբերալ մոդել, պահպանողական կամ կոնսերվատիվ մոդել, սոցիալ-ժողովրդավարական մոդել¹⁰⁸: Անդերսենի նորամուծությունը սույն դասակարգման մեջ այսպես կոչված, գաղափարախոսական, որպես ելակետային հենքի, առանձնացումն է:

¹⁰⁷Տե՛ս Titmuss, R.M. Welfare State and Welfare Society. The Philosophy of Welfare L. Alien and Unwin, 1987

¹⁰⁸Տե՛ս G. Esping-Andersen. The Three Worlds of Welfare Capitalism. Cambridge: Polity Press & Princeton: Princeton University Press, 1990, էջ 9-34:

Ազատական տիպանմուշին բնորոշ է սոցիալական ապահովագրության, համընդհանուր պետական տրանսֆերտների, ինչպես նաև կարիքավորության գնահատման ընթացակարգի վրա հիմնված կենսաթոշակների ցածր մակարդակը: Եկամտի պահպանման սոցիալական ծրագրերը մեծ մասամբ ուղղված են դեպի ամենաաղքատները: **Պահպանողական տիպանմուշի** դեպքում պետությունը իր հիմնական քաղաքական խնդիրն է համարում եկամուտների պաշտպանությունը: Ընդ որում, վերջինս աննշան ազդեցություն ունի հասարակության մեջ եկամուտների վերաբաշխման վրա և միջամտում է միայն այն դեպքում, երբ մարդու՝ ինքն իրեն ապահովելու հնարավորությունները սահմանափակ են: **Սոցիալ-ժողովրդավարական տիպանմուշը**, որը գործում է, օրինակ, Շվեդիայում, ենթադրում է հավասար մեկնարկային հնարավորությունների ստեղծում, լրիվ զբաղվածություն և եկամուտների համահարթեցում բոլորի համար¹⁰⁹:

Բնակչության սոցիալական պաշտպանության տիպանմուշներից է նաև նոր ազատական կամ նեոլիբերալ տիպանմուշը, որի գլխավոր հատկանիշներն են՝

- պետությունը տնտեսական մեծ շահերի պաշտպանն է, տնտեսական համակարգը պետք է ազատագրվի կապանքներից: Սա, ըստ էության, ենթադրում է կապիտալի ազատորեն տեղաշարժվելու հնարավորությունների ընդլայնում,
- աշխատանքային պայմանների բարելավում, ինչը իրականում ենթադրում էր աշխատողների իրավունքների պաշտպանության փոխարեն արհմիությունների թուլացում¹¹⁰:

Հարկ է նշել, որ Եվրոպայում գործում են սոցիալական պաշտպանության տարբեր տիպանմուշներ, մասնավորապես՝ բելգիացի գիտնական Անդրե Սապիրը առանձնացնում է սոցիալական պաշտպանության տիպանմուշների հետևյալ

¹⁰⁹ Տե՛ս G. Esping-Andersen. The Three Worlds of Welfare Capitalism. Cambridge: Polity Press & Princeton: Princeton University Press, 1990, էջ 9-34:

¹¹⁰ Տե՛ս Гринспен А. Эпоха потрясений. Проблемы и перспективы мировой финансовой системы, Изд.- Юнайтед Пресс, 2015:

տեսակերը՝ մայրցամաքային (կոնտինենտալ), անգլոսաքսոնյան, սկանդինավյան և միջերկրածովյան¹¹:

Սկանդինավյան տիպանմուշը կիրառվում է Դանիայում, Ֆինլանդիայում, Շվեդիայում, Նիդեռլանդներում: Այս երկրներին բնորոշ է համընդհանուր սոցիալական բարեկեցությունը, ինչպես նաև բնակչության սոցիալական պաշտպանվածության ամենաբարձր մակարդակը: Անգլոսաքսոնյան տիպանմուշը գործում է Իռլանդիայում և Մեծ Բրիտանիայում: Այս տիպանմուշին բնորոշ է սոցիալական աջակցության համեմատաբար լայն ցանցը: Սակայն պետք է նշել, որ տվյալ տիպանմուշի շրջանակներում սոցիալական օգնության ծրագրերը խիստ հասցեական են: Կարիքավոր բոլոր խմբերի հավասարության փոխարեն գործում է բնակչության առանձին խմբերին, օրինակ՝ կենսաթոշակառուներին, հաշմանդամություն ունեցող անձանց, հիվանդ և անգործունակ անձանց, քիչ վարձատրվող ընտանիքներին, ոչ լրիվ ընտանիքներին և այլն, *ընտանիքային օգնության ցուցաբերման սկզբունքը*: Միջերկրածովյան տիպանմուշը գործում է Հունաստանում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Իտալիայում: Այս երկրների սոցիալական ծախսերի հիմնական մասը կազմում են կենսաթոշակների վճարումները: *Սոցիալական պաշտպանության համակարգերը հիմնականում հիմնվում են վաղ տարիքում կենսաթոշակի անցման գաղափարի վրա*¹²:

Մայրցամաքային կամ կոնտինենտալ տիպանմուշը գործում է Ավստրիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և Լյուքսեմբուրգում: Հարկ է առանձնացնել Գերմանիայի օրինակը, որտեղ տվյալ մոդելը զուգորդվում է այսպես կոչված «սոցիալ-«լական շուկայական տնտեսությամբ»: «Սոցիալական շուկայական տնտեսություն» հասկացությունը շրջանառության մեջ է դրվել 1946թ. Ալֆրեդ Մյուլլեր Արմակի կողմից՝ սահմանելու համար այն տնտեսական քաղաքականությունը, որը համադրում է «շուկայական ազատության» և «սոցիալական համահարթեցման» սկզբունքները: Սոցիալական պաշտպանության այս տիպանմուշի համատեքստում շեշտը դրվում է աշխատունակ բնակչության համար բարենպաստ տնտեսական պայմանների

¹¹ Տե՛ս Sapir A., Globalization and the Reform of European Social Models, 2005, էջ 5:

¹² Տե՛ս Sapir A., նշվ. աշխ., էջ 6-8:

ստեղծման վրա, որին էլ ուղղված են սոցիալական պաշտպանության հիմնական միջոցները¹¹³:

Այսպիսով, գոյություն չունի սոցիալական պաշտպանության մեկ տիպանմուշ, որը հավասարապես կիրառելի և արդյունավետ լինի տարբեր երկրների համար: Այն խիստ զգայուն է պետության, հասարակության պատմության, ազգային ավանդույթների նկատմամբ և մեծ հաշվով կախված է պետության և հասարակության առջև ծառայած մարտահրավերներից ու նպատակներից:

Սոցիալական պաշտպանության վերոնշյալ իդեալական տիպանմուշները՝ որպես վերլուծական կառույցներ, հետազոտական գործիքներ, հնարավորություն են ընձեռում ուսումնասիրելու և վերլուծելու այս կամ այն պետության սոցիալական պաշտպանության համակարգը:

Ամփոփելով բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի սոցիոլոգիական վերլուծությունը՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները. սոցիալական պաշտպանությունը օրգանական ամբողջություն է, որը բնորոշվում է գործառնման սեփական օրինաչափություններով և սկզբունքներով: Սոցիալական պաշտպանության համակարգի նպատակը որևէ խոցելի խմբի կամ ամբողջ բնակչության պաշտպանությունն է տարբեր սոցիալական ռիսկերից:

¹¹³St' u Мюллер-Армак А. Принципы социального рыночного хозяйства /Социальное рыночное хозяйство. Теория и этика экономического порядка в России и Германии – СПб., 1999, էջ 264:

Գլուխ 2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՊԱՆՄՈՒՇՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2.1 Սոցիալական պաշտպանության խորհրդային համակարգի ժառանգությունը

Հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման և զարգացման գործընթացը ուսումնասիրելու համար այն պայմանականորեն կարող ենք բաժանել մի քանի փուլերի: Մինչ այդ փուլերին անդրադառնալը, հարկ է նշել, որ խորհրդային Հայաստանում գործում էր բնակչության սոցիալական կարիքները բավարարող սոցիալական պաշտպանության որոշակի համակարգ, որը զբաղվում էր տարեցների, թոշակառուների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, որբ երեխաների և այլ խոցելի խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրների լուծմամբ: Խորհրդային Միությունում սոցիալական պաշտպանության գործում գլխավորապես կարևորվում էր պետության դերը: Բնակչությունը կարող էր անվճար օգտվել բժշկական, կրթական, ինչպես նաև մի շարք այլ սոցիալական ծառայություններից: Սոցիալական քաղաքականության շրջանակներում շեշտադրվում էր սպառողական գների կայունությունը, բնակչությանը առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելը: Խորհրդային Միությունում ձևավորվել էր սպառման ու բաշխման հարաբերությունների այնպիսի համակարգ, որը պաշտպանում էր բնակչության լայն շերտերին աղքատությունից: Սոցիալական պաշտպանության համակարգը հիմնականում ֆինանսավորվում էր պետական բյուջեի միջոցներից: Բնակչության սոցիալական կարիքների բավարարման համար զգալի ֆինանսական ռեսուրսներ էին տրամադրում արդյունաբերական կազմակերպությունները, արհմիությունները և այլ կազմակերպություններ: Ըստ էության խորհրդային սոցիալական պաշտպանության մոդելը կամ տիպանմուշը հիմնվում էր համընդհանուր սոցիալական ապահովման և առավելագույն սոցիալական երաշխիքների սկզբունքների վրա:

1986-1991թթ.-ը Խորհրդային Միությունում բնորոշվում են որպես «վերակառուցման» (перестройка) ժամանակահատված, որը համարվում է չափազանց

բարդ և հակասական, քանի որ ստեղծվել էր քաղաքական անկայուն վիճակ, բնակչության բարեկեցության մակարդակն էր նվազել՝ պայմանավորված բնակչության եկամուտների փաստացի կտրուկ կրճատմամբ, ապրանքների տոտալ դեֆիցիտով¹¹⁴:

Թերևս հասունացել էր սոցիալական պաշտպանության համակարգը հավասարակշռող գործիքների կիրառման անհրաժեշտությունը: Ըստ էության, այս փուլը կարելի է համարել Հայաստանում *սոցիալական պաշտպանության հին համակարգի փլուզման փուլ*:

Անկախության հռչակումից հետո հայաստանյան իշխանությունների առջև ծառայան մի շարք խնդիրներ՝ սոցիալ-տնտեսական ճգնաժամ, որը հանգեցրեց գործազրկության և աղքատության ծավալների մեծացմանը, դարաբաղյան պատերազմի և սպիտակյան երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած մարդկանց մի ստվար զանգվածի հայտնվելը և այլն: Առաջնահերթ խնդիր էր նաև բնակչության կարիքավոր խմբերի սոցիալական պաշտպանությանը ուղղված և հասարակության բոլոր խավերի շահերը հաշվի առնող միասնական սոցիալական քաղաքականության մշակումը: Սա Հայաստանի համար դժվար լուծելի խնդիր էր, քանի որ չկային մշակված սոցիալական պաշտպանության իրականացման համապատասխան մեխանիզմներ: Ըստ էության նորանկախ Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության նոր համակարգի ստեղծման առաջին փուլը համընկավ երկրում շուկայական հարաբերությունների ձևավորման գործընթացի հետ¹¹⁵: Այս փուլում բնակչության սոցիալական պաշտպանության ապահովմանն ուղղված առանձին և նպատակային քաղաքականություն չէր իրականացվում, ինչի արդյունքում, ըստ էության որևէ սոցիալական հիմնախնդիր չլուծվեց: Բացի այդ, կենսական նվազագույնից ցածր միջին աշխատավարձի պայմաններում ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև գործատուները, չէին կարող լուրջ հատկացումներ կատարել սոցիալական ապահովագրության ֆոնդերին: Այս ամենը անհնարին դարձրին գործազրկության, բժշկական ապահովագրության գործուն համակարգի կազմակերպումը և արդյունավետ գործառող կենսաթոշակային ֆոնդերի ստեղծումը: Բացի այդ,

¹¹⁴Տե՛ս Ратьковский И. С., Ходяков М. В. История Советской России. СПб.: Издательство «Лань», 2001:

¹¹⁵Տե՛ս Յարմալոյան Մ., Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի և մոդելի ձևավորումը հետխորհրդային Հայաստանում // «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 142.5, Երևան 2014թ., էջ 17:

պետությունը դեռևս շարունակում էր սոցիալական ոլորտում հավակնել գլխավոր «գործող անձի» դերին, իսկ բնակչությունն էլ առաջվա նման շարունակում էր պետությունից ակնկալել «համընդհանուր պարտականությունների» կատարում, ինչը անհրապակյան էր:

Չարդարացվեցին նաև սեփականաշնորհումից բյուջեի մուտքերը ապահովելու հույսերը, քանի որ պետության իրական դրամական եկամուտները սպասվածից առնվազն տասը անգամ ցածր էին: Բացի այդ, ակնհայտ էր, որ մասնավոր հատվածում աշխատանքային հարաբերությունները դեռևս կանոնակարգված չէին, իսկ արհմիությունները անգործության էին մատնվել: Լրջորեն վտանգվել էր միջին խավը՝ քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության և կայունության զարգացման խթանիչ ուժը¹¹⁶: Փախստականների և աղետի գոտու բնակչության հիմնախնդիրները ևս չէին լուծվել:

Այս փուլում իրականացվում էին որոշակի գործողություններ (բնամթերքի, դրամական օգնության տրամադրում), որոնք ուղղված էին «շոկային թերապիայի» հետևանքների հաղթահարմանը: Թերևս օգնությունը տրամադրվում էր բնակչության առավել խոցելի խմբերին՝ երեխաներ, բազմազավակ ընտանիքներ, կենսաթոշակառուներ, հաշմանդամություն ունեցող անձինք, փախստականներ և այլն: Սոցիալական օգնության տրամադրումը ենթադրում էր ընտրության սկզբունքի կիրառում:

Այսպիսով՝ կարելի է ասել, որ սոցիալական պաշտպանության հին համակարգը փլուզվել էր, այն փոխարինվել էր հրապապ արձագանքման պրակտիկայով: Սոցիալական պաշտպանության նոր համակարգի հիմքերը մշակված չէին, բայց պետությունը, ըստ սովորության, փորձում էր լուծել ընթացիկ խնդիրները:

Կարևոր է նշել այն հանգամանքը, որ հենց այս փուլում է, որ ընդունվում է երկրի գլխավոր օրենքը՝ Սահմանադրությունը: Վերջինիս 33-րդ հոդվածով նախատեսվում էր քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքը ծերության, գործազրկության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու և մի շարք այլ դեպքերում¹¹⁷: Փաստորեն Սահմանադրության 33-րդ հոդվածում չէր օգտագործվում «սոցիալական

¹¹⁶ Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի Հանրապետության սոցիալական քաղաքականությունը (1990-2003 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 2003, էջ 4-5:

¹¹⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն՝ ընդունված 05.07.1995թ., գլուխ 2, հոդված 33:

պաշտպանություն» հասկացությունը, բայց փոխարենը ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել էին բնակչության որոշակի խմբերի սոցիալական պաշտպանությանն առնչվող օրենքներ¹¹⁸: Ավելին, 1994թ.-ին ՀՀ սոցիալական ապահովության նախարարության կողմից հաստատվում է սոցիալական պաշտպանության կարիք ունեցող բնակչության խմբերի ցանկը, որը ներառում էր հետևյալ խմբերը՝ հաշմանդամ քաղաքացիները (մեծահասակները և երեխաները), Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամները, մասնակիցները և նրանց հավասարեցված անձինք, միայնակ մեծահասակ մարդիկ և միայն կենսաթոշակառուից/ներից/ կազմված ընտանիքները, Հայրենական մեծ պատերազմում և խաղաղ ժամանակ զոհված զինծառայողների այրիները և մայրերը, ֆաշիզմի ճամբարների նախկին անչափահաս կալանավորները, քաղաքական բռնաճնշումների ենթարկված և հետագայում արդարացված անձինք, գրանցված փախստականները, բռնի տեղահանվածները, Չեռնոբիլի ԱԷԿ-ի վթարի, միջուկային արտանետումների, միջուկային փորձարկումների հետևանքով տուժած անձինք, ազատազրկման վայրերից, հատուկ ուսումնադաստիարակչական հիմնարկներից վերադարձած անձինք, բնակչության որոշակի վայր չունեցող անձինք, մինչև 16 տարեկան հաշմանդամ երեխա ունեցող ընտանիքները, իրենց խնամակալության տակ երկկողմանի ծնողազուրկ երեխաներ և առանց ծնողների խնամքի մնացած երեխաներ ունեցող ընտանիքները, փոքր եկամուտ ունեցող ընտանիքները, բազմազավակ ընտանիքները, ոչ լրիվ կազմով ընտանիքները, անչափահաս ծնողների ընտանիքները, երիտասարդ, այդ թվում ուսանող ընտանիքները, երեխայի խնամքի արձակուրդում գտնվող մայրերը, հղի կանայք և կերակրող մայրերը, մանկատների և դպրոց-ինտերնատների ինքնուրույն ապրող շրջանավարտները (մինչև նյութական անկախության և սոցիալական հասունության հասնելը), որբացած կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, անապաստան երեխաները և անչափահասները, շեղվող վարք դրսևորող երեխաները և անչափահասները, ընտանիքում դաժան վերաբերմունքի և ճնշման ենթարկված երեխաները, ովքեր հայտնվել են առողջությանը և զարգացմանը սպառնացող պայմաններում, ամուսնալուծված

¹¹⁸Այսպես, 1993 թվականի ապրիլի 14-ին ընդունվում է «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, 1994-ին՝ «Բռնադատվածների մասին» ՀՀ օրենքը և մի շարք այլ իրավական ակտեր:

ընտանիքները, անբարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտ, լարված հարաբերություններ, դաստիարակչական կարողությունից զուրկ ծնողներ ունեցող ընտանիքները, հոգեբանական դժվարությունների ունեցող, հոգեբանական սթրեսներ տանող, ինքնասպանության հակված քաղաքացիները (մեծերը և երեխաները)¹¹⁹:

Բացի այդ տեղի են ունենում նաև ինստիտուցիոնալ փոփոխություններ: 1990թ. ՀՀ սոցիալական ապահովության նախարարության հիմքի վրա ստեղծվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության, այլ ոչ թե *սոցիալական պաշտպանության* նախարարությունը: 1995 թվականի Ազգային ժողովի ընտրություններից հետո ՀՀ նախագահի հրամանագրով վերոհիշյալ նախարարությունը վերաձևավորվեց սոցիալական ապահովության, զբաղվածության, բնակչության տեղաշարժի և փախստականների հարցերով նախարարության¹²⁰: Փաստորեն դեռևս շարունակվում է չկիրառվել «սոցիալական պաշտպանություն» եզրը: Այդ տարիներին ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության առաջնահերթություններից էր մարդասիրական օգնության հասցեական բաշխումը: Դրա իրականացմանն էր ուղղված «Փարոս» ծրագրի մշակումը:

ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունում վերաձևավորվեց սոցիալական ծառայությունների ցանցը՝ (այն գործում էր նաև Խորհրդային Հայաստանում) իր տարածքային կառույցներով, որի շնորհիվ հնարավոր դարձավ կյանքի կոչել «Փարոս» ծրագիրը: Այն կոչված էր ոչ միայն ճշտելու ընտանիքների անապահովության աստիճանը, այլև օպերատիվ և անաչառ կազմակերպելու մարդասիրական օգնության բաշխման աշխատանքները:

Այսպիսով, այս փուլում առանձնացվում են սոցիալական պաշտպանության կարիք ունեցող խմբերը, իսկ սոցիալական պաշտպանության իրականացման հիմնական սուբյեկտի դերում հանդես էր գալիս պետությունը՝ ի դեմս սոցիալական ապահովության նախարարության և վերջինիս շրջանակներում վերաձևավորված

¹¹⁹Տե՛ս ՀՀ ԱՍՀՆ պաշտոնական վեբ կայք, սոցիալական պաշտպանության տեսակները և կազմակերպման ձևերը, http://www.mlsa.am/home/links.php?id_link=459, 14.12.2015թ., ժամը՝ 14:29:

¹²⁰Տե՛ս ՀՀ ԱՍՀՆ պաշտոնական վեբ կայք, պատմական ակնարկ, http://www.mlsa.am/?page_id=4331, 20.12.2015թ., ժամը՝ 18:45:

սոցիալական ծառայությունների ցանցի: Փաստորեն սոցիալական ծառայությունների եղած ցանցը ծառայեցվեց սոցիալական պաշտպանության դեռևս ամբողջովին չձևավորված համակարգին:

Այսպիսով, հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության նոր համակարգի ձևավորման կարևոր նախապայմաններից կարող ենք առանձնացնել հետևյալ նախապայմանները՝

- տնտեսական և քաղաքական կարգի փոփոխությունը,
- տարրերային աղետի և պատերազմի սոցիալական հետևանքների հաղթահարման անհրաժեշտությունը,
- սոցիալական պաշտպանության հին համակարգի փլուզումը,
- զանգվածային աղքատության ու գործազրկության ծավալման հետևանքով սոցիալական հիմնախնդիրների սրումը,
- սոցիալական պաշտպանության նոր, հրատապ օգնության գործիքների գործադրման փաստը,
- սոցիալական պաշտպանության կարիք ունեցող բնակչության թվի կտրուկ աճը,
- սոցիալական պաշտպանության ոլորտը կանոնակարգող մի շարք օրենքների ընդունումը:

Սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման երկրորդ փուլում տարանջատվեցին սոցիալական օգնության և սոցիալական ապահովագրության մեխանիզմները¹²¹: Ըստ էության հետխորհրդային Հայաստանում Խորհրդային Հայաստանից ժառանգություն ստացած սոցիալական պաշտպանության համակարգի կերպափոխման արդյունքում առանձնացվեցին սոցիալական պաշտպանության պետական հետևյալ մեխանիզմները՝ սոցիալական ապահովությունը, սոցիալական ապահովագրությունը և սոցիալական օգնությունը: Բացի այդ, նույնականացվեցին սոցիալական պաշտպանության կարիք ունեցող խմբերը: Դրան զուգահեռ բնակչության խոցելի խմբերի սոցիալական պաշտպանության ապահովման գործում

¹²¹Տե՛ս Յարմալոյան Մ., Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի և մոդելի ձևավորումը հետխորհրդային Հայաստանում // «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 142.5, Երևան 2014թ., էջ 18:

որոշակի մասնակցություն և դերակատարություն ունենալու օգտին և պետական սեկտորը, մասնավորապես՝ բարեգործական, հասարակական կազմակերպություններն ու եկեղեցին: Սոցիալական պաշտպանության մեխանիզմներից սոցիալական ապահովությունը և սոցիալական ապահովագրությունը, լիարժեք չէին գործում: Պետության կողմից սահմանված սոցիալական երաշխիքները հնարավոր չէր ամբողջությամբ տրամադրել ֆինանսական ռեսուրսների սղության պատճառով: Իր հերթին, կենսաթոշակների, նպաստների, կրթաթոշակների չափերը բավարար չէին մարդկանց տարրական պահանջմունքները բավարարելու համար: Ինչ վերաբերում է սոցիալական ապահովագրության մեխանիզմին, ապա այն չէր կարող արդյունավետ գործել երկրում առկա աղքատության, գործազրկության մեծ ծավալների, սովերային տնտեսության պատճառով: Նման իրավիճակում սոցիալական պաշտպանության քիչ թե շատ արդյունավետ գործող մեխանիզմը սոցիալական օգնության մեխանիզմն էր:

Ըստ էության շուկայական հարաբերություններին անցնելու ճգնաժամային պայմաններում ՀՀ-ում սոցիալական պաշտպանության վերոհիշյալ մեխանիզմները առավելապես ուղղված էին բնակչության առանձին աղքատ խմբերին օգնելուն՝ կենսաթոշակների և նպաստների, միանվագ և պարբերական դրամական լրավճարների, բնամթերքի տրամադրման միջոցով: Փաստորեն գոյատևման ապահովումը և բացարձակ աղքատության¹²² հաղթահարումը (սրան էր ուղղված առաջին հերթին աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրը) դիտվում էին որպես ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության դեռևս ամբողջովին չձևավորված համակարգի հիմնական նպատակներ:

Գործազրկության ռիսկին դիմակայելու համար այս փուլում առավելապես կարևորվում էր արդյունավետ զբաղվածության քաղաքականության իրականացումը¹²³: Հարկ է նշել, որ տնտեսական վերափոխումների հետևանքով տեղի է ունեցել աշխատուժի տեղաշարժ պետական սեկտորից դեպի մասնավոր սեկտորը: Այսպես, վիճակագրական տվյալների համաձայն 1991թ. մասնավոր սեկտորում զբաղվածների թիվը կազմել է տնտեսության մեջ զբաղվածների 30,1%-ը, իսկ պետական սեկտորում՝

¹²²Բացարձակ աղքատության դեպքում անձի, ընտանիքի եկամուտն այնքան փոքր է, որ այն չի ապահովում առաջին անհրաժեշտության ապրանքների ձեռքբերման հնարավորությունը:

¹²³Տե՛ս Аствацатуров С. В. Социальная защита в системе эконимических и социальных координат, «Изменяющееся общество», N 1, 2, Ереван, 1997, էջ 42:

67,2%-ը, 1998թ. այն կազմել է համապատասխանաբար՝ 66,2% և 32,6%, իսկ 1999թ. համապատասխանաբար՝ 70,6% և 28,9%:¹²⁴ Ի լրումն, սեփականության զանգվածային մասնավորեցման, զբաղվածության ոլորտը կարգավորող անկատար իրավական դաշտի հետևանքով շատ ձեռնարկություններ փակվեցին կամ սկսեցին խիստ թերթնված աշխատել: Այս և մի շարք այլ գործոններ նպաստեցին երկրում գործազրկության մակարդակի բարձրացմանը: Այսպես, ըստ վիճակագրական տվյալների՝ 1992թ. ՀՀ-ում տնտեսության մեջ զբաղվածների թիվը կազմել է 1550000 մարդ, գործազուրկներինը՝ 54500 մարդ, 1996թ. համապատասխանաբար՝ 1436000 և 159254 մարդ, 1999թ. համապատասխանաբար՝ 1320000 հազար և 164200 մարդ, 2000թ. համապատասխանաբար՝ 1283000 և 169500 մարդ:¹²⁵ Վիճակագրությունը փաստում է, որ գործազրկության մակարդակը 1992թ. 1,6%-ից աճել է՝ 1999թ. կազմելով 11,1%, իսկ 2000թ.՝ 11,7%: Գործազրկության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Շիրակում՝ (23,3%), Լոռիում՝ (17%) և Սյունիքի մարզում՝ (20,8%): Գրանցված գործազրկության մակարդակը Երևանում կազմել է 12,2%¹²⁶:

Հարկ է նշել, որ վերոնշյալ վիճակագրական տվյալները չեն արտացոլում թաքնված գործազրկության մակարդակը:

Հանրապետական և տարածքային ծրագրերի, աշխատուժի տեղաշարժի մասին հստակ տեղեկատվության, միջին և փոքր բիզնեսի խրախուսման միջոցների, գործազուրկների վերամասնագիտացման և որակավորման բարձրացման համար անհրաժեշտ լծակների, ինչպես նաև նոր աշխատատեղերի բացակայությունը նպաստեցին գործազրկության մակարդակի բարձրացմանը: Բացի այդ, նախկինում գործող խոշոր ու միջին ձեռնարկությունների չաշխատելու հետևանքով չձևավորվեց սոցիալական ապահովագրության, այդ թվում նաև գործազրկության դեպքում ապահովագրության համակարգը: Ինչ վերաբերում է ինքնազբաղվածությանը, ապա

¹²⁴Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի Հանրապետության սոցիալական քաղաքականությունը (1990-2003 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 2003, էջ 7-8:

¹²⁵Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1997, 1998), Եր., 2001, էջ 42-43: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000թ. հունվար-դեկտեմբերին, էջ 84:

¹²⁶Տե՛ս Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, Ե., 2001, էջ 16:

վերջինիս խթանման նպատակով պետության կողմից գործազուրկներին անհատույց տրամադրվող դրամական օգնությունը ըստ էության չծառայեց իր նպատակին:

1996թ. մշակվեց «Փարոս» ծրագիրը, իսկ 1999թ. սկսեց իրականացվել Աղքատության ընտանեկան նպաստ ծրագիրը, որում 2000թ. դրությամբ ընդգրկվեց շուրջ 190.000 ընտանիք: Նպաստի չափը բարձրացավ 3500 դրամից մինչև 7500 դրամի՝ ելնելով կարիքավորությունից և անապահովվածությունից¹²⁷: Չնայած տարեցտարի ընտանեկան նպաստի չափի ավելացմանը, այնուամենայնիվ, այն չէր բավարարում մարդու նույնիսկ ամենատարրական պահանջմունքները: Նպաստների հատկացման նման համակարգը չէր բխում ո՛չ պետության, ո՛չ էլ նպաստառուների շահերից և սկզբունքային բարեփոխումների կարիք ուներ:

Ըստ էության, աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրը սոցիալական պաշտպանության ազատական մոդելից բխող սոցիալական պաշտպանության լծակ էր՝ պիտակավորմամբ հանդերձ, քանի որ ենթադրվում էր, որ «աղքատություն» բառի պատճառով շատ ընտանիքներ կիրաժարվեն դառնալ վերոհիշյալ ծրագրի շահառուներ: Սակայն, իրականում այս ծրագիրը անցանկալի հետևանք ունեցավ՝ նպաստելով սպառողական վարքի ձևավորմանը և խորացմանը¹²⁸:

1996-2001թթ. ընթացքում ՀՀ-ում աղքատների թվի կրճատում է տեղի ունեցել: Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի 60-րդ կետում նշվում է, որ «Տնտեսական աճը, ելնելով 1996, 1998/99 և 2001 թթ. տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունների արդյունքներից, հանդիսացել է աղքատության կրճատման հիմնական գործոններից մեկը»¹²⁹: Իրականում հենց այս թվականներին սկսել է իրականացվել աղքատ ընտանիքների աջակցելուն ուղղված ընտանեկան նպաստի վերոհիշյալ ծրագիրը, որը որոշակի ազդեցություն է ունեցել ծայրահեղ աղքատների կենսապայմանների բարելավվման վրա, իսկ տնտեսական աճը ուղղակիորեն նպաստել է սոցիալական բևեռացմանը՝ փոքրաթիվ մարդկանց ձեռքբերում հարստության կուտակմանը:

¹²⁷ Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի Հանրապետության սոցիալական քաղաքականությունը (1990-2003 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 2003, էջ 9:

¹²⁸ Տե՛ս Խաչատրյան Ա. Կ., Սոցիալական աշխատանքը և ընտանիքի ինստիտուտը հետխորհրդային Հայաստանում, // «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 144.5, Երևան, 2014թ. (N° 3), էջ 7:

¹²⁹ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003թ., էջ 21:

Այսպիսով, ընտանեկան նպաստի ծրագիրը՝ որպես գործիք, օգնել է դիմակայել աղքատության ռիսկին՝ չնայած նվազագույն սպառողական զամբյուղի հնարավորություն չունեցող անձանց, սոցիալական խմբերի թվի ավելացմանը, ինչպես նաև կրթական և առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունների սահմանափակմանը:

Աղքատության կտրուկ աճի հետևանքով արտագաղթողների թիվը աճեց: Ըստ փորձագետների՝ 1991-2001 թթ. ընթացքում Հայաստանից արտագաղթել է մոտ 1300000 մարդ, իսկ վերադարձածների թիվը կազմել է 380000: Սա նշանակում է, որ միգրացիայի զուտ արդյունքը կազմել է 920000 մարդ՝ հօգուտ տարագիրների, որոնք ՀՀ քաղաքացի հանդիսացող առկա բնակչության թվաքանակի 18%-ն են կազմել¹³⁰: Տվյալ ժամանակաշրջանում աշխատունակ բնակչության տեսակարար կշիռը նվազել է 7%-ով՝ բնակչության ընդհանուր թվաքանակում կազմելով 51%¹³¹: Դրա հիմնական պատճառը, թերևս այն էր, որ Հայաստանից արտագաղթածների 82%-ը աշխատունակ տարիքում էր: 1991-1996թթ. Հայաստանից արտագաղթել է մոտ 677000 մարդ, իսկ հետագայում միջինը՝ տարեկան 70000-150000 մարդ: Ամենամեծ արտագաղթը՝ 250000 մարդ, տեղի է ունեցել 1993թ.-ին¹³²:

Արտագաղթի հետևանքով բնակչության մեջ խախտվել էր տարիքային խմբերի համամասնությունը, մասնավորապես տվյալ ժամանակահատվածում նկատվել է 60 և ավելի տարիք ունեցող անձանց թվի հարաբերական ավելացում¹³³: Ըստ էության, արտագաղթի հետևանքով խարխլվեց սոցիալական պաշտպանության ավանդական համակարգը, ինչի արդյունքում 60 և ավելի տարիք ունեցող մարդկանց մեծամասնությունը մնաց մենակ:

Հարկ է նշել, որ Հայաստանի՝ անկախության ձեռքբերումից հետո պետության դժվարին վիճակում ի հայտ եկան «բարեգործական» անունը կրող բազմաթիվ

¹³⁰ Տե՛ս Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, էջ 12; Խառատյան Հ., Չալիկյան Հ., Միրզոյան Լ., Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, ՄԻԺԻ-ՀԿ, Երևան, 2000թ., էջ 28:

¹³¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը, Եր., 2001, էջ 30-31:

¹³² Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի Հանրապետության սոցիալական քաղաքականությունը (1990-2003 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 2003, էջ 14:

¹³³ Տե՛ս Հայաստան 2001, վիճակագրական գրքույկ, էջ 12: Խառատյան Հ., Չալիկյան Հ., Միրզոյան Լ., Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, ՄԻԺԻ-ՀԿ, Երևան, 2000թ., էջ 28:

կազմակերպություններ (բարեգործական-հասարակական կազմակերպություններ, միջազգային կազմակերպություններ, եկեղեցիների դիակոնիական ծառայություններ, սփյուռքահայ բարեսիրական կենտրոններ և այլն), որոնք կամովին հանձն առան մարդկանց օգնելու տարաբնույթ հանձնառություններ: Ակնհայտ է, որ առանց այդ կազմակերպությունների աջակցության, ստեղծված իրավիճակի հաղթահարումը էլ ավելի բարդ կլիներ:

Ընդհանուր առմամբ այս փուլում առավելապես կարևորվում էր սոցիալապես անապահով խմբերի սոցիալական պաշտպանությունը, տարատեսակ բյուջետային վճարումների տրամադրումը վերջիններիս՝ պետական այնպիսի աջակցությամբ ապահովելու փոխարեն, որ նրանք հնարավորություն ունենային ինքնուրույն լուծելու իրենց խնդիրները (ինչպես օրինակ՝ տարատեսակ կրթական և մասնագիտական որակավորման ծրագրերը, սոցիալապես անապահով խմբերին վարձակալության կամ լիզինգային կարգով անհրաժեշտ սարքավորումներ տրամադրելու ծրագրերը և այլն): Փաստորեն այս փուլում որպես սոցիալական պաշտպանության հիմնական օբյեկտ՝ հանդես էին գալիս բնակչության սոցիալապես անապահով խմբերը: Իսկ սոցիալական պաշտպանության ձևերից գերակայում էր պասիվ ձևը, ինչը վկայում է այն մասին, որ դեռևս անցում չէր կատարվել պետության միակողմանի պարտականություններից պետություն-քաղաքացի երկկողմանի պարտականություններին:

Այսպիսով, այս փուլում տարերայնորեն ձևավորվել էր սոցիալական պաշտպանության մի տիպանմուշ, որը պայմանականորեն կարող ենք անվանել սոցիալական պաշտպանության «անցումային տիպանմուշ»: Այն ըստ էության սոցիալական պաշտպանության ազատական տիպանմուշի տարատեսակ էր:

2.2 Սոցիալական պաշտպանության «անցումային տիպանմուշի» կերպափոխումները Եվրոպական վերանայված սոցիալական խարտիային միանալուց հետո

ՀՀ-ը, դառնալով Եվրախորհրդի անդամ (2001թ.), պարտավորություն ստանձնեց երկու տարում ստորագրելու Եվրոպական վերանայված սոցիալական խարտիան և վավերացնելու այն: Դրա վավերացումը ՀՀ-ի կողմից (2004թ.) նախ և առաջ ենթադրում էր սոցիալական օրենսդրության համապատասխանեցումը Եվրոպական չափորոշիչներին: Սա նշանակում էր, որ ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը թևակոխում էր նոր փուլ¹³⁴:

Մեր կողմից իրականացված ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտը կարգավորող իրավանորմատիվային ենթահամակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև «սոցիալական պաշտպանություն» հասկացությունը օգտագործվում է ՀՀ սոցիալական ոլորտը կանոնակարգող մի շարք նորմատիվ-իրավական փաստաթղթերում, այնուամենայնիվ, ոչ բոլոր դեպքերում է, որ այն հստակ սահմանված է: Այսպես, «սոցիալական պաշտպանություն» հասկացությունը առկա է ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում, որտեղ վերջինս մեկնաբանվում է որպես «...պետական և ոչ պետական մարմինների այն գործողությունների ամբողջությունը, որն ուղղված է տնային տնտեսությունների ու անհատների՝ որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքները հոգալու հնարավորությունների ընդլայնմանը: Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակը պետության կողմից այդ ռիսկերի կառավարումն է՝ դրանց կարգավորման ու նվազեցման նպատակով»¹³⁵: Այս փաստաթղթին փոխարինած ՀՀ կայուն զարգացման ծրագրում վերոհիշյալ հասկացությունը ճիշտ նույն կերպ է մեկնաբանված¹³⁶: Իսկ Կայուն զարգացման ծրագրին փոխարինած ՀՀ 2012-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում սոցիալական պաշտպա-

¹³⁴Տե՛ս Յարմալոյան Մ., Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի և մոդելի ձևավորումը հետխորհրդային Հայաստանում // «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 142.5, Երևան 2014թ., էջ 18:

¹³⁵Տե՛ս Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003թ., էջ 75:

¹³⁶Տե՛ս Կայուն զարգացման ծրագիր, Եր., 2008թ., էջ 210:

նությունը դիտվում է որպես ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը¹³⁷: Մեկ այլ պաշտոնական փաստաթղթում՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում, նշվում է, որ բարեկեցության ոլորտում ազգային անվտանգությանը ծառայող հիմնական գործողություններից մեկը տարբեր խոցելի խմբերի սոցիալական պաշտպանվածությունը ապահովող սոցիալական քաղաքականության իրագործումն է¹³⁸:

Հատկանշական է այն հանգամանքը, որ ՀՀ 2003-2005թթ., 2004-2006թթ., 2005-2007թ., 2006-2008թթ., 2007-2009թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում օգտագործված են «սոցիալական ապահովություն» և «սոցիալական ապահովագրություն» հասկացությունները, մինչդեռ շարունակում է բացակայել «սոցիալական պաշտպանություն» հասկացությունը¹³⁹: Այն երևան եկավ ՀՀ 2011-2013թթ., 2014-2016թթ., 2015-2017թթ., 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում, որտեղ շեշտադրվում է այն հանգամանքը, որ սոցիալական պաշտպանությունը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից է¹⁴⁰:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում «սոցիալական պաշտպանություն» հասկացության սահմանները գծվում են ոչ միայն գործող Սահմանադրությամբ և ՀՀ սոցիալական օրենսդրությամբ, այլ նաև միջազգային հանրության առջև ստանձնած պարտավորություններով: Վերջինիս առումով հատկապես կարևորվում է Ստրասբուրգում 1996 թվականին ստորագրված Եվրոպական վերանայված սոցիալական խարտիան, որտեղ ոչ միայն ներկայացված են սոցիալական պաշտպանության սահմանումը և նրանից բխող իրավունքները, այլև դրանց իրացման մեխանիզմները: Ըստ էության, Եվրոպական վերանայված

¹³⁷ Տե՛ս ՀՀ 2012-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Եր., 2014թ., էջ 116:

¹³⁸ Տե՛ս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն՝ ընդունված 07.02.2007թ.:

¹³⁹ Տե՛ս ՀՀ 2003-2005թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, Եր., 2002թ., ՀՀ 2004-2006թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, Եր., 2003թ., ՀՀ 2005-2007թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, Եր., 2004թ., 2006-2008թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, Եր., 2005թ., ՀՀ 2007-2009թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, Եր., 2006թ.:

¹⁴⁰ Տե՛ս ՀՀ 2011-2013թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, Եր., 2010թ., ՀՀ 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, Եր., 2013թ., ՀՀ 2015-2017թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, Եր., 2014թ., ՀՀ 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, Եր., 2015թ.:

սոցիալական խարտիայում ամրագրված են սոցիալական իրավունքի բոլոր տեսակները¹⁴¹:

Խարտիային միանալով՝ ՀՀ-ը պարտավորվել է նախապես սահմանված ժամանակահատվածում վավերացնել վերոհիշյալ փաստաթղթի մի շարք հոդվածներ: Այս ընթացակարգը, ըստ էության, հնարավորություն է ընձեռում խարտիան ընդունած պետություններին աստիճանաբար լուծել բնակչության սոցիալական պաշտպանության խնդիրները¹⁴²:

Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել են Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի 13 հոդվածներ և այլ հոդվածների ևս 18 կետերը¹⁴³: Ըստ հոդվածների՝ պարտավորությունները հետևյալ տեսքը ունեն. «Հոդված 1. Աշխատանքի իրավունքը», «Հոդված 2. Աշխատանքի արդար պայմանների իրավունքը», «Հոդված 5. Կազմակերպելու իրավունքը», «Հոդված 7. Երեխաների և երիտասարդների պաշտպանվածության իրավունքը», «Հոդված 8. Աշխատող կանանց մայրության պաշտպանվածության իրավունքը», «Հոդված 17. Երեխաների և երիտասարդների սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության իրավունքը», «Հոդված 18. Մյուս Կողմերի տարածքներում վճարովի աշխատանքով զբաղվելու իրավունքը», «Հոդված 19. Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանվածության և օգնություն ստանալու իրավունքը», «Հոդված 20. Առանց սեռական խտրականության՝ աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը», «Հոդված 22. Աշխատանքային պայմանների և աշխատանքային միջավայրի սահմանմանը և բարելավմանը մասնակցելու իրավունքը», «Հոդված 24. Աշխատանքից ազատելու դեպքերում պաշտպանվածության իրավունքը», «Հոդված 27. Ընտանեկան պարտավորություններով աշխատողների հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը», «Հոդված 28. Ձեռնարկություններում և նրանց

¹⁴¹Տե՛ս Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա՝ ընդունված 03.05.1996թ.:

¹⁴² Տե՛ս Սոցիալական բարեփոխումները Հայաստանում, մաս երկրորդ, «Հրայր Մարության» հիմնադրամ, Երևան, սեպտեմբեր, 2012թ., էջ 117:

¹⁴³Տե՛ս Acceptance of provisions of the Revised European Social Charter (1996) www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Presentation/ProvisionTableRevOct2011.pdf, 11.11.2015թ., ժամը՝ 13:00:

տրամադրվելիք մեխանիզմներում աշխատողների ներկայացուցիչների պաշտպանվածության իրավունքը»:

Նշված հոդվածների պահանջներն ու բովանդակությունը հուշում են, որ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է միջազգային պարտավորություններ հիմնականում աշխատողների սոցիալական իրավունքների ապահովման գծով:

Այս հոդվածներից զատ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք հոդվածների առանձին կետերը: Վերջինների վավերացումը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունը ներկայումս չի կարող ստանձնել հոդվածով սահմանված իրավունքի իրացումը ամբողջ ծավալով, սակայն քայլեր է ձեռնարկում այդ իրավունքը մասնակիորեն ապահովելու ուղղությամբ: Այսպես, ՀՀ-ը ամբողջությամբ չի վավերացրել վերոհիշյալ Խարտիայի 3-րդ հոդվածը, որում ձևակերպված է անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքը: Սակայն կարևորելով այդ իրավունքը և միևնույն ժամանակ ընդունելով վերջինիս իրացման դժվարությունները՝ պետությունը ընդամենը հայտարարել է 3-րդ հոդվածի առաջին կետով նախատեսված ազգային քաղաքականության մշակման պատրաստակամության մասին: Խարտիայի 4-րդ հոդվածը, որը վերաբերում է արդարացի վարձատրման իրավունքին, համարյա ամբողջությամբ վավերացվել է ՀՀ-ի կողմից: Այսպես, Հայաստանի Հանրապետությունը չի վավերացրել միայն վերոհիշյալ հոդվածի առաջին կետը, որով սահմանված է աշխատողներին և նրանց ընտանիքներին պատշաճ կենսամակարդակ ապահովելու պետության պարտավորությունը¹⁴⁴:

Հայաստանի Հանրապետությունը չի վավերացրել կոլեկտիվ գործարքների կնքման (հոդված 6), մասնագիտական ուսման (հոդված 10), առողջության պաշտպանվածության (հոդված 11), ընտանիքի սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության (հոդված 16), տեղեկատվության և խորհրդրդատվության (հոդված 21), տարեց մարդկանց սոցիալական պաշտպանվածության (հոդված 23), գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների հայցերի պաշտպանվածության (հոդված 25), աշխատանքում արժանապատվության (հոդված 26), աշխատանքից կոլեկտիվ ազատման ընթացակարգերում տեղեկատվության և

¹⁴⁴ Տե՛ս Սոցիալական բարեփոխումները Հայաստանում, մաս երկրորդ, «Հրայր Մարուխյան» հիմնադրամ, Երևան, սեպտեմբեր, 2012թ., էջ 118:

խորհրդատվության (հոդված 29), աղքատությունից և սոցիալական անարդարությունից պաշտպանվածության (հոդված 30) և բնակարանային ապահովման (հոդված 31) իրավունքներին վերաբերող հոդվածները¹⁴⁵:

Ըստ էության, Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի չվավերացված հոդվածները սոցիալական պաշտպանության տեսանկյունից չափազանց մեծ կարևորություն ներկայացնող հոդվածներ են, քանի որ դրանցում սահմանված են ինչպես բնակչության առանձին խմբերի սոցիալական պաշտպանության, այնպես էլ աղքատությունից և սոցիալական անարդարությունից քաղաքացիների պաշտպանվածության կարևորությունը:

Հետխորհրդային Հայաստանում *բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի իրավանորմատիվային ենթահամակարգի ուսումնասիրությունը* ենթադրում է նաև ազգային սոցիալական օրենսդրության ուսումնասիրություն: Այս առումով հարկ է նշել, որ 2001 թվականին և դրանից հետո ընդունված մի շարք օրենսդրական ակտերով, առաջին, հերթին, ապահովվեցին բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում նորմատիվ-իրավական, ինչպես նաև պետական սոցիալական երաշխիքների իրականացման հիմքերը: Այս գործընթացի զարգացման գործում նշանակալի իրադարձություն էր ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մշակումը 2003 թվականին, որտեղ աղքատությունը դիտվում էր որպես սոցիալական ռիսկ:

ՀՀ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով նախատեսվում էր աջակցության տրամադրում աղքատ ընտանիքներին, երեխաներ ունեցող ընտանիքների բարեկեցության ապահովում, նոր սոցիալական տեխնոլոգիաների զարգացում, խոցելի խմբերին մատուցվող սոցիալական ծառայությունների ծավալի մեծացում¹⁴⁶ և այլն: Միաժամանակ ձևավորվեցին սոցիալական ենթակառուցվածքի նոր տարրեր՝ քաղաքացիների սոցիալական սպասարկման կառույցներ (սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ): Ընդ որում, սոցիալական պաշտպանության հայեցակարգային հիմքերի վերանայումը տեղի էր ունենում՝ հաշվի

¹⁴⁵Տե՛ս Եվրոպական սոցիալական խարտիան (վերանայված)

www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Presentation/ESCRBooklet/Armenian.pdf, 21.10.2015թ., ժ. 15:47:

¹⁴⁶ Տե՛ս Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003թ.:

առնելով յուրաքանչյուր քաղաքացու կենսաապահովման համար անհրաժեշտ և պետության կողմից սահմանված սոցիալական երաշխիքների տրամադրման առաջնահերթությունը: Դրա համար ստեղծվեց անհրաժեշտ նորմատիվային հիմք, մասնավորապես՝ 2004 թվականի մարտի 16-ին ընդունվեց «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը, իսկ 2005 թվականի հոկտեմբերի 24-ին՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը: Այնուհետև ընդունվեցին մի շարք իրավական ակտեր, որոնք անմիջականորեն կապված էին բնակչության սոցիալական պաշտպանության հետ:

Կարևոր է նշել, որ բնակչության սոցիալական պաշտպանությանը առնչվող օրենսդրության մեջ գերակշռում էին այն իրավական ակտերը, որոնք ուղղված էին բնակչության խոցելի խմբերի (կենսաթոշակառուներ, փախստականներ, հաշմանդամություն ունեցող անձինք, երեխաներ ունեցող ընտանիքներ և այլն) սոցիալական պաշտպանության ապահովմանը¹⁴⁷:

Սակայն իրավական հիմքերի պարզապես ստեղծումը դեռևս չի նշանակում նորմերի արմատավորում: Վերջինս իր հերթին կախված է միջոլորտային ռազմավարությունների համաձայնեցումից, որոշումների ընդունման ապակենտրոնացումից, միջոցների նպատակային վերաբաշխումից:

Հետխորհրդային Հայաստանում բնակչության պաշտպանությանը առնչվող նորմատիվ-իրավական փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք կառուցված են մեկ ընդհանուր սկզբունքի վրա, մասնավորապես՝ ամրագրում են քաղաքացիների մեկանգամյա կամ պարբերաբար օգնություն ստանալու իրավունքը բոլոր այն դեպքերում, երբ վերջիններս հայտնվում են կյանքի դժվարին իրավիճակներում: Ըստ էության, որպես սոցիալական պաշտպանության օբյեկտ՝ շարունակում են հանդես գալ կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձինք:

Այսպիսով, Եվրոպական վերանայված սոցիալական խարտիային միանալուց հետո ՀՀ-ում սոցիալական պաշտպանությանն առնչվող նորմատիվ-իրավական, ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք փաստաթղթերում սկսեց կիրառվել

¹⁴⁷Տե՛ս «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 14.04.1993թ., «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 27.11.2008թ., «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 22.12.2010թ., «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 12.12.2013թ. և այլն:

«սոցիալական պաշտպանություն» եզրույթը, սակայն գործող սոցիալական պաշտպանության տիպանմուշը չփոխվեց, ինչպես նաև ամբողջովին չձևավորվեց սոցիալական պաշտպանության նոր համակարգը՝ սոցիալական պաշտպանության մեխանիզմներից առավելապես սոցիալական օգնության մեխանիզմի կարևորման հետևանքով:

2.3 Սոցիալական պաշտպանության տիպանմուշի կերպափոխումը՝ որպես սոցիալական ոլորտում իրականացվող արդի բարեփոխումների հետևանք

Ժամանակակից աշխարհում սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումների գլխավոր նպատակը, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ուսումնասիրությունը, վերջինիս գործառնման արդյունավետության շարունակական բարձրացումն է: Վերջին տարիներին ՀՀ սոցիալական ոլորտում իրականացվող բարեփոխումները նպատակ են հետապնդում արձագանքել ոչ միայն առկա կարիքներին, այլ նաև կանխատեսել հետագա ռիսկերը և կառավարել դրանք: Իրականացվող բարեփոխումները ներառում են որոշակի հայեցակարգային փոփոխություններ կենսաթոշակային ապահովության, զբաղվածության, երեխաների պաշտպանության, սոցիալական աջակցության, սոցիալական ծառայությունների ոլորտներում¹⁴⁸:

Ներկայումս իրականացվող սոցիալական բարեփոխումների հիմնական առանցքներից մեկը բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայություններն են: Ուստի ատենախոսության այս մասում հանգամանալից կանդրադառնանք վերոնշյալ ծառայությունների կազմակերպչական և բովանդակային խնդիրներին և դրանց լուծման հնարավոր ուղիներին:

Մեր իրականացրած հետազոտության արդյունքները¹⁴⁹ ցույց են տալիս, որ ՀՀ-ում բնակչությանը սոցիալական ծառայություններ մատուցվում են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական կազմակերպությունների կողմից: Վերջիններիս կանոնադրական փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում առկա են բազմաթիվ վերաճածներ, գործառությանին անհամապատասխանություններ, որոնք դրսևորվում են սոցիալական քաղաքականության մշակման, համակարգման և սոցիալական ծառայությունների տրամադրման մակարդակներում: Օրինակ՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և՛ սոցիալական քաղաքա-

¹⁴⁸ Տե՛ս «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 22.12.2010թ., «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 11.12.2013թ., «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 17.12.2014թ., ՀՀ զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարություն:

¹⁴⁹ Մեր կողմից իրականացված որակական հետազոտության մեթոդաբանությունը և ընտրանքային համախմբությունը մանրամասն նկարագրված է սույն ատենախոսության երրորդ գլխի առաջին ենթագլխում:

կանություն մշակող, և՛ դրա իրագործումը վերահսկող, և՛ որոշակի սոցիալական ծառայություններ մատուցող կառույց է: Նույնը, թերևս, ճիշտ է ասել նաև այլ գերատեսչությունների համար, որոնք անմիջականորեն մատուցում են որոշակի սոցիալական ծառայություններ, որոնց օբյեկտները կամ շահառու խմբերը հստակ առանձնացված չեն:

Հայաստանում տարբեր կառույցների կողմից մատուցվող միևնույն տիպի ծառայությունները համակարգելու կարիք կա, ինչը լուրջ մարտահրավեր է: Օրինակ՝ մեր երկրում բնակարանային ապահովման հիմնախնդրի լուծմանն ուղղված մի շարք ծրագրեր են միաժամանակ իրականացվում պետական մի քանի գերատեսչությունների (<< սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, << կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, Միգրացիոն պետական ծառայություն և այլն), ինչպես նաև բարեգործական և միջազգային տարբեր կազմակերպությունների (Save the Children, USAID և այլն) կողմից: Չնայած դերակատարների այսպիսի բազմազանությանը՝ վերոհիշյալ հիմնախնդիրը դեռևս մնում է չլուծված¹⁵⁰:

Մեր իրականացրած հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանում պետական կազմակերպությունների կողմից տարբեր սոցիալական խմբերին հիմնականում մատուցվում են ընդհանրական բնույթի սոցիալական ծառայություններ՝ անտեսելով մարդկանց անհատական կարիքները: Իսկ ոչ պետական կազմակերպությունների կողմից բնակչության առանձին խոցելի խմբերին (երեխաներ, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ, կանայք, փախստականներ և այլն) մատուցվող ոչ դրամական բնույթի ծառայությունները հիմնականում ծրագրային բնույթ են կրում և շարունակական չեն:

Այսպիսով, Հայաստանում սոցիալական ծառայությունների մատուցումը հիմնվում է ոչ թե անհատների կամ տարբեր սոցիալական խմբերի իրական կարիքներ-

¹⁵⁰Տե՛ս Անտոնյան Մ., Սոցիալական ծառայությունների կազմակերպման և մատակարարման հայեցակարգային և համակարգային վերափոխումների ներկա մարտահրավերները ՀՀ-ում //, «Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքի պրակտիկան ՀՀ-ում. արդի զարգացումները», գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածու, 10, 11 նոյեմբերի, 2014թ., Եր., 2015, էջ 126:

երի համակողմանի գնահատման, այլ տարբեր փաստաթղթեր ներկայացնելու, դրանց իսկությունը ստուգելու և վարչական բնույթի այլ գործընթացների վրա: Ստացվում է, որ շահառուներին մատուցվում են ընդհանրական, այլ ոչ թե անհատականացված կամ իրական սոցիալական ծառայություններ, որոնք օրենսդրորեն նախատեսվում էր ստեղծել դեռևս 2005 թվականին՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ¹⁵¹: Փաստորեն գործող ծառայությունները չեն համապատասխանում օրենքի այս պահանջին, քանի որ աշխատում են բաշխման կամ վերաբաշխման սկզբունքով:

Պրակտիկայում իրական սոցիալական ծառայությունների ստեղծումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե գործող սոցիալական ծառայություններում ներդրվեն սոցիալական աշխատանքի մոտեցումները: Սա իր հերթին ենթադրում է ծառայությունների արմատական վերափոխում, կադրերի լիակատար վերանայում, ինչը բավականին ցավոտ գործընթաց է: Այդ իսկ պատճառով 2005 թվականին օրենքով ամրագրված իրական սոցիալական ծառայություններ ունենալու պահանջը մնաց ցանկությունների մակարդակում:

Հարկ է նշել, որ Հայաստանում գործող տարբեր սոցիալական ծառայություններից և ոչ մեկը պատասխանատու չէ ծառայություններից օգտվողների կարիքների համակողմանի բավարարման համար, ինչն, ըստ էության, նախատեսված է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով¹⁵²: Ստացվում է, որ անհատներին, տարբեր սոցիալական խմբերին սոցիալական ծառայություններ մատուցելիս՝ ցուցաբերվում է սեգմենտալ մոտեցում: Դրա պատճառով հաճախ կարիքի մեջ գտնվող մարդկանց հնարավոր չի լինում տրամադրել անգամ առկա, գոյություն ունեցող ծառայությունները, քանի որ դրանք մի տեղում այդպես էլ չեն խաչվում: Ավելին, անգամ նման պահանջ չկա որևէ ծառայության գործառույթներում¹⁵³:

Վերոնշյալ խնդրի լուծման համար կարևոր է, որպեսզի Հայաստանում գործող տարբեր սոցիալական ծառայությունները՝ գերատեսչական ենթակայությունից և

¹⁵¹ 2005 թվականին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված էին «...գործողություններ, որոնք կօգնեն շահառուին դառնալու ինքնաբավ և գործելու անկախ»:

¹⁵² Տե՛ս «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 17.12.2014թ.:

¹⁵³ Տե՛ս «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիա, Հայաստանի Հանրապետություն, Համաշխարհային բանկ, Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագիր, փոխառություն թիվ 7848 ԱՄ, ձեռնարկ 1:

Ֆինանսավորման աղբյուրից անկախ, ընդգրկվեն մեկ միասնական համակարգում: Այս մոտեցումը չի ենթադրում, որ ծառայությունները անպայման պետք է հավաքագրվեն մեկ գերատեսչության ներքո, սակայն անպայման ենթադրում է «ղեկավարում մեկ կետից»:

Հայաստանում տարբեր խոցելի խմբերին՝ երեխաներին, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցներին, փախստականներին և այլն, մատուցվող քիչ թե շատ անհատականացված ծառայությունները գտնվում են կենտրոնացված ղեկավարման ներքո, ինչը թուլացնում դրանց անհատականացված բնույթը¹⁵⁴:

Վերոհիշյալ բովանդակային խնդիրները, որոնք ունեն անմիջական և խորքային պատճառներ, ըստ էության, առկա են բոլոր ծառայություններում: Անմիջական պատճառներից առանձնացվում են աշխատանքային-ֆիզիկական անբավարար պայմանները, անբավարար տեխնիկական հագեցվածությունը, ցածր վարձատրությունը և այլն: Խորքային պատճառներից են հայեցակարգային անհստակությունները, սոցիալական պաշտպանության համակարգում իրական սոցիալական ծառայությունների և իրական սոցիալական մասնագետների բացակայությունը և այլն¹⁵⁵:

Այսպիսով՝ կենտրոնացված ղեկավարում ունեցող ծառայությունները բաշխված են տասնյակի հասնող գերատեսչությունների (դերակատարների) միջև, որոնց մեծ մասը գտնվում է կենտրոնական իշխանության մակարդակում:

Ստեղծված իրավիճակում, ըստ սոցիալական պաշտպանության ոլորտի փորձագետ Մ. Անտոնյանի, կարևորվում են մի քանի հարցադրումներ, մասնավորապես՝

- ինչպե՞ս է հնարավոր ՀՀ-ում գործող սոցիալական ծառայությունները դարձնել արդյունավետ. ղեկավարման կենտրոնացումը մեկ տեղում (այսինքն՝ բարիքների բաշխման վերաբերյալ որոշումների ընդունման և

¹⁵⁴Այս դեպքում տարբեր սոցիալական խմբերին տրամադրվող դրամական և ոչ դրամական բնույթի ծառայությունների միջև հավասարության նշան է դրվում:

¹⁵⁵Տե՛ս Անտոնյան Մ., Սոցիալական ծառայությունների կազմակերպման և մատակարարման հայեցակարգային և համակարգային վերափոխումների ներկա մարտահրավերները ՀՀ-ում //, «Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքի պրակտիկան ՀՀ-ում. արդի զարգացումները», գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածու, 10, 11 նոյեմբերի, 2014թ., Եր., 2015, էջ 132-133:

դրա իրականացումը համակարգող գործառույթների կենտրոնացումը մեկ տեղում), թե՛ դեպի այդ ծառայություններ մուտքի կենտրոնացումը մեկ տեղում դարձնելով,

- ո՞ր ծառայություններին պետք է վերաբերի արդյունավետության հասնելու մտադրությունը՝ միայն ԱՍՀՆ ներքո գործող, թե՛ ընդհանրապես բոլոր սոցիալական ծառայություններին՝ անկախ գերատեսչական ենթակայությունից ու ֆինանսավորման աղբյուրից¹⁵⁶:

Վերոհիշյալ խնդրի լուծման տարբերակների թվում փորձագետը առանձնացնում է արմատական լուծման այնպիսի տարբերակ, որը ենթադրում է երկրում գործող բոլոր սոցիալական ծառայությունների հանդեպ «մուտքը» մեկ կետից, իսկ ղեկավարումը (ենթակայություն) ու համակարգումը (առանց ենթակայության)՝ մեկ գերատեսչության ներքո դարձնելը: Մեկ այլ դեպքում, ըստ փորձագետի, կարող են ինտեգրվել միայն ԱՍՀՆ ներքո գործող ծառայությունները՝ կառուցվաքագործառույթային և բովանդակային լուրջ վերանայումներով: Երրորդ դեպքում կարող են ստեղծվել միասնական ընդունարաններ՝ առանց գործող դասական ծառայություններում լուրջ կառուցվածքագործառույթային կամ բովանդակային փոփոխություններ կատարելու¹⁵⁷:

*Ամփոփելով՝ կարևոր է նշել այն հանգամանքը, որ ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման և հեղափոխական զարգացման, ինչպես նաև բարեփոխումների բարեհաջող իրականացման տեսանկյունից կարևորվում է **բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների կազմակերպչական և բովանդակային խնդիրների լուծումը:***

Հաշվի առնելով իրականացվող բարեփոխումների գործընթացում միջազգային կազմակերպությունների ունեցած դերակատարությունը՝ նպատակահարմար է առանձին անդրադառնալ այդ խնդրին: Միջազգային կազմակերպությունների պահանջով ստեղծված հուշագրերի համաձայն համակարգված փոփոխությունների անհրաժեշտ գործողությունների շարքը կրում է ընդհանուր, ոչ ամբողջական,

¹⁵⁶Տե՛ս Անտոնյան Մ., Սոցիալական ծառայությունների կազմակերպման և մատակարարման հայեցակարգային և համակարգային վերափոխումների ներկա մարտահրավերները ՀՀ-ում //, «Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքի պրակտիկան ՀՀ-ում. արդի զարգացումները», գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածու, 10, 11 նոյեմբերի, 2014թ., Եր., 2015, էջ 133-134:

¹⁵⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 134:

անիրատեսական և ոչ շարունակական բնույթ: Չնայած ձևական պահանջների կատարման ճշտությանը (ժամկետներ, կանոնակարգեր, օրենսդրական փոփոխություններ և այլն), այդ պահանջների շրջանակներում ստեղծված նորամուծությունները չեն խմորվում իրականության հոլովույթում և կրում են արհեստական բնույթ:

Արհեստականորեն որակական հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ համայնքային մակարդակում միջազգային դոնորների կողմից իրականացվում են կարողությունների զարգացմանն ուղղված բազմազան ծրագրեր, սակայն հետագայում չստանալով սնուցող միջոցներ, կարճ ժամանակ անց սոցիալական պաշտպանության համակարգը հետադարձ է կատարում դեպի աշխատանքի սովորական հունը, ինչը լուրջ մարտահրավեր է:

Անդրադառնալով վերջին շրջանում դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող մի շարք նորամուծություններին՝ հարկ է նշել, որ բարեփոխումների խնդիրը կապված է ոչ թե նորարությունների պակասի, այլ դրանց ավելցուկի հետ, ընդ որում դրանք ոչ միշտ են լավ մշակված: Նորույթները երբեմն բխում են «կենտրոնից», որը ձգտում է ընդունել այս կամ այն դոնորի ներդրումները և հաստատում է նպատակային խնդիրներ նոր ծառայությունների արմատավորման համար: Այդպիսի ջանքերի բնորոշ առանձնահատկություններից է տեղական իշխանության և հասարակական կազմակերպությունների միջև գործընկերական կապեր ստեղծելու դոնորի կոչը: Նման նախաձեռնությունները երբեմն բախվում են ֆինանսավորման բարդ սխեմաների հետ, ինչի արդյունքում ուշադրությունը և միջոցները շեղվում են հիմնախնդրի լուծումից, համակարգային բարենորոգումից: Եթե նորամուծությունները հենց սկզբից կապված լինեին հիմնական ծառայությունների մատուցման բարեփոխման և ամրապնդման հետ, ապա արդյունքները կլինեին ավելի ակնհայտ: *Այս առումով կարևոր քաղաքական հարցերից մեկը վերաբերում է գործողությունների տրամաբանության հաջորդականության ապահովմանը՝ օրենսդրություն, նոր ծառայությունների ստեղծում, առկա ծառայությունների վերանայում և կարողությունների զարգացում:*

Կարևոր է հասկանալ, թե արդի սոցիալական բարեփոխումների արդյունքում, այսպիսով սոցիալական պաշտպանության ի՞նչ տիպանմուշ է ներկայումս գործում <<

ում: Մինչև այդ կարևոր է նշել, որ սոցիալական պաշտպանության տարբեր տիպանմուշների համեմատական վերլուծության արդյունքում կարելի է գալ այն եզրահանգման, որ որևէ երկրի որդեգրած սոցիալական պաշտպանության տիպանմուշը անպայմանորեն պետք է համահունչ լինի տվյալ երկրի սոցիալ-մշակութային համատեքստի հետ, հակառակ դեպքում օտար համակարգերի ներդրմանը ուղղված ջանքերը չեն կարող ապահովել ցանկալի արդյունքներ:

«Սոցիալական պաշտպանության ներկայիս տիպանմուշում տարանջատված են **սոցիալական օգնության ակտիվ և պասիվ ձևերը**: Սոցիալական օգնության ակտիվ ձևերը նախատեսված են սոցիալական, ստեղծագործական և աշխատանքային ակտիվությունը խթանելու համար և ուղղված են անձի ինքնաապահովմանն ու ինքնազարգացմանը: Վերջինիս շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝ կադրերի մասնագիտական պատրաստման և վերապատրաստման համակարգի կատարելագործում, բնակչության զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի մշակում, ձեռներեցության զարգացում, հաշմանադամություն ունեցող անձանց աշխատատեղերի քվոտավորում և այլն: Սոցիալական օգնության պասիվ միջոցառումների թվին են պատկանում բնակչության առավել խոցելի խմբերին (հաշմանադամներ, հղիներ, երեխայի խնամքի արձակուրդում գտնվող մայրեր և այլն) տրամադրվող ուղղակի դրամական հատկացումները¹⁵⁸:

Սոցիալական օգնության ակտիվ և պասիվ ձևերի տարանջատումը ենթադրում է պետության միակողմանի պարտականություններից անցում կատարել պետության և քաղաքացու երկկողմանի պարտականություններին, ասել է թե՛ «սոցիալական գործողության ալգորիթմին», որը ենթադրում է սոցիալական օգնության տրամադրման գործընթացում հասցեականության սկզբունքի շեշտադրում քաղաքացիների այն կատեգորիաների նկատմամբ, ովքեր ունեն օբյեկտիվ տնտեսական դժվարություններ, բայց միևնույն ժամանակ շահագրգռված են վերականգնելու աշխատանքային

¹⁵⁸Տե՛ս Յարմալոյան Մ., Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի և մոդելի ձևավորումը հետխորհրդային Հայաստանում // «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 142.5, Երևան 2014թ., էջ 24:

ակտիվությունն ու սոցիալական դրական կապերը¹⁵⁹: Ավելին, նշված ալգորիթմը ենթադրում է նաև նախապայմանների առաջադրում անգամ պասիվ օգնության ձևերի տրամադրման գործընթացում՝ նպատակ ունենալով գործողության մղել նաև քրոնիկ պասիվ համարվող խմբերին: Ըստ էության բարեփոխումների արդյունքում փոփոխվեց սոցիալական օգնության տրամադրման գործընթացում հասցեականության սկզբունքը, սկսեց կարևորվել սոցիալական ապահովագրության մեխանիզմը:

Մեր իրականացրած հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ-ում սոցիալական օգնության ակտիվ և պասիվ ձևերը կոնկրետ սոցիալական խմբերի պարագայում կիրառվում են չկապակցված, ինչը վկայում է այն մասին, որ վերոնկարագրյալ «սոցիալական գործողության ալգորիթմը» դեռևս ամբողջությամբ չի գործում: Միևնույն ժամանակ բարեփոխումների անհետևողական իրագործումը հանգեցրել է սոցիալական պաշտպանության գոյություն ունեցող մեխանիզմների անարդյունավետ գործառնմանը, ինչպես նաև սոցիալական պաշտպանության էկլեկտիկ տիպանմուշի ձևավորմանը: Ըստ էության, այժմ ՀՀ-ում դժվար է նույնականացնել սոցիալական պաշտպանության որևէ կոնկրետ տիպանմուշ՝ ո՛չ ազատական, ո՛չ պահպանողական և ո՛չ էլ սոցիալ-ժողովրդավարական: Բացի այդ, բարեփոխումների արդյունքում սոցիալական պաշտպանության գոյություն ունեցող տիպանմուշում առավել ընդգծվեցին ազատական տիպանմուշի որոշակի գծեր՝ դարձնելով այն ոչ միայն էկլեկտիկ, այլև հակասական:

¹⁵⁹Տե՛ս Խասբուլատովա Օ.Ա., Эрмиш И.Г. Модернизационные аспекты системы социальной защиты населения // Женщина в российском обществе. – 2010. – №3, էջ 3-8:

3. ՀՀ-ՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՎԱՐՏԻՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

3.1 ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանվածության վիճակը. օբյեկտիվ ցուցանիշների և սուբյեկտիվ ընկալումների համադրում

Հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը վերլուծելու, ինչպես նաև բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորումն ու զարգացումը ուսումնասիրելու նպատակով աշխատանքում կիրառվել է *փաստաթղթերի ավանդական վերլուծության մեթոդը*, մասնավորապես՝ ուսումնասիրվել են բազմաթիվ աղբյուրներ՝ վիճակագրական տվյալներ, ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանությանը առնչվող նորմատիվ-իրավական ակտեր, դոնոր և իրագործող տարբեր կառույցների իրականացրած ծրագրերի հաշվետվություններ, հրապարակումներ, գիտաժողովների նյութեր: Եզրահանգումները ամբողջացնելու նպատակով երկրորդային վերլուծության են ենթարկվել հետանկախության տարիներին պետական և դոնոր տարբեր կազմակերպությունների կողմից Հայաստանում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունների տվյալները:

Հայաստանում սոցիալական պաշտպանության համակարգում տեղի ունեցող փոփոխությունները, ինչպես նաև բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգի առանձնահատկությունները, առկա խնդիրները և դրանց հաղթահարման հնարավոր ուղիները պարզելու համար իրականացվել է սոցիալական պաշտպանվածության սոցիոլոգիական հետազոտություն խորին և փորձագիտական հարցազրույցների մեթոդներով: Հարցվել են քաղաքականություն մշակողներ, որոշումներ կայացնողներ, սոցիալական ծառայություններ մատուցողներ: Ինչ վերաբերում է որակական հետազոտության ընտրանքին, ապա կազմվել է նպատակաուղղված տիպային ընտրանք: Ընտրանքի ծավալը պայմանավորված է եղել տեղեկատվության հազեցման շեմով, մասնավորապես՝ քաղաքականության մշակման և որոշումների կայացման մակարդակներում իրականացվել է 30 *փորձագիտական հարցազրույց*, իսկ

սոցիալական ծառայությունների տրամադրման մակարդակում՝ 20 խորին հարցազրույց:

Հաշվի առնելով բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող օբյեկտիվ ցուցանիշների և սուբյեկտիվ գնահատականների կիրառման անհրաժեշտությունը և առանձնահատկությունները, ինչպես նաև հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանվածության ուսումնասիրման ոչ բավարար մակարդակը՝ վերլուծվել են բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող մի շարք ինչպես օբյեկտիվ ցուցանիշներ, այնպես էլ սուբյեկտիվ գնահատականներ՝ հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի առավել ամբողջական պատկերը ստանալու համար:

Օբյեկտիվ ցուցանիշներից նախ և առաջ անհրաժեշտ է անդրադառնալ «Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսին: Հայաստանի «Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսների 1995-2013թթ. դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակահատվածում Հայաստանը ըստ ամփոփ ինդեքսի մակարդակի՝ դասվել է զարգացման «բարձր մակարդակ» ունեցող երկրների թվին՝ զբաղեցնելով 87-ից մինչև 83-րդ տեղերը¹⁶⁰: Հայաստանի «Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսի հիմքում ընկած ցուցանիշների դինամիկան ցույց է տալիս, որ 1995-2011 թթ. ընթացքում այս ինդեքսը աճել է 20,3%-ով կամ յուրաքանչյուր տարի միջին հաշվով աճել է 2,3%-ով՝ 0,595-ից հասնելով 0,716-ի, ընդ որում՝ կյանքի միջին տևողությունը ավելացել է շուրջ 5,4 տարով, ուսման միջին տարիներն ու սպասվող տարիներն ավելացել են համապատասխանաբար 0,4 և 2,1 տարիներով, իսկ մեկ շնչի հաշվով եկամուտը ավելացել է 207%-ով¹⁶¹:

2015 թվականին Հայաստանը նախորդ տարվա համեմատ 2 հորիզոնականով բարելավել է դիրքերը՝ աշխարհի 188 երկրների շարքում՝ զբաղեցնելով 85-րդ տեղը (այն կիսելով Բոսնիայի և Ալբանիայի հետ): 2015 թվականի «Մարդկային ներուժի զարգացման» զեկույցում նշվում է, որ 2014թ. համար Հայաստանի մարդկային զարգացման համաթիվը կազմել է 0,733, կյանքի միջին տևողությունը եղել է 74,7 տարի, կրթության միջին տևողությունը՝ 12,3 տարի, կրթության սպասվող միջին

¹⁶⁰Տե՛ս Human Development Reports, 1995-2013:

¹⁶¹Տե՛ս Human Development Reports, 1995-2011:

տևողությունը՝ 10,9 տարի, իսկ մեկ շնչին բաժին ընկնող համախառն ազգային եկամուտն ըստ գնողունակության համարժեքի՝ 8124 դոլլար¹⁶²:

«Մարդկային ներուժի զարգացման» ինդեքսի վերլուծությունը, սակայն հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի մասին: Այդ իսկ պատճառով վերլուծվել են այլ օբյեկտիվ ցուցանիշներ ևս՝ հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար: Այդպիսի կարևոր ցուցանիշ է համարվում աշխատավարձը, մասնավորապես՝ նվազագույն և միջին աշխատավարձերը:

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1991-1993թթ. ընթացքում թե՛ նվազագույն, թե՛ միջին ամսական աշխատավարձերը աճել են, այնուհետ 1994թ.-ին՝ կտրուկ նվազել, իսկ 1995-2000թթ. ընթացքում ևս շարունակել են աճել: ՀՀ-ում 1999 թվականին սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը չի փոփոխվել մինչև 2003 թվականը ներառյալ՝ կազմելով 5000 ՀՀ դրամ: Այնուհետև 2004 թվականին այն կտրուկ աճել է՝ շուրջ 160%-ով: 2004-2015թթ. ընթացքում արձանագրվել են նվազագույն աշխատավարձի ինչպես աճի, այնպես էլ նվազման տեմպեր¹⁶³:

Բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը բնութագրող կարևոր օբյեկտիվ ցուցանիշ է նաև կենսաթոշակի միջին ամսական չափը: Կենսաթոշակի չափերին վերաբերող վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1991-2013թթ. ընթացքում կենսաթոշակները ևս աճել են¹⁶⁴:

Չնայած վերոնշյալ տվյալները ընդհանուր առմամբ արձանագրում են ինչպես նվազագույն և միջին աշխատավարձերի, այնպես էլ կենսաթոշակների աճ, դրանք բավարար չեն պնդելու, որ սոցիալական անպաշտպանվածության հիմնախնդիրը հաղթահարված է ՀՀ-ում: Վերոնշյալ տվյալները անպայմանորեն պետք է համեմատ-

¹⁶² Տե՛ս Human Development Report 2015, Work for Human Development, էջ 209:

¹⁶³ Տե՛ս ՀՀ ԱՍՀՆ պաշտոնական վեբ կայք, աշխատավարձի ոլորտի վիճակագրություն, http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=131&code_id=212, 07.10.2015թ., ժամը՝ 14:30:

¹⁶⁴ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005, էջ 84, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2007, էջ 82, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008, էջ 83: Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009, էջ 83, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014, էջ 95:

վեն նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին վերաբերող տվյալների հետ, քանի որ վերջինս¹⁶⁵ համարվում է բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող կարևոր օբյեկտիվ ցուցանիշ: Այսպես 2009թ. նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը երկրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով կազմել է **37853,3 դրամ**¹⁶⁶, 2010թ. չորրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ **52228.5 դրամ**¹⁶⁷, 2011թ.-ին միջին ընթացիկ քաղաքային գներով, մեկ շնչի հաշվով, ամսական կտրվածքով կազմել է **46566.4 դրամ**, 2012թ. երկրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ **53073,3 դրամ**, 2013թ. երկրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ **56799,9 դրամ**, 2014թ. երկրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ **59127,7 դրամ**¹⁶⁸:

Վերոնշյալ տվյալները փաստում են, որ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը ևս աճել է: Կարևոր է նշել այն հանգամանքը, որ նվազագույն ամսական աշխատավարձի հաշվարկի հիմքում անպայման պետք է դրվի նվազագույն սպառողական զամբյուղը, որպեսզի նվազագույն աշխատավարձով աշխատողները կարողանան հոգալ իրենց առաջնային կարիքները: Վիճակագրական տվյալները փաստում են, որ ՀՀ-ում՝ որպես կանոն, նվազագույն աշխատավարձի հաշվարկման հիմքում դրված չէ նվազագույն սպառողական զամբյուղը, ինչը հակասում է «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի, 1-ին կետին¹⁶⁹:

Կարևոր է համեմատել նաև նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի և բնակչության դրամական եկամուտների՝ աշխատանքային եկամուտների, սոցիալական տրանսֆերտների, բոլոր տեսակի վաճառքներից ստացված եկամուտների և այլ դրամական մուտքերի, դինամիկան՝ հասկանալու համար, թե որքանով են բնակ-

¹⁶⁵ Սպառողական զամբյուղը մարդու առողջության պահպանման և կենսագործունեության համար անհրաժեշտ ապրանքների ու ծառայությունների հիմնավորված նորմերով և նորմատիվներով սահմանված նվազագույն քանակն է:

¹⁶⁶ Տե՛ս ՀՀ ԱՎԾ պաշտոնական վեբ կայք, Հետաքրքրաշարժ վիճակագրություն, http://www.armstat.am/file/article/sv_06_09a_62.pdf, 14.10.2015թ., ժամը՝ 12:22:

¹⁶⁷ Տե՛ս ՀՀ ԱՎԾ պաշտոնական վեբ կայք, Հետաքրքրաշարժ վիճակագրություն, http://www.armstat.am/file/article/sv_12_10a_6300.pdf, 14.10.2015թ., ժամը՝ 12:11:

¹⁶⁸ Տե՛ս ՀՀ ԱՎԾ պաշտոնական վեբ կայք, Հետաքրքրաշարժ վիճակագրություն http://armstat.am/file/article/sv_06_14a_6200.pdfhttp://armstat.am/file/article/sv_06_14a_6200.pdf, 14.10.2014թ., ժամը՝ 12:43:

¹⁶⁹ Տե՛ս «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը, հոդված 7, կետ 1:

չության դրամական եկամուտները հնարավորություն ընձեռնում ձեռքբերելու նվազագույն սպառողական զամբյուղով նախատեսված անհրաժեշտ ապրանքներն ու ծառայությունները:

Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ բնակչության դրամական եկամուտները 2004-2014 թթ. ընթացքում աճել են՝ մեկ շնչի հաշվով 14450 դրամից հասնելով 49535 դրամի¹⁷⁰: Սակայն հատկանշական է այն հանգամանքը, որ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն բնակչության դրամական եկամուտներն ու նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը ուղիղ համեմատական չեն: Այսպես, 2005թ.-ին նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը կազմել է 16280,8 դրամ, իսկ տնային տնտեսությունների դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով՝ 15949 դրամ, 2006թ.-ին՝ 31677 դրամ, իսկ տնային տնտեսությունների դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով՝ 18446 դրամ, 2007թ.-ին՝ 33134,9 դրամ, իսկ տնային տնտեսությունների դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով՝ 22287 դրամ, 2008թ.-ին՝ 37634.2 դրամ, իսկ տնային տնտեսությունների դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով՝ 26866 դրամ, 2009թ.-ին՝ 37853,3 դրամ, իսկ տնային տնտեսությունների դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով՝ 28038 դրամ, 2010թ.-ին՝ 52228.5 դրամ, իսկ տնային տնտեսությունների դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով՝ 31553 դրամ, 2011թ.-ին՝ 46566.4 դրամ, իսկ տնային տնտեսությունների դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով՝ 34206 դրամ, 2012թ.-ին՝ 53073,3 դրամ, իսկ տնային տնտեսությունների դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով՝ 39056 դրամ, 2013թ.-ին՝ 56799,9 դրամ, իսկ տնային տնտեսությունների դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով՝ 42404 դրամ, 2014թ.-ին՝ 59127,7 դրամ, իսկ տնային տնտեսությունների դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով՝ 49535 դրամ:

Այսպիսով, բնակչության դրամական եկամուտները հնարավորություն չեն ընձեռնում ձեռքբերել նվազագույն սպառողական զամբյուղով նախատեսված

¹⁷⁰ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2007թ., էջ 89, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2010թ., էջ 106, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2014թ., էջ 102, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Եր., 2015թ., էջ 102:

անհրաժեշտ ապրանքներն ու ծառայությունները, ինչը վկայում է այն մասին, որ մարդկանց կենսական պահանջմունքների բավարարումը վրանգվում է: Հետևաբար նրանք հայտնվում են սոցիալապես անպաշտպան վիճակում:

Հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև բնակչության սոցիալական պաշտպանվածությունը բնութագրող սուբյեկտիվ գնահատականներին: Հարկ է նշել, որ մինչ օրս ՀՀ-ում իրականացվել են մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ, որոնց շրջանակներում ուսումնասիրվել են նաև ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանվածության ընկալումները:

2006թ.-ին Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում իրականացվել է տնային տնտեսությունների համեմատական հետազոտություն, որի շրջանակներում ուսումնասիրվել է նաև սոցիալական պաշտպանվածության վերաբերյալ մարդկանց ընկալումները: Տվյալ համեմատական հետազոտության շրջանակներում Հայաստանում մասնակցել է 2065 հարցվող, իսկ Ադրբեջանում և Վրաստանում՝ 2400-ական հարցվող¹⁷¹: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ տարածաշրջանում բնակչության մեծամասնությունը (մոտավորապես 48%-ը) գնահատել են իրենց սոցիալական պաշտպանվածության աստիճանը որպես միջին: Դրա հետ մեկտեղ, հարցվողների բավականին մեծ զանգված էլ (մոտավորապես 32%-ը) իրենց համարել են աղքատ և սոցիալապես անպաշտպան, իսկ մոտավորապես 15%-ը՝ ծայրահեղ աղքատ և սոցիալապես անպաշտպան: Ի հակադրություն սրան՝ հարցվողների շատ փոքր մասը (4%-ը) սեփական բարեկեցությունը գնահատել է որպես լավ, իսկ 1%-ից պակասը՝ որպես շատ լավ¹⁷²:

Նշված հետազոտություն շրջանակներում Հայաստանին վերաբերող տվյալները հետևյալն են՝ հարցվողների 53.03%-ը սեփական բարեկեցության աստիճանը գնահա-

¹⁷¹ St' u Habibov N., Afandi E., Analysis of subjective wellbeing in low-income transitional countries: evidence from comparative national surveys in Armenia, Azerbaijan and Georgia, Journal of Copmarative Social Welfare, Vol. 25, No. 3, October 2009, էջ 207:

¹⁷² St' u նույն տեղը, էջ 207-208:

տել է որպես միջին, 6,54%-ը՝ լավ, 1,02%-ը՝ շատ լավ: Հարցվողների 25,81%-ը իրենց համարել են աղքատ, իսկ 13,61%-ը՝ ծայրահեղ աղքատ¹⁷³:

2011 թվականին «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի կողմից իրականացվել է «Կյանքի որակի ինդեքսը» սոցիոլոգիական հետազոտություն: Հետազոտության ընտրանքի ծավալը կազմել է 2000 հարցվող: Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են նաև ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանվածության ընկալումները, մասնավորապես՝ ուսումնասիրվել են որոշակի սոցիալական վտանգներ/ռիսկեր ինչպես Հայաստանի ամբողջ բնակչության, այնպես էլ առանձին սոցիալ-ժողովրդագրական խմբերում:

Ըստ վերոնշյալ հետազոտության արդյունքների՝ առավել տարածված սոցիալական վտանգը/ռիսկը հիվանդանալու դեպքում բուժում ստանալու անկարողությունն է (63,3%): Առավել տարածված սոցիալական վտանգների/ռիսկերի երկրորդ խմբի մեջ մտնում է այն իրավիճակը, երբ անձը կարող է մնալ առանց ապրուստի միջոցների (54,4%)¹⁷⁴:

Հատկանշական է այն հանգամանքը, որ սոցիալական վտանգներից/ռիսկերից պաշտպանվածության զգացողությունը կախված է անձի տարիքից. տարիքի աճին զուգահեռ պաշտպանվածության զգացողությունը նվազում է: Այսպես, վերոնշյալ հետազոտության տվյալների համաձայն՝ առանց ապրուստի մնալու վտանգից պաշտպանվածությունը 18-30 տարեկանների շրջանում 59.0% է, իսկ 60-ից ավելի տարեկանների շրջանում՝ ընդամենը 36.0%: Հիվանդանալու դեպքում բուժում չստանալու վտանգից պաշտպանվածության զգացողությունը 18-30 տարեկանների շրջանում 60.0% է, իսկ 60-ից ավելի տարիք ունեցող անձանց շրջանում՝ 35.5%¹⁷⁵:

2012թ-ի դեկտեմբերի 12-27-ն ընկած ժամանակահատվածում վերոնշյալ կազմակերպության կողմից իրականացվել է «Կյանքի որակի ինդեքսը 2012թ.-ին»

¹⁷³ Տե՛ս Habibov N., Afandi E., Analysis of subjective wellbeing in low-income transitional countries: evidence from comparative national surveys in Armenia, Azerbaijan and Georgia, Journal of Copmarative Social Welfare, Vol. 25, No. 3, October 2009, էջ 207:

¹⁷⁴ Տե՛ս ՀՀ-ում կյանքի որակի հետազոտություն, QL Index-2/2011, վերջնական զեկույց, Սամվել Մանուկյան, ս.գ.թ., IPSC, 20 մարտ, 2012, <http://ipsc.am/am-quality-of-life-index-december-2011/>, 26.01.2016թ., ժամը՝ 15:29

¹⁷⁵ Տե՛ս ՀՀ-ում կյանքի որակի հետազոտություն, QL Index-2/2011, վերջնական զեկույց:

սոցիոլոգիական հետազոտություն: Հետազոտության ընտրանքի ծավալը կազմել է 1997 մարդ:

Վերոնշյալ հետազոտության շրջանակում վերլուծվել են 13 սոցիալական վտանգների գործոններ: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ Հայաստանի հասարակական գիտակցությունում առկա են սոցիալական վտանգների ընկալման երեք կոգնիտիվ համալիրներ, որոնք արտահայտվել են հետևյալ գործոններում¹⁷⁶

- սոցիալական բռնությունների գործոն, որի բաղադրիչներն են հետևյալ դիրքորոշումները՝
 - *անձը դատարանում կարող է հանդիպել անարդար վերաբերմունքի (39,3%),*
 - *ոստիկանության անարդարացի ճնշումների (40,3%),*
 - *պետությունը կարող է խլել կամ զավթել անձի սեփականությունը (32,2%),*
 - *որևէ հզոր անձ կարող է խլել կամ զավթել անձի սեփականությունը (25,5%),*
 - *կաշառք կպահանջեն անձից իրավունքի պաշտպանության դիմաց (41,7%),*
 - *կարող են լինել հասարակական անկարգություններ և բռնություններ (53.7%):*
- Կենցաղային բռնությունների գործոն, որի բաղադրիչներն են ներքոնշյալ դիրքորոշումները՝
 - *անձը ցերեկը փողոցում կարող է ենթարկվել բռնության կամ հանդիպել այլ տիպի միջադեպի (38,1%),*
 - *անձը գիշերը փողոցում կարող է ենթարկվել բռնության կամ հանդիպել այլ տիպի միջադեպի (29,9%),*
 - *կարող են անձից ինչ-որ բան գողանալ (45,5%):*
- Սոցիալական անապահովության գործոն, որի բաղադրիչներն են հետևյալ դիրքորոշումները՝

¹⁷⁶Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն, վերջնական զեկույց, հեղինակ՝ սոց. գ. թ. Ս. Մանուկյան, «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, 30 մարտի, 2013թ., <https://newipsc.files.wordpress.com/2015/01/5-quality-of-life-index-december-2012-2013.pdf>, 14.10.2015թ., ժ.՝ 14:14:

- հիվանդանալու դեպքում անձը չի կարողանա սրանալ անհրաժեշտ բուժում (61.2%),
- անձը կարող է մնալ առանց ապրուստի միջոցների՝ աշխատավարձի, թոշակի, դրամական խնայողությունների (46,2%):

Հատկանշական է այն հանգամանքը, որ վերոնշյալ հետազոտության արդյունքների համաձայն՝ սոցիալական բռնությունների և սոցիալական անարդարությունների հանդիպելու հավանականությունը համեմատաբար բարձր են գնահատել ցածր բարեկեցություն ունեցող մարդիկ, մինչդեռ կենցաղային բռնությունների հանդիպելու հավանականությունը ավելի բարձր են գնահատել բարեկեցության բարձր մակարդակ ունեցող մարդիկ¹⁷⁷: Միևնույն ժամանակ, ֆիզիկական պաշտպանվածության հետ կորելյացիան դրական է, թեև մարդիկ աղքատությունը համարում են հիմնական ռիսկ, բայց բավարարված են երկրում առկա ֆիզիկական ապահովության մակարդակով:

Ամփոփելով հետազոտությունների արդյունքների, ինչպես նաև վիճակագրական տվյալների վերլուծությունը, հանգում ենք այն եզրահանգման, որ սոցիալական անպաշտպանվածության հիմնախնդիրը ամբողջությամբ հաղթահարված չէ ՀՀ-ում՝ չնայած իրականացվող սոցիալ-տնտեսական, իրավական, քաղաքական որոշակի միջոցառումների, որոնք իրենց հերթին որոշակիորեն նպաստում են հասարակությունում սոցիալական անպաշտպանվածության զգացումը մեղմելուն:

¹⁷⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն, վերջնական զեկույց, հեղինակ՝ սոց. գ. թ. Ս. Մանուկյան, «Այ Փի Էս Սի» քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, 30 մարտի, 2013թ., <https://newipsc.files.wordpress.com/2015/01/5-quality-of-life-index-december-2012-2013.pdf>, 14.10.2015թ., ժամը՝ 15:52:

3.2 ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգը. կառուցվածքագործառության վերլուծություն

Յուրաքանչյուր սոցիալական համակարգ, այդ թվում նաև բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը որպեսզի պահպանի հավասարակշռությունը, ամբողջականությունը և շարունակի գործառել, պետք է իրականացնի այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են՝ հարմարման, նպատակադրման, ներառման և մշակութային նմուշների պահպանման գործառույթները:

Ըստ էության հարմարման գործառույթի ներքո նկատի ունենք այն, որ սոցիալական պաշտպանության համակարգի միջոցով լուծվում է նյութական, մարդկային, մշակութային ռեսուրսների ռացիոնալ բաշխման խնդիրը, որը նման է ներքին իրավիճակներին և արտաքին փոփոխություններին հարմարվելու խնդրին: Մինչ ՀՀ-ում տեղի ունեցող արդի սոցիալական բարեփոխումները կարևորվում էր բնակչության սոցիալական անպաշտպանվածության հետևանքները վերացնելուն միտված սոցիալական պաշտպանության պասիվ ձևերի (դրամական վճարներ, արտոնություններ) կիրառումը: Սակայն ՀՀ-ում տեղի ունեցող արդի սոցիալական բարեփոխումների արդյունքում սոցիալական օգնությունից զատ սկսեց կարևորվել նաև սոցիալական ապահովագրությունը՝ որպես սոցիալական ռիսկերի կանխարգելման մեխանիզմ: Փաստորեն մինչ վերոնշյալ բարեփոխումների իրականացումը առավելապես կարևորվում էր ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի *ապահովող, այլ ոչ թե կանխարգելիչ գործառույթի*¹⁷⁸ *իրականացումը*:

Մյուս գործառույթը, որի իրագործումն առաջնային է համակարգի կայունության և հավասարակշռության պահպանման համար, *նպատակադրման և այդ նպատակների իրականացման գործառույթն է*:

Հատկանշական է այն հանգամանքը, որ ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի նպատակները, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու

¹⁷⁸Սոցիալական պաշտպանության համակարգի կանխարգելիչ գործառույթը ենթադրում է սոցիալական պաշտպանության անհրաժեշտությունը ծնող պատճառները վերացնելուն և կանխարգելելուն միտված սոցիալական պաշտպանության ակտիվ ձևերի կիրառում:

համար համակարգից ակնկալվող խնդիրների շարքը օրենսդրորեն ձևակերպված են¹⁷⁹: Այսպես, համապատասխան փաստաթղթում ներկայացված են ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի հետևյալ նպատակները՝

- պետության, հասարակության և անհատի փոխադարձ պատասխանատվությունը ամրագրելու (սոցիալական ռիսկը պետության, հասարակության և անհատի միջև տարաբաշխելու) միջոցով հասարակության համախմբմանը նպաստելը,
- սոցիալական համերաշխությունն ու սոցիալական արդարությունը արդյունավետ կերպով համադրելը,
- տարբեր (ոչ ստանդարտ) իրավիճակներին արագ արձագանքելու հնարավորության առկայությունը,
- միջազգային փորձից և ազգային ավանդույթներից բխող միջոցներն ու մեխանիզմները արդյունավետ կերպով համադրելը,
- ազգային ավանդույթների և առանձնահատկությունների պաշտպանությանը նպաստելը¹⁸⁰:

Վերոշարադրյալ նպատակների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք ոչ միայն հստակ ձևակերպված չեն, այլ նաև որոշ նպատակներ, ինչպես օրինակ, *ազգային ավանդույթների և առանձնահատկությունների պաշտպանությանը նպաստելը*, անմիջական առնչություն չունեն սոցիալական պաշտպանության համակարգի առաջնային նպատակների հետ: Ըստ էության ՀՀ սոցիալական պաշտպանության ներկա համակարգը առավելապես իրականացնում է սոցիալական օգնության գործառույթ՝ սոցիալական հիմնախնդիրներ ունեցող անձանց հիմնականում տրամադրելով ֆինանսական և նյութական աջակցություն¹⁸¹: Այս ամենը վկայում է այն մասին, որ ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը դեռևս չի ավարտվել:

¹⁷⁹ Տե՛ս ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի N 452-Ն որոշման հավելված N 1:

¹⁸⁰ Տե՛ս նույն տեղը:

¹⁸¹ Տե՛ս Խաչատրյան Ա. Կ., Սոցիալական աշխատանքը և հետխորհրդային Հայաստանի բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը, // «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», Երևան, 2017թ. № 1 (22), էջ 19:

Այսպիսով, համապատասխան փաստաթղթում շարադրված ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի նպատակները անհրաժեշտ է վերանայել և վերաձևակերպել այնպես, որ դրանք անմիջական առնչություն ունենան սոցիալական պաշտպանության համակարգի առաջնային նպատակների հետ:

Խնդրահարույց է նաև ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի ներառման գործառույթի իրագործումը: Եթե նախորդ երկու գործառույթները կապված են համակարգի արտաքին միջավայրի հարաբերությունների հետ, ապա սույն գործառույթն առավելապես վերաբերում է ներհամակարգային գործընթացների ու հարաբերությունների կարգավորմանը: Այն ենթադրում է նաև համակարգի հիմնական տարրերի, ենթահամակարգերի գործառման կանոնակարգում, համագործակցության ապահովում, որոնց իրագործումը, սակայն, այսօր լուրջ խնդիր է: Այս տեսանկյունից կարևորվում է ՀՀ-ում սոցիալական պաշտպանության գործող պատասխանատուների միջև փոխազդեցության վերլուծությունը:

ՀՀ-ում սոցիալական պաշտպանության իրականացման կարևոր սուբյեկտ է պետությունը՝ իր համապատասխան կառույցներով հանդերձ, որոնցից կարող ենք առանձնացնել **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (ԱՍՀՆ), ինչպես նաև վերջինիս վերհսկողության ներքո գտնվող մի շարք կառույցների:**

ՀՀ ԱՍՀՆ վարչական ենթակայության և մեթոդական ղեկավարման ներքո գործող կառույցների պաշտոնական երեք գործառույթները՝ *քաղաքականության մշակման, քաղաքականության իրականացման համակարգման և սոցիալական ծառայությունների տրամադրման* մակարդակներում իրականացվում են

- ա.** Կենսաթոշակային ապահովության,
- բ.** Աշխատանքի և զբաղվածության հիմնահարցերի կարգավորման,
- գ.** Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի կարգավորման,
- դ.** Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի կարգավորման,
- ե.** Պետական նպաստների և կարիքավորության գնահատման հիման վրա տրամադրվող սոցիալական ծառայությունների,
- զ.** Մոնիթորինգի և վերահսկողության ծառայությունների վարչությունների,
- է.** Միջոլորտային գործառույթներ իրականացնող կառույցների միջոցով:

Բնակչությանը մատուցվող *ընդհանուր մասնագիտական ծառայությունների մեծ մասը մատուցվում է ԱՍՀՆ ներքո*, սակայն առկա են մեծ թվով ծառայություններ այլ գերատեսչությունների վարչական ենթակայության և մեթոդական ղեկավարման ներքո, մասնավորապես՝ սոցիալական ծառայություններ մատուցվում են *ՀՀ առողջապահության, կրթության և գիտության, մշակույթի, փարածքային կառավարման և զարգացման, սպորտի և երիտասարդության հարցերի, գյուղատնտեսության, բնապահպանության, արտակարգ իրավիճակների նախարարությունների կողմից*¹⁸²:

ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում կարևոր դեր ունի նաև սոցիալական պաշտպանության իրականացման հասարակական սեկտորը: Այս տեսանկյունից կարևոր է վերլուծել բնակչության սոցիալական պաշտպանության իրականացման պետական և հասարակական սեկտորների միջև փոխազդեցությունը (համագործակցությունը), մասնավորապես՝ առանձնահատուկ ուշադրության է արժանի պետական սեկտորի վերաբերմունքը հասարակական սեկտորի նկատմամբ:

Այս առումով հարկ է նշել, որ հասարակական սեկտորը դեռևս լիարժեք կարևորված չէ պետության կողմից: Բացի այդ, վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների հիմնական մասը կենտրոնացված է մեծ քաղաքներում, մինչդեռ մնացած քաղաքներում ծառայությունների ծածկույթը շատ նոսր է: Թույլ համակարգման պատճառով միևնույն տարածաշրջանում կարող են մատուցվել նույնատիպ բովանդակության ծառայություններ՝ առաջացնելով վերաճածկեր, այն դեպքում, երբ առանձին տարածաշրջաններ չունեն որևէ ծառայություն (ծրագիր) ունենալու հնարավորություն¹⁸³:

¹⁸²Տե՛ս «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիա, Հայաստանի Հանրապետություն, Համաշխարհային բանկ, Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագիր, փոխառություն թիվ 7848 ԱՄ, ձեռնարկ 1, էջ 29:

¹⁸³Տե՛ս Անտոնյան Մ., Ոչ պետական սոցիալական ծառայությունների օրակարգը՝ ներկա բարեփոխումների համատեքստում //, «Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքի պրակտիկան ՀՀ-ում. արդի զարգացումները», գիտագործնական համաժողովի նյութերի ժողովածու, 10, 11 նոյեմբերի, 2014թ., Եր., 2015, էջ 66-67:

իրականացված հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս առանձնացնել պետական սեկտորի կողմից ոչ պետական սեկտորի գործունեության հանդեպ վերաբերմունքի հետևյալ ձևերը՝

- Անտարբեր. այս դեպքում կազմակերպությունների առաջարկած ծառայությունները համարվում են ժամանակավոր, նրանց հանդեպ լուրջ վերաբերմունք չի դրսևորվում,
- արհամարհական-խուսափողական. սա դրսևորվում է հատկապես այն կազմակերպությունների հանդեպ, որոնց կողմից մատուցվող ծառայությունները հիմնված են նորարարական մոտեցումների վրա,
- համագործակցող. ՀԿ-ների կողմից մատուցվող ծառայությունների հիմքում ընկած մոտեցումները կարևորվում են և ներառվում պետական սոցիալական քաղաքականության մեջ,
- սպառողական. հաճախ, իրականացվող ծրագրերի հրապուրիչ միակ բաղադրիչը որոշակի նյութական բարիքներն են՝ գրասենյակային գույք, ավտոմեքենա և այլն, որոնք մնում են որպես «շոշափելի արդյունք» այս կամ այն ծրագրից¹⁸⁴:

Ինչ վերաբերում է հասարակական սեկտորի կողմից պետական սեկտորի հանդեպ վերաբերմունքին, ապա կարելի է առանձնացնել հետևյալը.

- Գործունեություն՝ առանց հատման կետեր փնտրելու,
- համաձայնեցված գործունեություն, երբ պետության հետ համաձայնեցվում են առաջնահերթությունները, սակայն, միշտ չէ, որ գաղափարախոսությունը կիսվում է,
- վստահելի-գործընկերային, երբ կողմերը կիսում են թե՛ պատասխանատվությունը, թե՛ գաղափարախոսությունը:
- Գործունեություն սոցիալական պատասխանատվության շրջանակներում, սակայն դրանք հատվածային են, ոչ կայուն¹⁸⁵:

¹⁸⁴Տե՛ս Անտոնյան Մ., Ոչ պետական սոցիալական ծառայությունների օրակարգը՝ ներկա բարեփոխումների համատեքստում //, «Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքի պրակտիկան ՀՀ-ում. արդի զարգացումները», գիտագործական համաժողովի նյութերի ժողովածու, 10, 11 նոյեմբերի, 2014թ., Եր., 2015, էջ 67-68:

¹⁸⁵Տե՛ս Անտոնյան Մ., նշվ. աշխ., էջ 68-69:

Այսպիսով՝ ի լրումն փոխադարձ անտեղյակության, առկա է նաև փոխադարձ անվստահություն ՀԿ-ների և պետական կառույցների միջև:

Փաստորեն, ՀՀ-ում սոցիալական ծառայությունների զգալի մասը տրամադրվում է ոչ պետական կառույցների կողմից: Հետևաբար, այս տեսանկյունից կարևորվում է պետություն-հասարակական սեկտոր կառուցողական հարաբերությունների ձևավորումը:

Այսպիսով, ՀԿ-ները կարևոր դերակատարություն ունենալով հանդերձ՝ ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի օրգանական մասը չեն, գործում են համաձայն իրենց առաքելությունների և միշտ չէ, որ վերջիններիս գործունեությունը համաձայնեցվում է երկրի սոցիալական քաղաքականության ռազմավարության հետ: Ակնհայտորեն շահագրգռված լինելով «սեփական դեմք, տեղ և դեր» կառուցելու գործընթացում՝ միաժամանակ ՀԿ-ները լայնորեն օգտվում են այն թողարկական չկոորդինացվող վիճակից, որում գտնվում է համակարգը:

Անդրադառնալով սոցիալական պաշտպանության մյուս սուբյեկտներին, հարկ է նշել, որ վերջին տասնամյակում աշխարհի զարգացած երկրներում դիտվում է պետության կողմից սոցիալական ծառայությունների շուկայում մենաշնորհային դերից հրաժարվելու միտում՝ խրախուսելով սոցիալական պաշտպանության այլ սուբյեկտների, հատկապես՝ մասնավոր, հասարակական սեկտորների, ինչպես նաև ՏԻՄ-երի մասնակցությունը: Սակայն, այս առումով դեռ շատ անելիքներ կան ՀՀ-ում: Ինչպես տեղին նշում է Ս. Աստվածատուրովը, սոցիալական պաշտպանության համակարգում ներառված չեն հատկապես խոշոր ձեռնարկությունները¹⁸⁶: Բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում կարևոր դերակատարում ունի մասնավոր սեկտորը, մինչդեռ մեր երկրում, ինչպես ցույց են տալիս ատենախոսության շրջանակում իրականացված որակական հետազոտության արդյունքները, մասնավոր սեկտորի և պետության միջև համագործակցությունը բավականին թույլ է:

Ինչ վերաբերում է հասարակական և մասնավոր սեկտորների համագործակցությանը, ապա, ըստ ատենախոսության շրջանակում իրականացված որակական հետազոտության արդյունքների, նման ինստիտուցիոնալ համագործակցության մշա-

¹⁸⁶Տե՛ս Аствацатуров С. В., Социальная защита в системе экономических и социальных координат, «Изменяющееся общество», N 1, 2, Ереван, 1997, էջ 41:

կույթը Հայաստանում դեռևս ձևավորված չէ: Մասնավոր սեկտորը չի գիտակցում իր դերը ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման հարցում: Ավելին, այն ոչ համագործակցային տրամադրվածություն ունի առավել ակտիվ գործող ՀԿ-ների նկատմամբ, քանի որ առաջնորդվում է այն կարծրատիպերով, որ ՀԿ-ները զբաղվում են գումարների փոշիացմամբ և կարող են դիմել մասնավոր սեկտորին՝ միայն գումար վաստակելու նպատակով: Այս դեպքում, բնական է, որ համագործակցության նախա-ծեռնությունը պատկանում է ՀԿ-ներին, սակայն այն ոչ միշտ է հաջողվում: Մասնավոր սեկտորը հիմնականում պատկերացում չունի բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման հարցում ՀԿ-ների դերի և նշանակության մասին:

Մասնավոր սեկտորի՝ ՀԿ-ների հետ համագործակցության բացակայությանը նպաստում է նաև այն, որ պետությունը մասնավոր սեկտորին արտոնություններ չի տրամադրում հասարակական ոլորտում անհատույց ներդրումներ կատարելու դիմաց:

Այսպիսով՝ հասարակական և մասնավոր սեկտորների միջև համագործակցության բացակայության պատճառը այդ հարաբերությունները կարգավորող ինստիտուցիոնալ բազայի/հենքի, ինչպես նաև մասնավոր սեկտորի մոտ նման շարժառիթի բացակայությունն է: Այս ամենի արդյունքում մասնավոր սեկտորը ևս ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի օրգանական մասը չի հանդիսանում:

Անդրադառնալով տեղական ինքնակառավարման մարմիններին՝ հարկ է նշել, որ 1996 թվականի հունիսի 30-ին ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որով բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում կարևորվեց տեղական ինքնակառավարման մարմինների դերը: Ըստ վերոհիշյալ օրենքի՝ աշխատանքի և սոցիալական ծառայությունների ոլորտում ՏԻՄ-երին վերապահված են հետևյալ կամավոր լիազորությունները՝ նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստելը, վճարովի հասարակական աշխատանքների կազմակերպումը, հաշմանդամություն ունեցող, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկումը, իսկ ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգում ՏԻՄ-երը իրականացնում են պետության

պատվիրակված ընդամենը մեկ լիազորություն՝ համայնքի տարածքում սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների գործունեության կազմակերպումը¹⁸⁷: Սակայն ՏԻՄ-երի կամավոր լիազորությունները մնում են դեռևս չիրագործված՝ վերջիններիս կադրային, նյութական, ֆինանսական համապատասխան ռեսուրսների բացակայության պատճառով¹⁸⁸:

Ավանդաբար ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում կարևորվում է նաև *ոչ ձևական ցանցի դերը*: Այս դեպքում խոսքը համայնքի, ընտանիքի, բարեկամների, ընկերների, հարևանների կողմից ցուցաբերվող օգնության մասին է:

Այսպիսով՝ ՀՀ-ում սոցիալական պաշտպանության իրականացման պետական, հասարակական և մասնավոր սեկտորների, ինչպես նաև ՏԻՄ-երի միջև փոխազդեցության վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ այդ տարրերի միջև փոխազդեցությունը բավականին թույլ է, իսկ որոշ տարրերի միջև էլ՝ ընդհանրապես բացակայում է: Սա, իր հերթին վկայում է ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի *ամբողջականության խախտման մասին*, քանի որ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ամբողջականությունը նախ և առաջ պայմանավորված է սոցիալական պաշտպանության համակարգի տարրերի միջև փոխազդեցությամբ¹⁸⁹: Վերջինս իր հերթին նշանակում է, որ ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի ձևավորման գործընթացը դեռևս չի ավարտվել: Իրականում գործ ունենք ՀՀ-ում գործող սոցիալական պաշտպանության «թվացյալ» համակարգի հետ: Համակարգը կարիք ունի համալրվելու հարմարման, նպատակադրման, ներառման, մշակութային նմուշների պահպանման գործառույթներով:

ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգը կոչված է ապահովելու ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանվածությունը: Այս տեսանկյունից կարևոր է առանձնացնել գործող համակարգի թիրախային խմբերին:

¹⁸⁷ Տե՛ս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 07.05.2002թ.-ին:

¹⁸⁸ Տե՛ս Վարդանյան Եվ., ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների դերը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում, «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն» 143.5, 2014թ. (№ 2), էջ 14:

¹⁸⁹ Տե՛ս Аствацатуров С. В., О специфике социологического познания социальной политики. Научные работы. Общественные науки. - Прак 1-Лингва, 2002, էջ 48:

Ամփոփելով ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի հիմնական գործառույթներն ու դրանց հիման վրա խոցելի խմբերին առաջարկվող հիմնական ծրագրերը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ որպես *սոցիալական պաշտպանության գործող համակարգի թիրախ*, նախ և առաջ, հանդես են գալիս կյանքի դժվարին իրավիճակում գտնվող անձինք:

Ներկայիս գործադիր կառավարման ոլորտի ներկայացուցիչների մեծ մասը հակված է սոցիալական պաշտպանության գործող համակարգի թիրախի դերում տեսնել միայն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ այդպիսի վտանգի մեջ հայտնվելու առջև կանգնած անձանց:

ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգի թիրախ են հանդիսանում նաև բնակչության առանձին խմբերը, ինչպես օրինակ, զինծառայողները, կրթության, առողջապահության ոլորտների աշխատողները, որոնց ևս տրամադրվում են մի շարք սոցիալական ծառայություններ: Այս առումով հարկ է նշել, որ 2012 թվականին ՀՀ-ում ներդրվեց սոցիալական փաթեթը, որը քաղաքացիական և պետական ծառայողներին, պետական պաշտոններ զբաղեցրած անձանց, ինչպես նաև կրթության, մշակույթի և սոցիալական պաշտպանության ոլորտների պետական կազմակերպությունների վարչական և մասնագիտական պաշտոններ զբաղեցնող անձանց և նրանց անմիջական ընտանիքի անդամներին՝ անկախ զբաղեցրած պաշտոնից և վարձատրության չափից, հնարավորություն է ընձեռնում հավասարաչափ օգտվել մի խումբ սոցիալական ծառայություններից¹⁹⁰:

Առանձնացնելով ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի թիրախները՝ կարևոր է ուրվագծել այն խմբերի շրջանակը, ովքեր մնացել են առանց սոցիալական պաշտպանության, ասել է թե անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցին՝ ո՞վքեր են դուրս մնացել սոցիալական պաշտպանության գործող համակարգի թիրախի շրջանակներից: Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ-ում, օրինակ, պետական հանրակրթական դպրոցներում միջնակարգ կրթությունը, ինչպես նաև մինչև 7 տարեկան երեխաների բժշկական սպասարկումը անվճար է¹⁹¹: Հետևաբար, միգուցե

¹⁹⁰ Տե՛ս ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1692-Ն որոշում:

¹⁹¹ Տե՛ս «Կրթության մասին» ՀՀ օրենքը, հոդված 6, կետ 3; ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշում:

ճշմարիտ է այն կարծիքը, որ սոցիալական պաշտպանությունը տարածվում է ամբողջ բնակչության վրա: Հետևաբար ստացվում է, որ այդ դեպքում գործ ունենք սոցիալական պաշտպանության սոցիալ-ժողովրդավարական տիպանմուշի հետ: Սակայն ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի իրավանորմատիվային ենթահամակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սոցիալական պաշտպանությունը ավելի մեծ ծավալով տրամադրվում է սոցիալապես անպաշտպան բնակչությանը: Այս հանգամանքը վկայում է սոցիալական պաշտպանության գործող համակարգում ազատական տիպանմուշի տարրերի առկայության մասին:

ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգի թիրախներին ուղղված սոցիալական ծրագրերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու **սոցիալական պաշտպանության հետևյալ հիմնական ձևերը (մեխանիզմները)**՝ *օրենսդրորեն սահմանված որոշակի սոցիալական երաշխիքները և դրանց բավարարումը որոշակի ծրագրերի հիման վրա, սոցիալական ապահովագրությունը, պետական սոցիալական ապահովությունը, սոցիալական օգնությունը, սոցիալական ծառայությունները*¹⁹²:

Մարդկանց սահմանադրական իրավունքները, ազատություններն ու երաշխիքները ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգի *իրավանորմատիվային ենթահամակարգի հիմքն են* կազմում: Ըստ այդմ, սոցիալական պաշտպանության համակարգը կոչված է ապահովել մարդկանց սահմանադրական իրավունքների և երաշխիքների իրականացումը, քանի որ ՀՀ-ն սահմանադրորեն հռչակված է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն:

Ինչ վերաբերում է սոցիալական ապահովագրությանը, հարկ է նշել որ *սոցիալական ապահովագրության պետական ծրագրերը բաղկացած են փարիքային և հաշմանդամության կենսաթոշակների, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության և հղիության հետ կապված նպաստների ծրագրերից:*

Անդրադառնալով պետական սոցիալական ապահովությանը, հարկ է նշել, որ *սոցիալական ապահովության պետական ծրագրերը ներառում են՝ հաշմանդամների*

¹⁹²Տե՛ս «Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը Հայաստանում», զեկույց, Եվրոպական հանձնաժողով, 2011թ.:

վերականգնման ծրագրերը՝ ելնելով հաշմանդամների վերականգնողական անհատական ծրագրերի տվյալներից, հաշմանդամների, Հայրենական պատերազմի վերերանների և երեխաների՝ տնային պայմաններում ու համապատասխան հիմնարկներում սպասարկելու սոցիալական ծրագրերից:

Սոցիալական օգնության մասով կարևոր է նշել, որ *սոցիալական օգնության ծրագրերը* առ այսօր սոցիալական կայունության պահմանման կարևոր գործիք են: Այսօր սոցիալական օգնության կարիք ունեն ոչ միայն աղքատները, այլ նաև ՀՀ բնակչության զգալի մասը, քանի որ ընտանիքի եկամուտների կրճատման ռիսկերը առաջանում են արտաքին և ներքին բազմաթիվ գործոնների արդյունքում: Սոցիալական օգնության ծրագրերի արդիականությունը սերտորեն կապված է տնտեսական գործընթացների հետ:

ՀՀ բնակչության խոցելի խմբերին առաջարկվող ծրագրերից են նաև *զբաղվածության ծրագրերը*:

Չնայած «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից իրականացված մի շարք ծրագրերի՝ այնուամենայնիվ, վերջինիս հրապարակած տվյալները վկայում են, որ դրանք էապես չեն կրճատում գործազրկության բարձր մակարդակը:

Այսպես 2015թ. հուլիսի մեկի դրությամբ **զբաղվածության ամենամյա պետական ծրագրերում ընդգրկված անձանց թիվը** կազմել է **1851 մարդ, որից 388-ը** տեղավորվել են աշխատանքի¹⁹³: Բացի այդ, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի (Կոմիտե) հաշվետվությունում նշված է, որ ՀՀ-ում առկա է գործազրկության բարձր մակարդակ հատկապես գյուղական վայրերում, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստման և զբաղվածության քաղաքականությունը ակտիվացնելու համար ոչ բավարար գումարներ են հատկացվում: Կոմիտեն խնդրահարույց է համարել, որ բազմաթիվ փաստացի գործազուրկ անձինք չեն գրանցվել որպես այդպիսիք, և, հետևաբար, վերջիններս չեն արտացոլվել գործազրկության պաշտոնական վիճակագրության մեջ: Ուստի, առաջարկվել է հավաքել գործազրկության վերաբերյալ թարմացված տվյալներ՝ ըստ սեռի, տարիքի,

¹⁹³ Տե՛ս ՀՀ ԱՍՀՆ պաշտոնական վեբ կայք, զբաղվածության ոլորտի վիճակագրություն: http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=131&code_id=212, 10.09.2015թ., ժամը՝ 15:42:

քաղաքային և գյուղական տարածքների և էթնիկ խմբերի, որպեսզի իրականացվեն նպատակային քայլեր՝ ուղղված գործազրկության մակարդակի կրճատմանը¹⁹⁴: Հարկ է նշել, որ գործազրկության առավել բարձր մակարդակ գրանցվել է հատկապես մարզերում, որտեղից ավելի շատ են մեկնում արտագնա աշխատանքի: Ըստ 2013 թվականի նոյեմբերին անցկացված «Սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության ելակետային հետազոտություն և այդ ծառայությունների ազդեցությունը սոցիալապես խոցելի ընտանիքիների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա» հետազոտության արդյունքների՝ սոցիալապես խոցելի 252 ընտանիքիներից վերջին 3 տարվա ընթացքում արտագնա աշխատանքի է մեկնել 281 մարդ¹⁹⁵:

Այսպիսով՝ գործազրկության առկա բարձր մակարդակը վկայում է այն մասին, որ գործազրկության կրճատմանն ուղղված ծրագրերը բավարար և արդյունավետ չեն: Այս տեսանկյունից շատ է կարևորվում գործազրկության իրական մակարդակի վերհանումը և արտագոյումը, ինչպես նաև զբաղվածության խթանման պետական ծրագրերի արդյունավետության և հասցեականության բարձրացումը:

Ըստ 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի՝ վերացվել է գործազրկության նպաստը, որին փոխարինում են զբաղվածության այսպես կոչված «ակտիվ» ծրագրերը, ինչպես օրինակ, աշխատանք փնտրողների վերապատրաստումը, աշխատանքային տոնավաճառների կազմակերպումը, աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրումը և այլն:

Սակայն գործազրկության նպաստի վերացումը չի բխում սոցիալական պետության սկզբունքներից, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից: Այսպես, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների համաձայն՝ յուրաքանչյուր ոք մայրության, ծերության, բազմազավակության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված

¹⁹⁴ St' u Committee on Economic, Social and Cultural Rights, Concluding observations on the combined second and third periodic reports of Armenia, 16 July, 2014, էջ 4:

¹⁹⁵ St' u Սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության ելակետային հետազոտություն և այդ ծառայությունների ազդեցությունը սոցիալապես խոցելի ընտանիքիների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, դեկտեմբեր 2013 թվական:

այլ դեպքերում ունի սոցիալական ապահովության իրավունք¹⁹⁶: Բացի այդ, Սահմանադրության մեկնաբանություններում նշված է, որ սոցիալական պետությունը սոցիալական օգնություն է տրամադրում գործազուրկներին, այդ թվում՝ նաև գործազրկության և այլ նպաստների սահմանման միջոցով¹⁹⁷: Հետևաբար, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված «սոցիալական պետություն», «սոցիալական ապահովություն» եզրույթները ենթադրում են նաև պետության կողմից գործազրկության նպաստի տրամադրման պարտավորության ստանձնում: Բացի այդ, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է նաև, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները¹⁹⁸: Պետության կողմից անձի սոցիալական ապահովության պարտավորություն է նախատեսված նաև ՀՀ-ի կողմից վավարեցված Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայում¹⁹⁹: Հարկ է նշել նաև, որ ՀՀ կողմից խարտիայի կիրառման վերաբերյալ Սոցիալական իրավունքների Եվրոպական Կոմիտեի 2013 թվականի եզրակացություններում առանձնակի կարեվորվել է, ի թիվս այլ գործողությունների, գործազրկության նպաստի տրամադրման պարտավորությունը²⁰⁰:

Այսպիսով՝ գործազրկության նպաստի վերացումը չի բխում ՀՀ Սահմանադրությունից և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից, ինչպես նաև խախտում է անձի սոցիալական ապահովության իրավունքը:

Անդրադառնալով *սոցիալական ծառայություններին*, դրանց տիպերին, հարկ է նշել, որ ինչպես վկայում են մեր հետազոտության արդյունքները, այսօր ՀՀ-ում մատուցվող սոցիալական ծառայությունների մեծ մասը *ընդհանուր մասնագիտական սոցիալական ծառայություններ են*, որոնք ներառում են շահառուի կարիքների

¹⁹⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրության փոփոխություններ՝ ընդունված 06.12.2015թ., հոդված 83 :

¹⁹⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա. Վաղարշյանի), Եր., «Իրավունք», 2010թ., էջ 453:

¹⁹⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 43, պարբերություն 2:

¹⁹⁹ Տե՛ս Եվրոպական վերանայված սոցիալական խարտիա, հոդված 12:

²⁰⁰ Տե՛ս European Social Charter (revised) European Committee of Social Rights Conclusions 2013 (ARMENIA) Articles 3, 12, 13 and 14 of the Revised Charter,

http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf, 22.09.2015թ., ժամը՝ 13:26:

գնահատում, վերջինիս և նրա ձևական ու ոչ ձևական սոցիալական ցանցերի հետ աշխատանքի պլանավորում, իրականացում և վերահսկում, այդ թվում՝ վերջնական ազդեցության գնահատում: Դրանք ներառում են նաև տեղեկատվական-խորհրդատվական, շահերի պաշտպանության, միջնորդական տիպի ծառայություններ: Այսօր ՀՀ-ում տրամադրվող կենսաթոշակները, տարբեր տիպի նպաստները տրամադրվում են որոշակի կոնկրետ չափանիշներին համապատասխանելու դեպքում: Կրթական կամ առողջապահական ոլորտում գոյություն ունեցող զեղչերի համակարգից օգտվելու հնարավորություն ունեն բոլոր այն մարդիկ, որոնք համապատասխանում են օրենքով ամրագրված չափանիշներին և կարող են փաստացի դա հավաստել:

Ներկայումս ՀՀ ԱՍՀՆ վարչական ենթակայության և մեթոդական ղեկավարման ոլորտում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների մի մասը *ընդհանուր մասնագիտական ծառայություններ են*: Զբաղվածության, կենսաթոշակային, բժշկասոցիալական փորձագիտական ծառայությունների այն հատվածը, որը վերաբերում է ծառայություն ստացողի հետ անհատական աշխատանքին (շահառուի ակտիվացում, աշխատանքի տեղավորում, գործատուի հետ բանակցություններ, բժշկա-սոցիալական փորձաքննություն անցնելու համար խորհրդատվություն, կենսաթոշակի/նպաստների հատկացման իրավունքի հաստատման համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջությունը ապահովելուն ուղղված խորհրդատվություն, ուղղորդումներ, անհրաժեշտության դեպքերում՝ ուղեկցումներ), բացառությամբ դրամական տիպի նշանակումներից, որոշակի վերապահումներով կարելի է համարել *ընդհանուր մասնագիտական սոցիալական ծառայություններ*:

ՀՀ-ում այսօր մատուցվող սոցիալական ծառայությունների մեջ որոշակի մաս են կազմում նաև *նեղ մասնագիտական ծառայությունները*: Այդպիսի ծառայություններ կարելի է համարել խնամքի ու պաշտպանության, ցերեկային, վերականգնողական և այլ հաստատություններում տարվող աշխատանքների մի մասը՝ սակայն դարձյալ վերապահում անելով մեթոդաբանության տեսակետից: Դրանք նեղ են՝ ըստ ոլորտի, սակայն նեղ մասնագիտացված սոցիալական ծառայություններ դժվար է համարել, հաշվի առնելով աշխատանքի հիմքում սոցիալական իրավիճակի հետ աշխատանքի

(social casework) համապատասխան մեթոդաբանության, չափանիշների բացակայությունը:

Այսպիսով՝ ՀՀ-ում սոցիալական պաշտպանության «էկլեկտիկ» տիպանմուշի բնույթը, սոցիալական պաշտպանության գործող պատասխանատուների միջև թույլ համագործակցությունը, իսկ որոշ դեպքերում նաև՝ վերջինիս բացակայությունը, ինչպես նաև սոցիալական պաշտպանության գործուն մեխանիզմների սակավությունը, իսկ որոշ դեպքերում նաև սոցիալական օգնության մեխանիզմի կարևորումը վկայում են այն մասին, որ ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացը դեռևս չի ավարտվել:

3.3 ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման հնարավորություններն ու ուղիները

Ատենախոսության շրջանակում իրականացված որակական հետազոտության արդյունքները²⁰¹ հնարավորություն են տալիս առանձնացնել ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորմանը խոչընդոտող մի շարք հիմնախնդիրներ: Դրանցից է ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի *գաղափարական հենքի անհստակությունը*: Այս տեսանկյունից կարևորվում է հետևյալ հարցադրումը. ո՞րն է ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի գաղափարական հենքը: Այս հարցին, իրականում, այնքան էլ հեշտ չէ պատասխանել: Այսպես, սոցիալական պաշտպանության գործող պրակտիկայում կարելի է հանդիպել *մեկ պետական պատրեռնալիստական, մեկ ազատական, մեկ միաժամանակ երկու հայեցակարգային մոտեցումների առանձին բաղադրիչների, մեկ ներմուծվի՝ մարդու իրավունքների վրա հիմնված հայեցակարգին*: Մինևս ժամանակ հարկ է նշել, որ այն ամենը, ինչը այսօր տեղի է ունենում Հայաստանում, զգալիորեն համահունչ է նորազատականության (նեոլիբերալիզմի) տրամաբանությանը. սեփականաշնորհել հանրային սեփականությունը, անխնա շահագործել բնական հումքերը և այլն²⁰²:

ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի վերջնական ձևավորմանը խոչընդոտող մյուս հիմնախնդիրն այն է, որ չնայած պաշտոնապես հայտարարված սոցիալական պաշտպանության կազմակերպման ապակենտրոնացման գործընթացի, այնուամենայնիվ, առ այսօր *սոցիալական պաշտպանության գլխավոր սուբյեկտի դերում հանդես է գալիս պետությունը*:

Ըստ էության բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպման ապակենտրոնացման գործընթացը²⁰³ նոր խնդիրներ է առաջացրել տեղական իշխա-

²⁰¹Ատենախոսության այս ենթագլուխը հիմնականում ներառում է հեղինակի կողմից 2015 թվականին իրականացված որակական հետազոտության մի շարք արդյունքների վերլուծություն:

²⁰²Տե՛ս Յարմալյան Ս., ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության ներկա համակարգի գաղափարախոսական հենքի հստակեցման և սոցիալական պաշտպանության ազգային մոդելի մշակման անհրաժեշտությունը, // «Ալլընտրանք» գիտական հանդես, 2015, № 4, էջ 342-343:

²⁰³ Բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպման ապակենտրոնացումը ենթադրում է բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպման գործում իշխանության պետական կենտրոնական մարմինների սոցիալական գործառույթների զգալի մասի փոխանցում տեղական ինքնակառավարման մարմիններին:

նությունների համար՝ ավելացնելով վերջիններիս պատասխանատվությունների և գործառույթների քանակը՝ առանց համապատասխան ֆինանսական հատկացումների: Պարտականությունների բաշխման նման փոփոխությունները հավասարակշռման խնդիր են ստեղծում, որը, ըստ էության, հնարավոր է լուծել ճկուն սոցիալական քաղաքականության իրականացման միջոցով: Պատասխանատվության հավասարակշռության նման խախտումները, ինչպես նաև պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմների բացակայությունը խոչընդոտում է ՀՀ-ում սոցիալական պաշտպանության ներկա համակարգի ձևավորման գործընթացը հասցնելու իր տրամաբանական ավարտին:

Առ այսօր օրենսդրորեն լուծված չէ *սոցիալական պաշտպանության ոլորտում լիազորությունների տարանջատման խնդիրը*: Արդյունքում օրենքներում հաճախ կիրառվում է «պետական կառավարման մարմին» ընդհանրացնող եզրը: Ըստ էության *օրենսդրորեն տարանջատված չեն բնակչության սոցիալական պաշտպանության հիմնական սուբյեկտները (դերակատարները), ինչպես նաև հստակ սահմանված չեն յուրաքանչյուր սուբյեկտի պարտավորությունների և լիազորությունների շրջանակները*:

Բացի այդ, օրենսդրորեն կարգավորված չէ *բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպման ձևերի տրամադրումը, մշակված չեն սոցիալական պաշտպանության իրականացման գործուն մեխանիզմներ*: Գործող պրակտիկայում *սոցիալական պաշտպանության ձևերի/մեխանիզմների տեսանկյունից առավելապես կարևորվում է սոցիալական օգնությունը, իսկ սոցիալական պաշտպանության ապահովագրական սկզբունքներն ու մեխանիզմները այնքան էլ զարգացած չեն*:

Օրենսդրորեն սահմանված չեն նաև սոցիալական պաշտպանության կազմակերպման գործում *կառավարման յուրաքանչյուր մակարդակի իրավասությունները, ինչը բացասաբար է ազդում ՀՀ բնակչության սոցիալական երաշխիքների իրականացման վրա*: Ստեղծված իրավիճակը թելադրում է հստակեցնել ձևավորված օրենսդրական դաշտը և իրավասությունների շրջանակները:

Որպես սոցիալական պաշտպանության գործող համակարգի թիրախ՝ օրենսդրորեն սահմանված կերպով հանդես են գալիս միայն կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձինք, ինչը հակասում է սոցիալական պետության

հիմնարար սկզբունքներին, ինչպես նաև համապատասխան փաստաթղթում²⁰⁴ ամրագրված ՀՀ սոցիալական պաշտպանության գործող համակարգի հիմնական նպատակներին:

Ներկայումս ՀՀ-ում առկա է սոցիալական օգնության պետական միջոցառումների ոչ արդյունավետ գործառող համակարգ, որը ենթադրում է սոցիալական տարբեր ծրագրերի շրջանակներում տարբեր տիպի նպաստների, միանվագ վճարների տրամադրում: Վերոնշյալ բոլոր աղբյուրները չեն ապահովում անապահով քաղաքացիների եկամուտների մակարդակի «բարձրացումը» կենսաապահովման նվազագույն զամբյուղի մակարդակին: Իր հերթին կենսաապահովման նվազագույն զամբյուղի մեծությունը՝ որպես պետական սոցիալական օգնության նվազագույն նորմատիվի, բնակչության համար ապահովում է միայն գոյատևման պայմաններ: Սոցիալական գոյատևման քաղաքականությունից սոցիալական զարգացման քաղաքականությանը անցնելը²⁰⁵ ենթադրում է արմատապես վերանայել կենսաապահովման նվազագույն զամբյուղի չափը:

Սոցիալական պաշտպանությանն ուղղված ծառայությունների տեսականորեն բազմազանության պակաս (դեֆիցիտ) - ՀՀ-ում սոցիալական պաշտպանությանն ուղղված ծառայություններ տրամադրող կառույցների թիվը գնալով մեծանում է: Սակայն այդ կառույցների կողմից նոր տիպի ծառայություններ չեն տրամադրվում: Բավականաչափ զարգացած չեն վերականգնողական և խորհրդատվական ծառայությունները, որոնք կանխարգելիչ նշանակություն ունեն: Բավականին դանդաղ են զարգանում վճարովի սոցիալական ծառայությունները (դրանց տեսականին), ինչպես նաև մասնագիտացված սոցիալական ծառայությունները: ՀՀ-ում սոցիալական ոլորտում տեղի ունեցող վերջին բարեփոխումների համատեքստում, հատկապես համալիր սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման շրջանակներում ակնհայտորեն կարևորվում է մասնագիտացված սոցիալական ծառայություններ ունենալու գաղափարը, այն է՝ վարչարարական տիպի ծառայություններից անցում կատարել դեպի սոցիալական աշխատանքի անհատականացված, մասնագիտացված

²⁰⁴ Տե՛ս ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի N 452-Ն որոշման հավելված N 1:

²⁰⁵ Այս գաղափարը կարևորվում է սոցիալական քաղաքականության, սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների ուսումնասիրմամբ զբաղվող հայ մի շարք գիտնականների՝ Լ. Հարությունյան, Ս. Աստվածատուրով և այլոց աշխատանքներում:

ծառայությունների: Սոցիալական աշխատանքի ներառումը ՀՀ սոցիալական պաշտպանության ներկա համակարգում կարևոր է ոչ միայն համակարգի ձևավորման գործընթացը տրամաբանական ավարտին հասցնելու, այլ նաև այն ավելի գործուն ու կենսունակ դաձնելու տեսանկյունից²⁰⁶:

Սոցիալական պաշտպանության համակարգում աշխատող մասնագետների ցածր պրոֆեսիոնալիզմը, որը հիմնականում պայմանավորված է մասնագետների մի մասի՝ սոցիալական աշխատանքի մասնագիտական կրթության բացակայությամբ, մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները կատարելագործելու մոտիվացիայի բացակայությամբ, աշխատանքից ունեցած բավարարվածության ցածր մակարդակով:

Սոցիալական պաշտպանության համակարգի ոչ ադեկվատ ֆինանսավորումը- Ատենախոսության շրջանակում անցկացված որակական հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ պետական բյուջեից զգալի ֆինանսական միջոցներ տրամադրվում են բնակչության որոշակի խմբերին սոցիալական ծառայություններ տրամադրող ստացիոնար հաստատություններին, քան ոչ ստացիոնար հաստատություններին, որոնք քիչ ծախսատար են և արդյունավետ:

Սոցիալական պաշտպանության իրականացման պետական և մասնավոր, ինչպես նաև հասարակական սեկտորների միջև համագործակցությունը բավականին թույլ է, ինչը հակասում է սոցիալական պետության այն հիմնարար սկզբունքին, համաձայն որի սոցիալական պետությունում բնակչության սոցիալական պաշտպանության ապահովման գործում պետությունից զատ կարևոր դերակատարում ունեն այլ սուբյեկտներ ևս, մասնավորապես՝ հասարակական և մասնավոր սեկտորները:

Անդրադառնալով ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորմանը խոչընդոտող հիմնախնդիրների լուծման ուղիներին՝ կարևորում ենք սոցիալական պաշտպանության հայեցակարգի մշակումը, ինչը հույժ անհրաժեշտություն է²⁰⁷: Այն մշակելիս՝ անպայմանորեն պետք է հաշվի առնվի՝

²⁰⁶Տե՛ս Խաչատրյան Ա. Կ., Սոցիալական աշխատանքը և հետխորհրդային Հայաստանի բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը, // «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», Երևան, 2017թ. № 1 (22), էջ 22-23:

²⁰⁷ Տե՛ս Յարմալյան Մ., Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի և մոդելի ձևավորումը հետխորհրդային Հայաստանում // «Բանբեր Երևանի համալսարանի», «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 142.5, Երևան 2014թ., էջ 25:

- սոցիալ-մշակութային ներուժի առկայությունը,
- հայեցակարգը պետք է համահունչ լինի ժողովրդավարության սկզբունքներին,
- հայեցակարգում անպայմանորեն պետք է շեշտադրվի մարդու իրավունքները հարգելու անհրաժեշտության կարևորությունը,
- սոցիալական պաշտպանության հայեցակարգի հենքը հասարակության անդամներին հասարակական կենսագործունեության ակտիվ սուբյեկտ դիտելու ելակետում է:

« Բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգին հատուկ է արտոնությունների տրամադրումը բնակչության որոշակի խմբերին, ընդ որում դրանց տրամադրման հիմքում ընկած է ոչ թե եկամտի չափը, այլ միանգամայն այլ չափանիշներ՝ որևէ հիվանդության առկայությունը, աշխատանքային ստաժը, կենսաթոշակառուի կարգավիճակը և այլն: Արդյունքում ստացվում է, որ լրացուցիչ սոցիալական օգնությունից արտոնությունների տեսքով օգտվում են այն քաղաքացիները, ովքեր ենթադրվում է, որ արդեն իսկ ունեն եկամտի որոշակի աղբյուր՝ կենսաթոշակ, նպաստ և այլն: Փոխարենը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված որոշակի սոցիալական խմբեր չեն ստանում ոչ մի տեսակի օգնություն: Սա հակասում է հասցեական սոցիալական օգնության գաղափարախոսությանը: Այս տեսանկյունից կարևոր է վերանայել արտոնությունների տրամադրման չափանիշները, մասնավորապես՝ նախընտրելի է կրճատել ուղղակի դրամական հատկացումների չափը և ավելի շատ կարևորել քաղաքացիների տնտեսական ակտիվության և սոցիալական պատասխանատվության համար հնարավորությունների ընդլայնումը: Սոցիալական օգնության տրամադրումը օգնությունը ստացողի մոտ չպետք է նպաստի սոցիալական մակաբուծության դրսևորմանը: Հետևաբար, նպատակահարմար է առանձնացնել սոցիալական օգնության տեսակներ, որոնք կհետապնդեն որոշակի նպատակներ և կուրվագծեն հասցեատերերի որոշակի շրջանակ:

Ատենախոսության շրջանակում իրականացված որակական հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ներկայումս սահմանադրորեն սահմանված սոցիալական իրավունքների ու երաշխիքների իրականացումը չի համապատաս-

խանում պետության տնտեսական հնարավորություններին²⁰⁸: Այս դեպքում մեծանում է սոցիալական պաշտպանության ներկայիս համակարգում որոշակի փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝ կարևորելով ոչ միայն պետության կողմից բոլոր քաղաքացիների համար սոցիալական երաշխիքների ապահովումը, այլ նաև քաղաքացու՝ սեփական բարեկեցության ապահովման հարցում անձնական պատասխանատվությունը: Այս պարագայում, թերևս պետության դերը առավելապես մեծանում է բնակչության որոշակի խմբերին սոցիալական օգնություն տրամադրելու գործում:

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման նպատակով կարևոր է հետևյալ քայլերի իրագործումը.

- վավերացնել Եվրոպական վերանայված սոցիալական խարտիայի՝ բնակչության առանձին խմբերի սոցիալական պաշտպանությանն առնչվող հոդվածները,
- հստակեցնել սոցիալական պաշտպանության գործող «թվացյալ» համակարգի գաղափարական հենքը, համակարգի հիմնական, առաջնային նպատակը համարել բնակչության պաշտպանությունը սոցիալական տարբեր ռիսկերից,
- մշակել ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության հայեցակարգ,
- ընդունել «Բնակչության սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, որը թույլ կտա «ընդլայնել» ա. սոցիալական պաշտպանության օբյեկտը խոցելի խմբերից դեպի սոցիալական ռիսկերից պաշտպանություն և բ. սուբյեկտները՝ պետությունից ՏԻՄ, հասարակական և մասնավոր սեկտոր,
- սահմանել պետական սոցիալական երաշխիքները՝ սոցիալական օգնության, ինչպես նաև սոցիալական ապահովագրության մասնակցային մեխանիզմների միջոցով՝ հասնելու մարդկանց ինքնաբավությանը,

²⁰⁸Յարմալոյան Մ., ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության ներկա համակարգի գաղափարախոսական հենքի հստակեցման և սոցիալական պաշտպանության ազգային մոդելի մշակման անհրաժեշտությունը, // «Ալլընտրանք» գիտական հանդես, 2015, № 4, էջ 344:

- խթանել մասնավոր ներդրումները ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության մեխանիզմներում, մասնավորապես՝ զարգացնել մասնավոր սեկտորի և պետության միջև համագործակցությունը՝ ստեղծելով համագործակցության համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ հենք, ինչպես նաև սահմանել արտոնություններ մասնավոր սեկտորի համար՝ անհատույց ներդրումներ կատարելու դիմաց,
- խթանել պետություն-հասարակական սեկտոր կառուցողական հարաբերությունների հաստատմանը՝ կարևորելով սոցիալական պատվերի ձևավորման գաղափարը,
- խթանել քաղաքացիների մասնակցությունը՝ ուղղված սեփական անձի նյութական ապահովվածության, ինքնաբավության, ինքնապաշտպանության ապահովմանը,
- ուժեղացնել սոցիալական պաշտպանության ապահովագրական սկզբունքներն ու մեխանիզմները՝ վարձու աշխատողների, գործատուների, ինքնազբաղվածների մասնակցությամբ՝ կանոնակարգելով համակարգի դերակատարների միջև փոխադարձ կապերը,
- ընդլայնել սոցիալական պաշտպանությանն ուղղված ծառայությունների տեսականին՝ հատկապես կարևորելով վերականգնողական, խորհրդատվական, ինչպես նաև սոցիալական աշխատանքի ծառայությունների զարգացումը,
- կառուցակցել սոցիալական պաշտպանության մոդելը՝ ա) քաղաքացիների սպասումների և պետության երաշխիքների փոխհամաձայնեցման, բ) քաղաքացիական վերահսկման մեխանիզմների ներդրման, գ) սոցիալական պաշտպանություն իրականացնող սուբյեկտների միջև լիազորությունների բաշխման միջոցով:
- Վերանայել բնակչության սոցիալական պաշտպանության գործող համակարգի ֆինանսավորման սկզբունքները՝ կարևորելով սոցիալական ծառայություններ տրամադրող ոչ ստացիոնար հաստատությունների ֆինանսավորումը:

- Բարձրացնել սոցիալական պաշտպանության գործող համակարգում աշխատող մասնագետների պրոֆեսիոնալիզմը՝ առավելապես շեշտադրելով սոցիալական ծառայություններ մատուցող, սակայն մասնագիտական կրթություն չունեցող մասնագետների մասնագիտական կրթության խնդրի կարգավորումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր պետության սոցիալական պաշտպանության համակարգը կոչված է ապահովելու հասարակության և նրա առանձին անդամների բարեկեցությունը: Հաշվի առնելով սոցիալական պետության առջև դրված խնդիրները, սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքում արձանագրվող գործընթացները՝ ժամանակակից պետություններում անընդհատ կատարելագործվում են սոցիալական պաշտպանության համակարգերը:

Խորհրդային Հայաստանում գործում էր սոցիալական պաշտպանության որոշակի համակարգ, որը զբաղվում էր խոցելի խմբերի՝ ծերեր, կենսաթոշակառուներ, պատերազմի վետերաններ, հաշմանդամներ, որբ երեխաներ և այլն, սոցիալական ապահովության խնդիրների լուծմամբ: Անկախության ձեռքբերումից հետո ՀՀ-ում սկսեց ձևավորվել սոցիալական պաշտպանության նոր համակարգ, որը սկզբնական շրջանում փորձում էր պաշտպանել բնակչությանը տնտեսական և սոցիալական ցնցումներից: Այդ համակարգի ձևավորումը սկզբնական շրջանում տեղի էր ունենում տարերայնորեն՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական նոր մարտահրավերներով: Ավելին, այդ համակարգի ձևավորման գործընթացը դեռևս չի ավարտվել: Ստեղծված իրավիճակում չափազանց կարևորվում է հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման գործընթացի ուսումնասիրումը, սոցիալական պաշտպանության գործող համակարգի առանձնահատկությունների, կառուցվածքի, գործառույթների, համակարգի ձևավորման գործընթացը տրամաբանական ավարտի հասցնելուն խոչընդոտող հիմնախնդիրների վերլուծությունը, ինչը հնարավորություն կտա ուրված գելու ՀՀ-ում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման հնարավորությունները:

Ատենախոսության շրջանակներում իրականացված տեսական վերլուծությունը, ինչպես նաև որակական հետազոտությունները հիմք են ծառայում հետևյալ եզրահանգումների համար.

- «սոցիալական պաշտպանություն» եզրույթը տարբեր կերպ է մեկնաբանվում գիտական գրականության մեջ: Դրանում ներառված հիմնական հասկացությունները ոչ միշտ է, որ հստակ սահմանված են: Հաշվի առնելով այս ամենը՝ մեր կարծիքով կարևոր է ոչ միայն «սոցիալական պաշտպանություն» եզրույթի, այլ նաև այն հասկացությունների բովանդակության հստակեցումը, որոնք ներառված են բնակչության սոցիալական պաշտպանության հասկացությանը ապարատում:
- Ընդհանրացնելով «բնակչության սոցիալական պաշտպանություն» եզրույթի տարբեր մեկնաբանությունները՝ դրանք կարելի է պայմանականորեն խմբավորել երկու խմբում: Առաջին խմբում ներառված մեկնաբանությունների համաձայն՝ որպես սոցիալական պաշտպանության օբյեկտ հանդես են գալիս միայն կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված մարդիկ: Սակայն սոցիալական պաշտպանության էությունը կայանում է նաև քաղաքացիների տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ իրավունքների պաշտպանության մեջ: Այդ իսկ պատճառով սոցիալական պաշտպանությունը, ըստ երկրորդ խմբում ընդգրկված մեկնաբանությունների, չպետք է դիտել որպես բնակչության միայն առավել անապահով կամ սոցիալապես անպաշտպան խմբերին վերաբերող երևույթ: Հասարակության և նրա ինստիտուտների կողմից տնօրինվող ներուժի և միջոցների օգտագործման կարիքը ունեն նաև լիովին ապահովված քաղաքացիները, օրինակ, հիվանդության և բժշկական օգնության դիմելու անհրաժեշտության դեպքում: Վերոգրյալը հաշվի առնելով՝ ատենախոսության շրջանակներում սոցիալական պաշտպանությունը սահմանվում է որպես **որպես պետական և ոչ պետական մարմինների կողմից իրականացվող որոշակի միջոցառումների ամբողջություն, որն ուղղված է սոցիալական ռիսկերի կանխարգելման, ինչպես նաև դրանց հետևանքների մեղմացման,**

վերացման միջոցով կենսագործունեության բոլոր ոլորտներում բնակչության սոցիալական անվտանգության ապահովմանը:

- Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի սոցիոլոգիական վերլուծության տեսանկյունից, նախ և առաջ, նախընտրելի է համակարգային մոտեցման կիրառումը, քանի որ այս մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտել հետազոտման օբյեկտի ամբողջությունը, վերհանել դրանում առկա բազմազան կապերը և միավորել դրանք մեկ ընդհանուր տեսական մոդելում: Բացի այդ, կառուցվածքագործառութային մոտեցման, մասնավորապես՝ Թ.Պարսոնսի կողմից առաջարկված AGIL սխեմայի կիրառումը հնարավորություն է տալիս հարստացնելու և ամբողջացնելու բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի սոցիոլոգիական վերլուծությունը:
- Համակարգային մոտեցման համատեքստում բնակչության սոցիալական պաշտպանության համակարգը մեկնաբանվում է որպես որոշակի ենթահամակարգերի կազմակերպված, ընդհանուր սկզբունքներով գործառող ամբողջություն, որը գործառում է ոչ թե առանձին տարրերի տեսքով, այլ որպես դրանց միջև առկա փոխհարաբերությունների ամբողջական միավոր՝ համակարգ, որը մեծապես պայմանավորում է ենթահամակարգերի գործառույթների ուղղությունն ու նպատակները, փոխհարաբերությունների բնույթն ու առանձնահատկությունները: Վերջինիս կարևոր ենթահամակարգերից են բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի գործառումը կարգավորող *իրավանորմատիվային ենթահամակարգը, սոցիալական ապահովագրության, սոցիալական օգնության, սոցիալական ծառայությունների, բնակչության առանձին խմբերի (երեխաներ, տարեցներ, հաշմանդամներ և այլն) սոցիալական պաշտպանության, զբաղվածության ենթահամակարգերը:*
- Ուսումնասիրված տեսական և էմպիրիկ նյութը հնարավորություն է ընձեռում առանձնացնելու բնակչության սոցիալական պաշտպանության

համակարգի հետևյալ կարևորագույն գործառույթները. ա) *կանխարգելիչ*, որն ուղղված է սոցիալական ռիսկերի, ռիսկային իրավիճակների կանխարգելմանը, բ) *ապահովող*, որը ենթադրում է հետևյալը. եթե հնարավոր չէ կանխել ռիսկային իրավիճակների առաջացումը, ապա կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված մարդկանց մատուցվում են մի շարք դրամական (նպաստներ, կենսաթոշակներ) և ոչ դրամական ծառայություններ (սոցիալական ծառայություններ), գ) *փոխհատուցող*, որը ենթադրում է հետևյալը. այն դեպքերում, երբ քաղաքացուն պատճառվել է նյութական կամ բարոյական վնաս պետական և ոչ պետական մարմինների անօրինական գործողությունների կամ անգործության հետևանքով, ապա այն փոխհատուցելու անհրաժեշտություն է առաջանում:

- Ուսումնասիրված տեսական և էմպիրիկ նյութը հնարավորություն է տալիս առանձնացնելու բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպման հետևյալ հիմնական ձևերը կամ սոցիալական պաշտպանության իրականացման մեխանիզմները. ա) սոցիալական ապահովագրությունը, բ) պետական սոցիալական ապահովությունը, գ) սոցիալական օգնությունը, դ) սոցիալական ծառայությունները:
- Հաշվի առնելով բնակչության սոցիալական պաշտպանվածության գնահատման օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանվածության ուսումնասիրման ոչ բավարար մակարդակը, առավել նպատակահարմար է վերլուծել ինչպես օբյեկտիվ ցուցանիշները, այնպես էլ սուբյեկտիվ գնահատականները հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը ուսումնասիրելու համար:
- Բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակը բնութագրող մի շարք օբյեկտիվ ցուցանիշների և սուբյեկտիվ գնահա-

տականների վերլուծությունը ցույց է տալիս, որ հետխորհրդային Հայաստանում, սոցիալական անպաշտպանվածության հիմնախնդիրը ընդհանուր առմամբ հաղթահարված չէ:

- Հետխորհրդային Հայաստանում բնակչության սոցիալական պաշտպանության նոր համակարգի ձևավորման հիմնական նախադրյալներն են. ա) տնտեսական և քաղաքական կարգի փոփոխությունը, բ) տարրերային աղետի և պատերազմի սոցիալական հետևանքների հաղթահարման անհրաժեշտությունը, գ) սոցիալական պաշտպանության հին համակարգի փլուզումը, դ) զանգվածային աղքատության ու գործազրկության ծավալման հետևանքով սոցիալական հիմնախնդիրների սրումը, ե) սոցիալական պաշտպանության նոր, հրատապ օգնության գործիքների գործադրման փաստը, զ) սոցիալական պաշտպանության կարիք ունեցող բնակչության թվի կտրուկ աճը, է) սոցիալական պաշտպանության ոլորտը կանոնակարգող մի շարք օրենքների ընդունումը:
- Հետխորհրդային Հայաստանում Խորհրդային Հայաստանից ժառանգություն ստացած սոցիալական պաշտպանության համակարգի կերպափոխման արդյունքում առանձնացվեցին սոցիալական պաշտպանության պետական հետևյալ մեխանիզմները՝ սոցիալական ապահովությունը, սոցիալական ապահովագրությունը և սոցիալական օգնությունը, որոնցից քիչ թե շատ արդյունավետ գործող մեխանիզմը սոցիալական օգնության մեխանիզմն էր:
- Շուկայական հարաբերություններին անցնելու ճգնաժամային պայմաններում ՀՀ-ում սոցիալական պաշտպանության վերոհիշյալ մեխանիզմները առավելապես ուղղված էին բնակչության առանձին աղքատ խմբերին օգնելուն՝ կենսաթոշակների և նպաստների, միանվագ և պարբերական դրամական լրավճարների, բնամթերքի տրամադրման միջոցով: Փաստորեն գոյատևման ապահովումը և բացարձակ աղքատության հաղթահարումը (սրան էր ուղղված առաջին հերթին

աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրը) դիտվում էին որպես ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության դեռևս ամբողջովին չձևավորված համակարգի հիմնական նպատակներ: Սոցիալական պաշտպանության պասիվ ձևի գերակայումը վկայում է այն մասին, որ դեռևս անցում չէր կատարվել պետության միակողմանի պարտականություններից պետություն-քաղաքացի երկկողմանի պարտականություններին: Այս ամենի արդյունքում տարերայնորեն ձևավորվել էր սոցիալական պաշտպանության մի տիպանմուշ, որը պայմանականորեն կարող ենք անվանել սոցիալական պաշտպանության «անցումային տիպանմուշ»: Վերջինս ըստ էության սոցիալական պաշտպանության ազատական տիպանմուշի տարատեսակ էր:

